Էջմիածին

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

VI

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Մայր Տաճարը հաստատուն և անշարժ է	3
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ.— Սեր Աստուծո նկատմամբ	7
Գ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Հետագա դարերի համար	10
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ	17
ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ.— Նոր դիտողություններ Խորենացու պատմության բառապաշարի մասին	20
ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Հովհաննես Սարկավագ Իմաստասերի գիտական մատենագրություններ	27
ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ	37
ՄԻԱԲԱՆ.— Սրբոց Թարգմանչաց տոնը Օշականում	38
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Ուխտագնացություն դեպի Արագածոտն գավառի սրբավայրերը	40
Հ. ԱՐԱՄՅԱՆ.— Հայրենադարձ նկարիչ Ռաֆայել Շիշմանյան	47
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	52
ԵՂԻՇԵ ԱԲԵՂԱ.— Հարավային Ամերիկայի թեմը	54
Հ. ՁՈՂԱԽՅԱՆ.— «Հայկական զարդարվեստ», Ա. Շ. Մնացականյան	59
Ասլան Միքայելի Շահնազարյան	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Գրված, 1951 թ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ Է

Ազգային մեր հնագույն ավանդության համաձայն, որը գրի է առել Ագաթանգեղոսը, Գրիգոր Լուսավորչի երազ-տեսիլքի «ոսկյա խարիսխ»ը նշանակ է էջմիածնի կարողիկե եկեղեցու հաստատության և անշարժության: Այդ ավանդության հիման վրա, դարեր շարունակ մեր հավատավոր ժողովրդի մոտ ստեղծվել և արմատավորվել է լավատես այն հավատքն ու համոզմունքը, որ ժամանակը և պարագաները անզոր են խախտելու Մայր Տաճարի հիմքերը—նա հավերժական է և պիտի մնա հավիտենապես հավերժական ու անսասան:

Մեր եկեղեցու բարձրաստիճան եկեղեցականներից մեկը՝ գերաշնորհ Տ. Վազգեն սրբազանը իր «Շողակար լուսո խորան էջմիածին» խորագրով արժեքավոր հոդվածում, անդրադառնալով էուսավորչի այդ հրաշք-տեսիլքին, հետևյալ խորիմաստ մեկնությունն է տվել նրան. «Եվ ահա, Որդին Աստուծո և Փրկիչն մեր, շատ դարեր առաջ, խոսեցավ մեր աշխարհին, մեր Լուսավորիչ Գրիգոր Պարթևի հրաշք երազով: Պատգամն էր երկնային, խոսքն աստվածային, որ իջավ ի Հայաստան աշխարհ, հյուսելով հրաշալի երազը Ս. Լուսավորչին: Մենք զավակներն ենք այդ լուսե երազին»:

Իրապես, երբ թերթում ես մեր մագաղաթյա դժգույն ձեռագրերի էջերը և ծանոթանում բազմաթիվ և անավոր այն փորձիկների և վայրիվերումների հետ, որոնք անցել են էջմիածնի գլխով, մնում ես ապշած, թե ինչպե՞ս է, որ նա դարեր շարունակ կուրծք է դեմ տվել ժամանակի արհավիրքներին և մնացել է անսասան: Մայր Տաճարի անխախտության և անշարժության այդ լավատես հավատքի հիման վրա է գուցե, որ ստեղծվել է այն ավանդությունն ևս, թե հավատացյալ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը կապված է Մայր Տաճարի գոյության հետ. «Ի վերայ Աջոյն և էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»,— ինչպես ձևակերպել է այդ միջնադարյան մեր լավագույն պատմիչներից մեկը՝ Առաքել Դավրիժեցին:

Մեր ազգային-եկեղեցական կյանքում անվիճելի բացառիկ մեծ է եղել էջմիածնի դերը և նշանակությունը: Նա հանդիսացել է մեր ժողովրդի միասնության խորհրդանշանը, նրա պայքարի և մաքառումների ուղեցույց աստղը, ցրված հայությունը Մայր Արոռի հետ սերտորեն կամրջող ոսկյա օղակը:

Ցրված հայությունը միավորող, զոդող և ազատասիրական ոգի ներշնչող էջմիածնի դերը շատ լավ գիտակցել են մեր ժողովրդի

և Հայրենիքի բշնամիները և արել են կարելին՝ բուլացնելու էջմիածնի ազդեցությունը, խափանելու նրա դերը հայ համայնքներում: 1604 թվին երբ Շահաբասը Հայաստանից Պարսկաստան բնակության քշեց հարյուր հազար հայություն և հաջողություն չունեցավ, դրա պատճառը նա տեսավ ժողովրդի էջմիածնի հետ կապված լինելու փաստի մեջ, և այդ դժվարությունը հարթելու համար նա էջմիածին ուղարկեց իր խաներից մեկին, որը հանեց և Նոր-Ջուղա տեղափոխեց Մայր Տաճարի 15 քառերը՝ այնտեղ էջմիածնի նոր տաճար կառուցելու և քշված հայերին Հայաստանից կտրելու նպատակով: Սակայն Շահաբասը շարաշար սխալվեց. նրա ջանքերն ապարդյուն անցան, որովհետև նա չէր հասկացել, որ հայ հավատացյալների համար էջմիածինը քարի կամ կրի հասկացողություն չէ, այլ հայ ժողովրդի գոյությունը խորհրդանշող շողակաթ լուսե խորանի՝ կառուցված Հայրենիքի սրտի վրա՝ միածնաէջ Վաղարշապատում:

Էջմիածնի Մայր Տաճարի դերն ու նշանակությունը, սակայն, չի սահմանափակվում ազգային նեղ շրջանակներով միայն— նա ունի համաշխարհային, համաքրիստոնեական նշանակություն: Էջմիածնի տաճարը կառուցվել է 303 թվին, այն ժամանակ, երբ քրիստոնեությունը դեռ ո՛չ մի երկրում պաշտոնական կրոն չէր հայտարարված, երբ հռոմեական կայսրության մեջ դեռ հալածվում էին քրիստոնյաները, իսկ բռնված քրիստոնյա քառոզիչներին Հռոմի ամֆիթատրոնում, խրախճանքի հանդեսներին, ձգում էին առյուծների առջև՝ հոշոտելու: Էջմիածինը կառուցվելուց տասը տարի հետո միայն հրապարակվեց Միլանի հռչակավոր հրովարտակը (էդիկտը) և քրիստոնեությունը հայտարարվեց բուլլատելի կրոն: Այն ժամանակից է, որ սկսում է քրիստոնյա աղոթատեղիների կառուցումը, որոնցից շատ քչերն են մեզ հասել: Զարմանալի չէ, որ վաղ քրիստոնեության պատմության հետ շատ ու քիչ ծանոթ ամեն մի հավատացյալ, ո՛ր երկրում էլ նա գտնվելիս լինի, քրիստոնեության տարածման պատմության կապակցությամբ, անպայման ծանոթ է էջմիածնի պատմական նշանակությանն հետ և մեծարում է նրան որպես վաղ քրիստոնեական շրջանի սրբավայր: Պատահականություն չէ անշուշտ, որ Սովետական Միության բոլոր ծայրերից և արտասահմանից Հայաստան եկող ամեն մի հյուր իր սեպուն պարտականությունն է համարում անպայման այցելել էջմիածինը և տեսնել վաղ քրիստոնեական շրջանի այդ շնաշխարհիկ կոթողը:

Եվ, վերջապես, մեծ է էջմիածնի Տաճարի նշանակությունը որպես ճարտարապետական կոթող: Հայաստանում պատմական բազմաթիվ հուշարձաններ են հասել մեզ, որոնք պատկանում են տարբեր ժամանակաշրջանների՝ սկսած 4-րդ դարից մինչև 20-րդ դարը: Նրանցից ամեն մեկը իր վրա կրում է իր ժամանակաշրջանի բնորոշ կնիքը և ճարտարապետական ոճը: Սակայն էջմիածինը պատմական մեր այն հուշարձաններից մեկն է, որն իր վրա կրում է բոլոր ժամանակաշրջանների կնիքները և ճարտարապետական ազդեցությունները: Ուսումնասիրողն այստեղ հաջորդականությամբ կարող է գտնել բոլոր դարաշրջանների ճարտարապետական ոճը և կառուցողական արվեստը՝ 4-րդ, 5-րդ, 7-րդ, 11—12-րդ, 17—18-րդ դարերի:

Տաճարի վերանորոգման ընթացքում բացարված հիմքերից պարզվեց մի շատ ուշագրավ նորություն—Տաճարի ներկա հատակը նախկին հատակը չէ. նախկին հատակը խորն է, գտնվում է մեկ մետր խորության մեջ, իսկ նրա վրա, ժամանակի ընթացքում, մի քանի հատակներ են բարձրացել: Ճարտարապետության պատմության մեր մասնագետներին հաջողվում է անվիճելի ձևով ապացուցել, թե Տաճարի կառուցումներից որը ո՛ր դարաշրջանին է պատկանում՝ սկսած Լուսավորչի հիմնադրությունից մինչև Գևորգ Դ. կաթողիկոսը: Այժմ անվիճելի է դառնում այն իրողությունը, որ մեր մատենագիրների հաղորդած տեղեկությունները էջմիածնի Տաճարի կառուցման և հետագա վերանորոգությունների վերաբերյալ՝ լիովին համապատասխանում են իրականության:

Ահա թե ինչպիսի եկեղեցական, ազգային և պատմական կարևոր հուշարձան է հանդիսանում էջմիածնի Մայր Տաճարը:

Բնական է այն բացառիկ ուշադրությունն ու մտահոգությունը, որ ցուցաբերում էին մեր վերջին կաթողիկոսները՝ Խրիմյան Հայրիկ, Գևորգ Ե., Խորեն Ա. և Գևորգ Զ.՝ էջմիածնի Տաճարի խախտված մասերը վերանորոգելու կապակցությամբ: Երջանկահիշատակ Գևորգ Զ. Կաթողիկոսը, Իր առաջին օրհնության կոնդակում, կատարելու ծրագրած Իր երեք կարևոր խնդիրներից մեկը համարում էր էջմիածնի Տաճարի վերանորոգությունը: Հանրահայտ են նրա բանակցությունները արտասահմանի հայ հանձնառու ճարտարներից մեկի հետ՝ վերանորոգելու Տաճարը: Սակայն ժամանակն անցնում էր, իսկ Տաճարի վիճակը գնալով ավելի խախտվում. Տաճարի խախտված տանիքից անձրևաջուրը ծծվում էր Տաճարի կամարներն ու մույթերը և վտանգվում էր նրանց կայունությունը:

Վերջին տարիներս Տաճարի վիճակը գնալով ավելի էր վատթարանում: Ճարտարապետներից կազմված հանձնաժողովները անցյալ տարի վերջնականապես պարզեցին, որ Տաճարն այդ վիճակում այլևս թողնել չի կարելի, որովհետև նրան լուրջ վտանգ է սպառնում:

Եվ սա այդ ծանր ոգեին օգնության ձեռ մեկնեց հայրենի կառավարությունը— հա որոշեց վերականգնել էջմիածնի Տաճարը իր միջոցներով, որպես պատմական և ճարտարապետական արժեքավոր հուշարձանի:

Մեր հայրենի հարազատ կառավարության այս ձեռնարկը— պատմական հուշարձանների նկատմամբ ցուցաբերվող ուշադրության և հոգատարության լավագույն ապացույցն է: Պատմական ամեն մի կորող, ձեռագրական ամեն մի պատառիկ, որ փոթորիկների և սրի միջով եկել և հասել է մեզ— նվիրական է մեզ համար: Հնությունների պահպանությամբ զբաղվող մեր կազմակերպությունները, մեր Պետական մատենադարանը հատուկ առաջադրանքներ ունեն՝ աչքի լույսի պես անվնաս պահել, պահպանել մեր նախնյաց սուրբ հիշատակը:

Էջմիածնի Մայր Տաճարը միակը չէ, որ վերանորոգվում է պետական միջոցներով: Սովետական Միության մեջ հազարավոր պատմական հուշարձաններ են նորոգվում: Սակայն էջմիածնի Մայր Տաճարը իր նշանակությամբ, իր հնությամբ և ազգային-եկեղեցական կյանքում խաղացած դերով անզուգական է: Ազգային ինքնասիրություն և հայրենանվեր ունեցող ոչ մի հայ չէր ուզենա, որ էջմիածին այցելող օտարական մեր հյուրերը պատմական մեր այդ հուշարձանը տեսնեին կիսաքանդ, խեղճ վիճակում: Հասկանալի է այն արդար բախիծը, որով համակվում էին արտասահմանից եկած մեր հարազատները Տաճարը առաջին անգամ տեսնելիս:

Մեկ տարուց ավելի է, որ վերանորոգության աշխատանքներն սկսվել են և առաջ են տարվում մեծ թափով: Տաճարի նորոգությունը վերջանալու վրա է արդեն: Նորոգվում է ոչ միայն Տաճարը, այլև Վեհարանը, որը նույնպես պատմական նշանակություն ունեցող կառույց է: Տաճարի ներսում վերանորոգվում և ընդարձակվում են ավանդատները, որ պիտի ցուցադրվեն մեր ազգային-եկեղեցական սրբությունները, նավատացյալների նվիրաբերած բանկարժեք նվերները, հայկական ընտիր ձեռագրերը և ազգային-եկեղեցական այլ արժեքներ: Մինչև այժմ տեղ չլինելու պատճառով Մայր Աթոռի այդ արժեքները պահվում էին արկղներում: Այժմ հնարավորություն է ստեղծվում այդ արժեքները դուրս հանելու և ցուցադրելու համար:

Նուտով տեղի կունենան ազգային-եկեղեցական ժողովն ու Մեռոնօրհնությունը: Սովետական Միության և Սփյուռքի բեմերից ուխտի կգան մեր հարազատները: Եվ նրանք հոգեկան ինչպիսի՜ հրճվանքով պիտի տեսնեն վերանորոգված, բարեզարդված և գեղեցիկ տեսք ընդունած Մայր Տաճարը— մեր ժողովրդի միասնությունը և գոյատևությունը խորհրդանշող շողակաթ խորանը:

Մայր Տաճարի վերանորոգությունը սակայն գործի սկիզբն է միայն: Մենք ունենք կատարելիք դեռ շատ ձեռնարկներ— անհրաժեշտ է էջմիածնում կառուցել մի գեղեցիկ և արժանավոր պանթեոն և այնտեղ տեղափոխել մեր ականավոր եկեղեցականների՝ Ներսես Աշտարակեցու, Գևորգ Մեծագործի,

Խրիմյան Հայրիկի, Իզմիրլյանի, Գեորգ Զ.ի և մեր մյուս արժանավոր կաթողիկոսների գերեզմանները: Անհրաժեշտ է նաև կազմակերպել տպարան՝ եկեղեցական գրականության հրատարակության համար: Պետք է նաև նյութական բավարար միջոցներ՝ Մայր Տաճարի ներսը ավելի բարեզարդելու, էջմիածնի միաբանությունն ու Հոգևոր ծեմարանը ավելի ինքնաբավ դարձնելու համար: Հայտնի է, որ մինչև այժմ Մայր Աթոռի ծախսերը, հիմնականում, ընկած են Սովետական Միության բեմերի հավատացյալների վրա, իսկ արտասահմանի մեր բեմերը գրեթե ոչ մի պարտավորություն չեն վերցրել իրենց նվիրական Աթոռի պահպանման համար: Վերև հիշված ազգային-եկեղեցական ձեռնարկների իրագործման համար խոսքը պատկանում է արտասահմանի էջմիածնասեր, հայրենասեր մեր հավատացյալներին, առանձնապես մեր մեծահարուստ բարերարներին, մեր բարեգործական հաստատություններին և նրանց գործի կոչող մեր էջմիածնասեր եկեղեցականներին: Առաջիկա Մեռոնօրհնությունն ամենալավ առիթն է, որ մեր հավատացյալները կատարեն իրենց ուխտը հանդեպ Ս. էջմիածնի—մուծեն իրենց լուման Մայր Աթոռի բարեզարդման օգտին: Պիտի նկատի ունենալ, որ նման ձեռնարկը Ամենայն Հայոց Հայրապետության համար ունի բարոյական խոշոր նշանակություն—այդ ավելի կհամախմբի մեր հավատացյալներին Մայր Աթոռի շուրջը և ավելի կբարձրացնի Ս. էջմիածնի հեղինակությունը:

Այդ տեսակետից ցուցանշական է մեր ամսագրի հաջորդ համարում տպագրվելիք արտասահմանի մեր բարձրաստիճան եկեղեցականներից մեկի՝ Կոստանդնուպոլսի պատրիարքական հանգուցյալ տեղապահ Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյանի կտակը, որով նա Մայր Աթոռին է հանձնում իր անձնական գույքը և հարուստ գրականությունը: Նման մի կտակ ունի նաև հանգուցյալ Գարեգին կաթողիկոսը: Մեր հայրենասեր և էջմիածնասեր եկեղեցականները մեծահարուստ անձինք չեն, համեստ են նրանց կտակած միջոցները, բայց նրանք իրենց մահվան անկողնում անգամ ցույց տվեցին, որ իրենց սիրտն ու հոգին անխզելի կապված են էջմիածնի հետ, իրենց նվիրական Հայրենիքի հետ: Էջմիածինը և Հայրենիքը, անշուշտ, պատշաճավոր ձևով կպահեն նրանց անմահ հիշատակը:

Մեր ազգային մեծահարուստ բարերարները լավ պիտի գիտակցեն, որ իրենց բողած հիշատակներից հավիտենական և անմահ են միայն նրանք, որոնք կատարվում են հայրենի երկրում: Օտար հողի վրա որքա՞ն բարերարություններ են կատարվել հայ մեծահարուստների կողմից, սակայն այդ բոլորը մնայուն կյանք չեն ունեցել: Վերցրեք բեկուլ Մադրասում և Լվովում հայ բարերարների կառուցած եկեղեցիները — ո՞ւմ մնացին նրանք, ովքե՞ր են նրանց տերերը:

Ժամանակն է, որ արտասահմանի մեր հայրենասեր և էջմիածնասեր շրջանները գործի անցնեն: Ոչինչ չպիտի խնայել Մայր Աթոռ Ս. էջմիածնի համար: Մայր Տաճարը իր պատմական դերին և նշանակությանը համապատասխան տեսք պիտի ընդունի. նա պիտի մեր հերոսական անցյալը և մեր ժողովրդի հայրենասիրությունը, աղաղնը և հավերժությունը հրաշակերտող թագն ու պսակը հանդիսանա:

Մենք պիտի անենք կարելին դրան հասնելու համար:



ՔԱՐՈԶ

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

(Պատրիարքական տեղապահ Երուսաղեմի)

ՍԵՐ ԱՍՏՈՒԾՈՅ ՆԿԱՏՄԱՄԲ

«Եթէ ոմ սիրէ զաշխարհս, ոչ է ի նմա սէր Հաւր»:

(Ա ԹՈՂԹ ՅՈՎՀ., Բ 10)

Քրոնը կտարբերի բարոյականեն շնորհիվ զգացումին տված իր արժեորման։ Բարոյականը կհենու սկզբունքներուն, մինչդեռ կրոնը ի նկատի ունի սիրտն ու զգացումները, որոնք կյանքին կուտան որոշ արժեք և նշանակություն։ Աշխարհասերը կրնա լավ մարդ ըլլալ, բայց չի կրնար արքայության որդի կոչվիլ, եթե չունի սեր իր Երկնավոր Հորը նկատմամբ։

Երբ աշխարհ կըսենք, չենք հասկնար անշուշտ ժամանակն ու եղանակները, և կամ լեռներն ու դաշտերը, հովիտներն ու անտառները, անդաստաններն ու աղբյուրները իրենց բովանդակ շքեղությանը մեջ։ Այս չէ այն աշխարհը, որուն նկատմամբ առաքյալը կարգիլե սեր ունենալ։ Ի՞նչպես կարելի է չհիանալ բնության երփներանգ գեղեցկություններուն վրա, որոնք բնության բաղկացուցիչ ներդաշնակությունը կկազմեն։ Ի՞նչպես կարելի է չզմայլիլ խորհրդավոր երկնքի հրաշալիքներուն վրա և չպատկառիլ այն ուժեն, որ դիտե նախակարգել ու նախախնամել այս բոլորը, համաչափ ու ներդաշնակ օրենքի մը մեջ։ Բոլոր այս ստեղծագործությունները ուրիշ բան չեն, բայց ծոպերը այն գեղեցիկ պատմուճանին, որով զարդարած է ինքզինքը մեր Երկնավոր Հայրը։ Աշխարհը իր այս հրաշալիքներով գեղեցիկ հայելի մըն է, որուն միջոցավ մեզի կհայտնվի մեր Արարիչը։

Աշխարհի մեջ կա նաև մարդը, սակայն կարելի չէ չսիրել եղբայր մարդը։ Ով որ կուզե կենդանի Աստված տեսնել երես առ երես, պարտավոր է զայն փնտրել ոչ թե իր մտածման պարապ երկնակամարին վրա, այլ իր եղբայրակից մարդոց նկատմամբ զգացած սիրուն մեջ։ Հետևաբար առաքյալի ակնարկած աշխարհին մաս չի կազմեր նաև մարդը։ Տակավին մարդով պայմանավոր են գիտությունն, արվեստ և կրոն, այսինքն այն սրբազան ձգտումները, որ մեզ կառաջնորդեն հավիտենական կյանքի խորհուրդին։

Առաքյալի մտածումին մեջ, աշխարհը իրերու և երևույթներու կառույցը, տեսանելի մարմինը չէ, ոչ ալ այդ բոլորը կենսավո-

բող կյանքը, այլ շարիք անոր, որ կմոլորեցնէ զմեզ կյանքը արժանավայել կերպով ըմբռնելու և վայելելու բարիքներեն։ Այսինքն այն՝ ինչ որ օտարոտի է, վաղանցուկ և անիրական, հակոտնյա հոգեկանին, հավիտենականին և ճշմարտին։ Թող մարդ պահ մը կարենա զգալ ուժը իր հոգեկան թագավորության, իր ներքին գեղեցկության և ճշմարտության, այն ատեն պիտի խամրին ու չքանան խեղանքը իր ջիղերուն, առերևույթ պատկերները վաղանցուկին և սուտին, ու ինքը դեմ առ դեմ պիտի գա իրականության մը, որ վեր է աշխարհեն և անոր շարիքի տանող հրապույրներեն։

Կյանքի մեջ կան փոփոխական և անփոփոխ երևույթներ, անցողակի և հավիտենական իրողություններ։ Բնության եղանակները, բույսերը և մարդկային կյանքը, ճնշումին տակն են բնության այս օրենքին։ Սակայն արտաքին և երևութական իրողություններու կարգին, մարդկային հոգիի մեջ կա հավիտենականության տենչը, այս բոլոր փոփոխական ու երևութական իրողություններու մեջ անփոփոխելին ու հավիտենականը որոնող, որ զերծ է աշխարհի շարիքեն ու եղծանումեն։

Այս տեսակետով միակ անձը, որուն կյանքն ու հասկացողությունը կրնա մեզի իբր օրինակ ծառայել, մեր կրոնին անզուգական հիմնադիրն է։ Մեր Տիրոջ փորձության օրինակը ավելի քան տպավորիչ է, երբ կյանքի շարիքը, մոլորեցուցիչը, Անոր ցույց տվավ աշխարհի թագավորությունը զԱյն փորձության առաջնորդելու համար։ Սակայն այդ տեսիլքով միայն չի պայմանավորվիր Հիսուսի հաղթանակը կյանքին վրա, Անիկա բարձունքի մը միայն շնչեցավ աշխարհին և անոր շարիքին, որ մարմնացած կկենար Իր դիմաց, զԻնք փորձության մղելու։ Հիսուս հետո ապրեցավ կյանքը մարդկային ընկերությանը մեջ, բայց կրցավ մնալ անմեղ և հաղթական։ Թագավորությունը, որ Իրեն ցույց կուտար սատանան, երկրային էր, թագավորությունը նյութին, թագավորությունը շարիքին։ Աստուծո թագավորությունը մեր մեջն է, մեր գործն է, մեր հոչանկության համար այս կյանքի մեջ, կայված մեր կատարելության նոր դրություն մը ըմբռնումներու, վերիվայր շրջում մը կյանքի մինչև այն ատեն ընդունված արժեքներու, փոփոխություն զգացումներու, դիտումներու և դատումներու։

«ԵԹԷ ոչ սիրէ դաշխարհ, ոչ է ի նմա սէր Հօրն։ Հիսուս հանդիպեցավ մարդոց, որոնց մեջ գերագույն կյանքի բոլոր կարելիությունները խեղդված էին նյութական զուր հոգերով, մարդոց, որոնք զբաղված էին անպետ բաներով, որոնց իրական արժեքներու նկատմամբ ունեցած հեռանկարը սխալ էր հիմնովին։ Հիսուս տեսավ մարդիկ, որոնք հարբստություն դիզելու իրենց անհագ տենչին մեջ. կմոռնային մարդկային եղբայրության ամենանվիրական իրավունքները։ Ան կտեսներ, թե մարդիկ կյանքը վայելելու իրենց հրայրքին մեջ, դաշնակցած էին աշխարհի շարիքին հետ, ծախած էին ինքզինքին սատանային, ի խնդիր երկրավոր փառքերու և հաճույքներու վայելումին։ Այս է պատճառը, որ Ան կատե մարդոց ընչաքաղցությունը, ինչպես մայր մը պիտի ատեր իր զավկին առողջության սպառնացող շարիքը։

Երկու կերպ կա դղյակ մը պաշտպանելու. մին ամրանալով անոր մեջ, խցելով բոլոր անցքերն ու դուռները, մյուսը վերածելով զայն բաց հայեկի մը, իշխելով անկե շուրջի համայնապատկերին։ Հիսուս կյանքին կբանա ինքզինքը, դիմագրավելով այն բոլոր շարիքները, որոնք կսպառնան մարդոց կյանքին։ Անիկա կնմանի ծովուն մեջ հոսող գետի մը, որ կուզե անուշել ծովին ջուրերը։ Անսահման է Իր ուժը, ինչի որ հայի կոուժն. կսրբացնե և կկատարելագործե զայն։ Կյանքի շարիքին դեմ կարենալ կռվելու և հաղթելու Իր այս ուժը կուգա Երկնավոր Հոր հետ Իր ունեցած հարաբերությենեն։

Իր ամբողջ կյանքը լեցուն է այն խորունկ գիտակցությամբ, թե անքակտելի կապ մը կմիացնե զԻնքը Երկնավոր Հորը հետ։ Այս իրողությունը աստվածաբանական վարդապետություն մը չէ միայն, այլ Հիսուսի անձնական մեկ փորձությունը նույն ատեն։ Փորձել վերլուծման ենթարկելու այս կատարյալ հաղորդակցությունն ու միությունը Հոր և Որդվույն միջև, պիտի նշանակեր փոքրիկ ամանով մը ծովեն ջուրը պարպել փորձելու։ Իրողություն է թե Ան խորապես գիտակից էր Իր մեջ աստվածային ներկայության։

Հետո պետք է գիտնալ, թե քրիստոնեությունը գերբնական կրոն մըն է և գիտե ենթարկել մարդը իր գերբնական ուժի ազդեցությանը։ Կարելի չէ Հիսուսի կրոնը իջեցնել կյանքի սովորական իրերու կարգին։ Իր Մարդեղության պատճառները թվելե առաջ, իրողություն է, թե Ան եկավ քանդելու երկու աշխարհները իրարմե զատող պատը, կամրջելով մարդն ու Աստված իրարմե զատող անջրպետը։ Ուրիշ կրոններ կրնան իջնել, հավասարելու մարդոց աշխարհիկ իմաստությանը չափանիշերուն, քրիստոնեությունը կամ գերբնական է և կամ ոչինչ։ Սակայն իր այս հանգամանքը թող բնավ մտածել չտա, թե ան ցնորքներեն հոնա ուտ. որովհետև կարելի չէ, որ Աստված գոյություն ունենա երկնքին մեջ և մարդ իր հոգիին մեջ

չկարենա զգալ Անոր ներկայությունը։ Առանց Աստուծո և անդենական կյանքի հույսին, կարելի պիտի չըլլար ազատագրել մարդը կյանքի չարիքեն և անոր հոգի ազդեցությունեներեն։

Մյուս կողմե սակայն գերբնականության զգացումը չի փրկեր հոգին, Հիսուս պետք է մոտ գա հոգիին, անոր դպելու աստիճան, որպեսզի մարդը կարենա խուսափիլ աշխարհի ապականությենեն և չարիքեն։

Այս բոլորեն վերջ, երբ կմտածենք մանավանդ Մարդեղության, որ արդյունքն է աստվածային անսահման գութին՝ Իր մոլորյալ զավակներուն նկատմամբ, կզգանք խորապես, թե պարտինք սիրել մեր Երկնավոր Հայրը, որուն նախախնամության կպարտինք մեր կյանքը, որ Իր Որդիին արյունովը լվաց մեր մեղքերը, ազատագրեց զմեզ չարին տիրապետությենեն և ցույց տվավ մեզի իրական ուղին, բարձրագույն կյանքին և անմահության առաջնորդող։ Ճշմարիտ քրիստոնյան, որ գիտակից է իր կոչումին, և կճանչնա աշխարհը իր դրական ու բացասական իրողություններու մեջ, չի կրնար չսիրել Երկնավոր Հայրը, ու զատել աշխարհը իր տիղմի, սուտի, կեղծիքի, անգթության և անձնասիրության մեջ, որոնք Նոյի և Աբրահամի օրերեն սկսյալ մինչև մեր օրերը կշանան տիրապետող տարրերը հանդիսանալ կյանքին։

«Ի՞նչ օգուտ մարդուն համար շահիլ ամբողջ աշխարհը, եթե հետո պիտի կորսնցնե իր կյանքը»։ Հիսուսի այս հարցական ճշտումը, մարգարեական շեշտ մը կուտա Իր արտահայտման։ Հոգին և ոսկին երկու իրարու անհանդուրժող տերեր են, և յուրաքանչյուրը իր կարգին կպահանջե ամբողջ մարդը։ Ու այդ մարդը այսօր նորեն ինկած է աշխարհի չարին, սատանայի իշխանության ներքև, կորսնցուցած իր ազատությունը, կվազե այն ձայնին, որ քարերը հացի վերածած իրեն կբաշխե։

Սակայն ով որ աշխարհի մեջ անասնական գոհացումներեն վեր գեղեցկություն կփնտրե, ով որ մտածումներու մեջ ճշմարտություն կհետապնդե, ով որ կտագնապի խաղաղության ի խնդիր, կատե աշխարհը, սիրելու համար Երկնավոր Հայրը, Որ օրենքն ու սկզբունքն է այս բոլորին։

Մեծ է գործը մեր Տիրոջ, մարդերու հոգիին փրկության ի խնդիր։ Վերստին ծնունդը ուրիշ բան չէ, բայց առնել մարդը աշխարհի թագավորությենեն և առաջնորդել զայն երկնքի թագավորության, ազատագրելով զինքը աշխարհի չարեն և հպատակ ընելով նոր արքայության, սիրո, ճշմարտության, սրբության և խաղաղության նոր կարգին։

Հիսուս եկավ, ապրեցավ ու մեռավ մեզի հետ, դպավ մեզի սիրով և քաղցրությամբ, բացավ Իր շնորհալի կյանքին դանձերը մեր աչքերուն, ու Իր շնորհիվ մենք տեսանք գեղեցկությունը սրբության և ուժը Իր հոգեկան մեծ կյանքին։ Անիկա փոխանցեց Իր այդ կյանքը մեզի՝ մեր Իր նկատմամբ ունեցած հավատքին շնորհիվ, որպեսզի մենք ևս կարենանք ապրիլ Իրեն պես մեր Երկնավոր Հորը հաղորդակցությամբ մեջ։

Այս աշխարհի մեջ մենք պետք է կա՛մ տիրապետողներ ըլլանք կա՛մ գերիներ։ Գիտենք, թե ինչ կնշանակե աշխարհին գերի ըլլալը, բայց մեզմե շատ քիչերուն տրված է հաղթողներ ըլլալ Քրիստոսի հետ, արժանի ըլլալու մեր Երկնավոր Հորը սիրելու։

(«ՍԻՈՆ» ամսագիր)

Գ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՏԱԳԱ ԴԱՐԵՐԻ ՀԱՄԱՐ

ուրբ Էջմիածնի Մայր Տաճարի վերականգնման աշխատանքները թեւակոխել են իրենց ավարտման փուլը։

Հուլիսի երկրորդ կեսին ավարտվեցին Տաճարի 4 հիմնական մույթերի (սյուների), ինչպես նաև այդ մույթերն իրար միացնող կամարների ամրացման բոլոր աշխատանքները։

Ով քիչ թե շատ ծանոթ է Մայր Տաճարի վերանորոգման գործին, նա չի կարող անսահման գոհունակությամբ չնշել, որ վերոհիշյալ աշխատանքների ավարտումով փապաս վերջ է դրված վանքի կայունությանը սպառնացող չափազանց լուրջ վտանգին։

Պետք է անվերապահորեն ասել, որ մույթերի ու կամարների ամրացումը Տաճարի վերանորոգման աշխատանքների ամենապատասխանատու և կարևորագույն փուլն էր, որն այսօր ավարտված է լիակատար հաջողությամբ։ Թե՛ կառավարական մարմինները և թե՛ վանքի նորոգմամբ զբաղվող ճարտարապետներն ու ճարտարագետները բացառիկ կարևորություն էին տալիս այդ գործին, եվ բնական է, թե ինչու Տաճարի հետագա կանգունությունն ապահովելու հարցը այնքան երկարատև ու խորազնին քննության առարկա դարձավ բոլոր վերադաս մարմինների ու մասնագետ անձանց կողմից։ Գործը հաջողությամբ գլուխ բերելու համար կառավարական ու շինարարական մարմինները տրամադրեցին շինարարական անհրաժեշտ նյութեր ու միջոցներ։ Փորձված մասնագետների միջոցով սահմանվեց տեխնիկական հոգատար հսկողություն երկաթ-բետոնային բարդ ու պատասխանատու աշխատանքների նկատմամբ։ Գործի դրվեցին շինարարական մի շարք սարքավորումներ։

Մույթերի ու կամարների ամրացման, ինչպես և Տաճարի վերանորոգման ողջ աշխատանքների հաջող կազմակերպման գործում առանձնապես պետք է նշել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ճարտարապետական գործերի վարչության և նրա պետ Ռ. Ազիզբեկյանի, այդ վարչությանը կից Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի ու նրա ղեկավար նախագահ ճարտարապետ Կ. Հովհաննիսյանի ամենագործուն մասնակցությունը։ Վերոհիշյալ մարմինների, ինչպես և շինարարական ողջ կոլեկտիվի ջանադիր աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ոչ միայն ապահովել Տաճարի վերանորոգման աշխատանքների այդ պատասխանատու փուլի ժամանակին ավարտումը, այլև ամբողջ թափով ծավալել վերանորոգման մյուս բոլոր տեսակի աշխատանքները։

Այն հիմնական խնդիրը, որ դրված էր շինարարների առաջ, այն է՝ ապահովել ճարտարապետական այդ հնագույն հուշարձանի կանգունությունը, կանխել նրա ամբողջականությանը սպառնացող մոտալուտ վտանգը, կատարված է հաջողությամբ։ Մույթերի ու կամարների ամրացման աշխատանքների հաջող ավարտումը հնարավորություն է ստեղծում Տաճարի նորոգման մյուս աշխատանքներն առաջ մղել ավելի արագ կերպով։

Այսպես ուրեմն, ի՞նչ վիճակումն էին գտնվում այդ 4 հիմնական մույթերն ու կամարները նորոգումից առաջ և ի՞նչ են ներկայացնում այժմ, նորոգումից հետո։

Ինչպես հայտնի է, նորոգումից առաջ կատարված ճարտարագիտական զննումները ցույց տվեցին, որ բոլոր 4 մույթերն էլ, ինչպես և դրանք իրար միացնող կամարներն ունեին այս կամ այն չափի վտանգավոր ճեղքվածքներ։ Ժամանակներն իրենց քայքայիչ ազդեցությունը թողել էին նախ և առաջ Տաճարի այս հատվածների վրա։ Քիչ դեր չէր

խաղացել կենտրոնական գմբեթը, որի ծանրությունը աստիճանաբար խորացրել էր ճեղքերը, խարխլել մույթերը։ Եթե դրան ավելացնենք կտուրից ծծվող խոնավությունը և այն, որ մույթերի, ինչպես և ողջ Տաճարի հիմքերի ոչ այնքան մեծ խորությունը, որը չի անցնում 1—1,1 մետրից, ապա միանգամայն պարզ կլինի, թե Տաճարի կանգունության համար ինչպիսի լուրջ վտանգ էին ներկայացնում խարխլված այդ մույթերն ու կամարները, որոնք իրենց վրա են կրում շենքի հիմնական ծանրությունը։

կերպով, վերից մինչև ներքև, դրված են անկյունաձև հաստ երկաթներ։ Ապա մույթի չորս բոլորը կապված են երկաթաշերտերի հաստ գոտիներ, որոնք անկյուններում ամրացված են պտուտակներով։ Գոտիներն իրար հաջորդում են մոտ մեկ մետր հեռավորությամբ՝ սկսած մույթի հիմքից մինչև կամարի կրունկը։

Այնուհետև երկաթե այդ կարկասը առնված է երկաթաձողերից հյուսված, այսպես կոչված «շապիկ»ի մեջ, որից հետո կատարված է բետոնապատում՝ բարձրորակ ցեմենտի շա-

Կամարներից մեկի երկարյա ձողերով ամրացումը

Մույթերն ու կամարները ամրացնելու համար հարկ եղավ գործադրել ճարտարագիտական մի շարք միջոցառումներ։ Նախ՝ քերվեց դրանց ամբողջ ծեփը և ճեղքերը լցվեցին հատուկ շաղախով։ Շինարարները ստիպված եղան մինչև վերջ փորել և փացել մույթերի հիմքերը, որից հետո մույթերն իրենց ողջ բարձրությամբ, սկսած հիմքերից մինչև կամարների կրունկները, առնվեցին երկաթյա կապերի մեջ։

Այդ կապերն արված են հետևյալ կերպով։ Մույթի չորս անկյունագծերում, ուղղահայաց դախով։ Բետոնի վրա կատարված է ծեփ՝ դաջով։ Մույթերն ընդգրկող երկաթ-բետոնե այս ամբողջ վերադիր շերտի հաստությունը կազմում է 30—35 սանտիմետր։

Մոտավորապես այս եղանակով ամրացված են նաև մույթերն իրար միացնող կամարները։

Հարավ-արևելյան մույթի երկու կողմերում, հատակին համարյա հավասար, շինարարները թողել են երկու ոչ մեծ անցքեր, որոնք անմիջականորեն առնչվում են մույթի նախնական կառուցվածքի հետ։ Դրանք թողնված

են ապագա պատմաբանների, հնախույզների համար, որպեսզի կարելի լինի այդ անցքերի միջոցով տեսնել ու որոշել, թե ժամանակին ինչպիսի վերափոխության են ենթարկվել Տաճարի մույթերը։

Ամրացման այդ աշխատանքները իրենց ծավալի և կատարման որակի տեսակետից պահանջում էին բավական երկար ժամանակ։ Սակայն այնքան բարձր էր բանվորների և ճարտարագետների աշխատանքային խանդավառությունը, որ ամբողջ գործը դուխ եկավ ընդամենը 2—3 ամսում, կառավարման մասնագետներին, անսահման բերկրանքով է լցնում բոլոր նրանց սրտերը, որոնք կամենում են հավիտյան կանգուն տեսնել պատմական այդ անկրկնելի հուշարձանը, Հայոց Առաքելական Եկեղեցու կենտրոնը։

Այլևս վերացված է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կանգունությանն սպառնացող վտանգը։ Այն ամուր է և կուռ ավելի քան երբևէ։ Այն կանգուն կմնա դեռ բազում դարեր, քանի կանգուն է հայ ժողովրդի կոփուրան, նրա վսեմ ճարտարապետական արվեստը, արվեստ, որի այսօրվա ծաղկուն վի-



Զանգակատան ուժանկարչության վերականգնումը

կան մարմինները շինարարական աշխատանքները ժամանակին ապահովեցին անհրաժեշտ նյութերով ու միջոցներով, որակյալ տեխնիկական աշխատողներով, որը և խոշոր չափով նպաստեց գործի հաջողությանը։

Այսպիսով Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքների կարևորագույն փուլը, որից կախված էր ողջ գործի հետագա հաջողությունը, ավարտված է։ Դա չափազանց ուրախալի փաստ է։ Այդ հաջողությունը պայմանավորված է բերում Տաճարի վերանորոգման գործով զբաղվող բանվորներին ու ճակն ու զարգացման բարենպաստ պայմանները հնարավորություն ընձեռեցին իր ճարտարապետական լավագույն կոթողներից մեկը փրկելու մոտալուտ կործանումից։

***

Ինչպե՞ս են ընթանում Մայր Տաճարի վերանորոգման մյուս աշխատանքները։

Անհուն գոհունակությամբ պետք է նշել, որ գործն առաջ է ընթանում սպասվածից ավելի արագ և մեծ հաջողությամբ։ Բառիս բուն իմաստով օրավուր նկատելի են այն

փոփոխությունները, որոնց ենթակա է Տաճարը։ Աշխատանքներն այստեղ չեն դադարում վաղ առավոտից մինչև ուշ երեկո։

Մեփագործները դեռ նոր էին ավարտել մույթերի ու կամարների վերջնական ծեփը, հազիվ էր այն չորացել, երբ նրանց փոխարինեցին նկարիչները։ Վերջինների համար այժմ ստեղծվել է աշխատանքի մեծ տարածություն։ Կենտրոնական գմբեթի, գլխավոր սեղանի, պսիդների կամարներից հետո նրանք ձեռնամուխ են եղել Տաճարի մյուս հատվածների նկարազարդմանը։ Ավարտվել է զանգակատան կամարի որմանկարների վերականգնումը։ Սկսվել և արագորեն առաջ են տարվում ավանդատան ու Տաճարի պատերի վերին մասերի նկարազարդման աշխատանքները։

Նկարիչների հմուտ վրձինների տակ վերակենդանանում և նոր փայլ են ստանում Վեհարանի զարդանկարները։ Ավարտված է կտուրի թիթեղապատումը։

Վանքի ընդարձակ բակը երեք կողմից փակել է նորակառույց բարձր պարիսպը, որը պսակված է գեղեցիկ երիզաքիով։

Սկսվել է վանքի միաբանության խցերի նորոգումը։ Փոխվելու է շենքի կտուրը, նեղսում կատարվելու են սպիտակեցման աշխատանքներ։

Գնալով նոր թափ են ստանում Տաճարի նորոգման աշխատանքները։ Ինչպես ասացինք, դրանք արդեն մտել են իրենց ավարտման փուլը։ Ներկայումս վճռողը նկարչական աշխատանքներն են, որոնց արագացման համար հրավիրված են նոր ուժեր։ Այժմ այդ աշխատանքներով զբաղված են շուրջ 25 նկարիչներ, որոնց ճնշող մեծամասնությունը Երևանի Գեղարվեստական ինստիտուտի վերջին տարիների շրջանավարտներ են։ Կասկած չկա, որ ստեղծագործական այդ ստվար կոլեկտիվը գործ կդնի բոլոր ջանքերը՝ իր վրա դրված պարտականությունը օր առաջ և պատվով կատարելու համար։

Մայր Տաճարի տանիքի վերանորոգումը

Ներկայումս նորոգման աշխատանքների մյուս կարևոր օղակն է հանդիսանում Տաճարի հատակի, ինչպես նաև շրջակայքի մայթերի սալաքարերի վերականգնումը։

Ինչպես հայտնի է, տուֆե այդ սալերը ժամանակի ընթացքում բավականին մաշվել են,



Մույրերից մեկը երկաթյա պատյանի մեջ առնված

ծովել, որի հետևանքով ինչպես Տաճարի ներսում, այնպես էլ դրսում առաջացել են խորդուբորդություններ։ Ներկայումս դրսի մայթերի քարերը հանվում են, մեքենայի օգնությամբ տաշվում, հղկվում, հարթեցվում և կրկին շարվում ու ցեմենտով ամրացվում։ Ստացվում է գեղեցիկ, հարթ մակերևույթ։

Նույն եղանակով պետք է կատարվի Տաճարի հատակի սալաքարերի վերականգնումը։ Բացի այդ, իջման սեղանի շուրջը, 4 մույթերի միջև ընկած տարածությունը, որը կազմում է մոտ 90 քառակուսի մետր, պատվելու է մարմարե սալիկներով։ Այսպիսով Տաճարի հատակը ամբողջովին նորոգվելու է, որից հետո այն կընդունի գեղեցիկ, հաճելի տեսք, վայելուչ այն տեսքին, որ կընդունի Տաճարը նորոգումից հետո։

Առաջիկա օգոստոս ամիսը հանդիսանալու է Մայր Տաճարի նորոգման հետ կապված բոլոր տեսակի աշխատանքների լիակատար ավարտման ամիսը։ Շինարարների կոլեկտիվը բոլոր ջանքերը գործ է դնում այդ ժամկետը պահպանելու համար։ Բացառիկ եռանդ ու փանդավառություն են հանդես բերում բոլոր նրանք, ովքեր զբաղված են Տաճարի նորոգման շնորհալի գործով։ Նրանք չեն խնայում իրենց ուժերն ու կարողությունները պատվով կատարելու այն խնդիրը, որը դրված է նրանց առաջ։

Ճանկանանք շինարարներին կատարյալ հաջողություն իրենց աշխատանքում։

***

Մայր Տաճարի նորոգումը մեծ հետաքրքրություն է առաջ բերել հայ ժողովրդի բոլոր խավերի շրջանում՝ ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում։

Դա միանգամայն հասկանալի է։ Այժմ բոլորն անխտիր տեսնում են, թե ինչպես, Մայր Հայրենիքի բարեխնամ կառավարության ջանքերով վերակենդանանում, նոր շունչ է ստանում հայկական ճարտարապետության հոյակապ ու հնագույն կերտվածքներից մեկը։ Հավատացյալ ժողովուրդը տեսնում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սրբազան կենտրոնի՝ Մայր Տաճարի վերանորոգումն ու բարեզարդումը։

Հայ Եկեղեցու Մայր Տաճարի վերականգնման աշխատանքների հուզիչը, աշխատանքային թովիչ աղմուկը միախառնվել է շինարարական այն հսկայական շառաչին, որ տիրել է մեր հայրենի երկրի քաղաքներին, գյուղերին ու ավաններին։

Անսահման կորովի տեր հայ ժողովուրդը հայրենի հարազատ իշխանության հովանու ներքո, սովետական ժողովուրդների համերաշխ մեծ ընտանիքում, կարողացավ ավերակներից վեր հանել իր երկիրը։ Նրա տաղանդը նոր պայմաններում զարգացավ ու փայլեց նոր ուժով։ Նա սովորեց կառուցել արդիական պահանջներին համապատասխան վիթխարի գործարաններ ու ջրանցքներ, հոյակերտ շենքեր ու էլեկտրակայաններ, սովորեց կերտել պալատներ ու արձաններ, բայց չմոռացավ այն արվեստը, որով սկսեց իր ճարտարապետական գործունեությունը։ Մայր Տաճարի նորոգումը թվում է, որ դրա պերճախոս ապացույցն է։

...Օր չի լինում, որ էջմիածին չայցելեն էքսկուրսանտների խմբեր։ Գալիս են աշակերտներ, ուսանողներ, քանվորներ, գյուղացիներ, մտավորականներ։ Գալիս են Երևանից, Հայաստանի շրջաններից ու քաղաքներից, գալիս են Սովետական Միության ամենատարբեր վայրերից։ Գալիս են դիտելու Էջմիածնի վանքը որպես պատմական հուշարձան։

Եվ անսահման մեծ է լինում նրանց ուրախությունը, երբ ականատես են լինում Տաճարի վերանորոգման աշխատանքներին։

Մույրերից մեկը երկաթյա ծողիկների մեջ առնված

Տողերիս գրողը վերջերս պատահաբար առիթ ունեցավ ծանոթանալու էքսկուրսանտների երկսեռ մի խմբի հետ։ Խումբը բավական սուվար էր՝ 50—60 հոգուց բաղկացած։ Նրանց մեջ կային ուսուցիչներ, ծառայողներ, բանվորներ։ Մեծ մասը ռուսներ էին և ուկրաինացիներ՝ Մոսկվայից, Կիևից, Ուրալից։ Տուրիստական ուղեգրերով եկել էին շրջագայելու Հայաստանում և հարկ էին համարել նախ և առաջ այցելել Էջմիածին, որի մասին խմբի անդամներից շատերը խիստ աղոտ պատկերացում ունեին։

Ըստ սովորության հյուրերին դիմավորեց վանքի լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։ Նա վարժ ռուսերենով այցելուներին ծանոթացրեց Մայր Տաճարի պատմության հետ, համառոտ տեղեկություններ տվեց դավթում թաղված կաթողիկոսների մասին և վերջում կանգ առավ նորոգման աշխատանքների վրա։

Պետք էր տեսնել, թե ինչպիսի հետաքրքրությամբ էին լսում ունկնդիրները սրբազանին։ Ապա տեղաց հարցերի մի ամբողջ տարափ՝ ո՞ւմ միջոցներով է նորոգվում Տաճարը, ովքե՞ր են դարդաքանդակների լուն հեղինակները, ե՞րբ է ավարտվելու նորոգումը և այլն։

Հյուրերի և սրբազանի միջև ծագեց մի մտերմական զրույց։

— Ցափազանց գովելի է,— ասաց ուրալցի մի ռուս ուսուցիչ,— որ ձեզ մոտ այսպիսի մեծ հոգատարություն է ցուցաբերվում դեպի անցյալ կուլտուրայի ժառանգությունը։ Դրան մենք ականատես եղանք նաև Երևանում։ Պատմական մի այսպիսի բացառիկ հուշարձանի պահպանումը պատիվ է բերում Սովետական Միության բոլոր ժողովուրդների կուլտուրային։

— Ափսոս, որ չեմ կարող ձեզ ցույց տալ մեր թանգարանը։ Բոլոր նմուշները հավաքել ու փակել ենք, որպեսզի մեր շենքն ազատենք նորոգման համար,— նկատեց սրբազանը։

Հյուրերը Սահակ եպիսկոպոսի հետ երկար շրջեցին վանքի գավթում, ապա իրենց մեջ առնելով վերջինիս, Տաճարի պատի տակ լուսանկարվեցին՝ ի հիշատակ էջմիածին կատարած այցելության։

Այսպիսի էքսկուրսիաներ լինում են գրեթե ամեն օր։ Վերջին 6 ամսում Հայաստան այ-

Մույրերից մեկի ճեղքվածքը վերանորոգումից առաջ

ցելած օտարերկրյա բոլոր պատվիրակություններն անխտիր եղել են Մայր Տաճարում, ուշի-ուշով ծանոթացել Նորոգման աշխատանքներին։ Նրանք բոլորն էլ իրենց անսահման գոհունակությունն են հայտնել Սովետական Հայաստանի կառավարության այդ բարեխնամ նախաձեռնության առթիվ։

Հաճախ այստեղ կարելի է հանդիպել կառավարական բարձրաստիճան անձանց, գիտության, արվեստի, գրականության գործիչների։ Նրանք բոլորն էլ կենդանի հետաքրքրություն են հանդես բերում դեպի Տաճարի Նորոգման աշխատանքները և իրենց արժեքավոր դիտողություններով ու խորհուրդներով աջակցում ընդհանուր գործին։

Չնայած իր առաջացած տարիքին, վանքի հաճախակի այցելուներից է մեր մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, բոլորի կողմից սիրված ու հարգված Վարպետը։ Մեծ հայրենասերը անչափ մոտ է ընդունում իր սրտին այն հոյակապ աշխատանքը, որը կատարվում է վանքում։

Իր հերթական այցելություններից մեկի ժամանակ, երբ Տաճարի մույթերը դեռ նոր էին առնված երկաթյա կապանքների մեջ, Վարպետը ներս մտավ, փայտամածների արանքով դողդոջուն քայլերով մոտեցավ, երկա՞ր-երկա՞ր վերից վայր նայեց կերպարանափոխված մույթերին ու ասաց.

— Հիմի լավ է... Շատ լավ է... Էջմիածինը էլի շատ դարեր ամուր կմնա...

Վանքի Նորոգման աշխատանքներին գործուն մասնակցություն են ցույց տալիս ժողովրդական նկարիչներ Մարտիրոս Սարյանը և Հակոբ Կոջոյանը՝ հայ մանրանկարչության այդ երևելի մասնագետները։ Նրանց կարելի է տեսնել ոչ միայն կառավարական մարմինների նիստերին, ուր հաճախ քննության են առնվում Նորոգման հետ կապված որևէ հատվածի նախագիծ կամ նկարչական էսքիզ, այլև Տաճարում. բարձրարերձ փայտամածների վրա, ուր այդ նախագծերն ու էսքիզները կյանք են առնում։ Եվ ամեն անգամ նրանք իրենց խորհուրդներով ու դիտողություններով օգնության են դալիս երիտասարդներին։

Տաճարի Նորոգման աշխատանքներով է կլանված գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։ Օր չի անցնում, որ նա չլինի Տաճարում, չդիտի, չհետևի Նորոգման աշխատանքներին։

Սակայն սրբազանը միայն Նորոգման հոգսերով չէ, որ ծանրաբեռնված է։ Անելիքներ շատ կան։ Ահա շուտով կավարտվեն Նորոգման աշխատանքները և հարկ կլինի կահավորել Տաճարը։ Տաճարը երբեք աչքի չի ընկել շքեղ կահավորությամբ՝ ի բաց առյալ մի քանի, պատմական տեսակետից, շատ արժեքավոր իրերի։ Անհրաժեշտ է համալրել եղածը և համալրել նոր, թանկարժեք իրերով, այնպես, որ վայելուչ լինի Տաճարի նոր տեսքին։

Ահա խնդիրներ, որոնց լուծմամբ օր ու գիշեր մտահոգված է գերաշնորհ սրբազանը՝ կրելով իր ուսերին Կաթողիկոսական տեղապահի պաշտոնավատարի պատասխանատու պարտականությունը։

Որոշ քայլեր այդ ուղղությամբ արդեն առնված են։ Ձեռք են բերվելու նոր սրբապատկերներ, մոմակալներ, դրոշակալներ և գորգեր։

Սակայն այս ամենը չի կարելի բավարար համարել Մայր Տաճարը պատշաճ կերպով կահավորելու համար։ Այդ գործով պետք է մտահոգված լինեն Հայոց Եկեղեցու բոլոր թեմերը, առանձնապես Սփյուռքի մեր մեծահարուստ հավատացյալները, որոնք իրենց նյութական շոշափելի աջակցությունը պիտի բերեն Մայր Տաճարի ներքին բարեզարդության և նրա թանգարանը հարստացնելու գործում։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻՄՈՒՄ

ՀԵԼՍԻՆԿԻ, 25 հունիսի (ՏԱՍՍ-ի հատուկ թղթ.).— *Խաղաղության համաշխարհային ասամբլեան հունիսի 24-ի պլենար նիստում ընդունեց Միավորված Ազգերի Կազմակերպությանը հասցեագրված հետևյալ դիմումը՝ նրա ստեղծման տասնամյակի կապակցությամբ։*

«Խաղաղասեր ուժերի համաշխարհային ասամբլեան Միավորված Ազգերի Կազմակերպությանը ողջունում է նրա ստեղծման տասներորդ տարեդարձի առթիվ։

Ժողովուրդները քաջ հիշում են, որ Միավորված Ազգերի Կազմակերպությունն ստեղծվեց պատերազմն ավարտվելուց հետո շատ չանցած, պատերազմ, որը այդ ազգերին այնքա՜ն վիշտ, ավերածություններ, դժբախտություններ բերեց։ Նրանք քաջ հիշում են, որ Միավորված Ազգերի Կազմակերպության ստեղծումը ֆաշիզմի դեմ ընդհանուր հաղթանակի համար համատեղ պայքարած տերությունների միահամուռ որոշման արդյունքն էր։

Միավորված Ազգերի Կազմակերպությունը, հետևաբար, պետք է պահպանի հավատարմությունը իր կանոնադրությանը և մեծ տերությունների միաձայնության սկզբունքին, որն ապահովում է կազմակերպության էֆեկտիվությունը։

Միավորված Ազգերի Կազմակերպությունը պետք է լինի իրոք համապարփակ կազմակերպություն։ Ուստի Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան պետք է դրավի իրավամբ իրեն պատկանող տեղը։ Անհրաժեշտ է բավարարել ՄԱԿ ընդունվելու դիմումներ տված պետությունների խնդրանքը։

Եթե Միավորված Ազգերի Կազմակերպությունն ընթանա այդ ուղիով, նա կկարողանա արդարացնել այն հույսերը, որ նրա վրա դնում են ժողովուրդները։

Ահա՛ ՄԱԿ-ի ստեղծման այս տասնամյակի առթիվ խաղաղության համաշխարհային ասամբլեայի ցանկությունները, որ արտահայտում է աշխարհի բոլոր երկրների հարյուր միլիոնավոր մարդկանց զգացմունքները։

ՄԱԿ-ը պետք է ապահովի համաձայնության ձեռք բերումը զինաթափման և ատոմային զենքի արգելման հարցի շուրջը, նա պետք է ժողովուրդների միջև բեղմնավոր համագործակցություն հաստատի»։

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 28 հունիսի 1955 թ.)

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ԴԻՄՈՒՄԸ

10 տարում առաջին անգամ, աշխարհի պառակտման պայմաններում հասարակական կարծիքի ջանքերի շնորհիվ հանդիպում կունենան չորս մեծ տերությունների ղեկավարները։ Նրանց վրա հույսեր է դնում մարդկությունը։ Նրանց առաջնահերթ պարտքն է հաղթահարել փոխադարձ անվստահությունը։

Խաղաղության համաշխարհային ասամբլեան, որը միավորեց 68 երկրների ներկայացուցիչներին, վստահություն ստեղծեց, որ չնայած խոր տարակարծություններին, չնայած հայացքների տարբերությանը, մի շարք կարևոր հարցերի շուրջ կարող է համաձայնություն ձեռք բերվել և արդեն այսօր շատ պրոբլեմներ կարելի է լուծել բանակցությունների միջոցով։

Համաշխարհային հասարակական կարծիքն ըմբոստացավ ուժի քաղաքականության դեմ, ռազմական բլոկների, սպառազինությունների մրցավազքի և ատոմային պատերազմի ահեղ վտանգի դեմ։ Ժընևի համաձայնագրերը, Հնդկաչինում պատերազմի ավարտումը, Բանդունգի կոնֆերանսը, Ավստրիայի չեզոքությունը, որը վավերագրված է պայմանագրով, Բելգրադի դեկլարացիան՝ այս ամենը հասարակական կարծիքի զարթոնքի արդասիքն են, կարծիք, որն իր արտահայտությունն է գտել կառավարությունների դիրքավորման մեջ։

Ջինաթափման և ատոմային զենքի պրոբլեմի նկատմամբ, որը մինչև այժմ չլուծված էր մնում անհաղթահարելի հակասությունների հետևանքով, տեսակետները այնքան են մերձեցել, որ համաձայնությունը միայն բարի կամքի հարց է։

Հելսինկիի ասամբլեան ցույց տվեց, որ եթե չորս տերությունների խորհրդակցությունը հաշվի նստի հասարակական կարծիքի հետ, ապա այդ խորհրդակցությունը կհանդիսանա այնպիսի Եվրոպայի կառուցման առաջին փուլը, որտեղ ապահովված կլինի Եվրոպական բոլոր պետությունների անվտանգությունը, և այդ պետությունները կթևակոխեն տնտեսական ու կուլտուրական սերտ համագործակցության ուղին։ Այդպիսի Եվրոպայի կառուցումը կապված է ամեն տեսակ ռազմական կոալիցիայից դուրս գտնվող, միլիտարիզմի վերածնումից երաշխավորված Գերմանիայի վերամիավորման հետ։

Այդ ոգուն համապատասխան, չորս տերությունների խորհրդակցությունը բանակցությունների միջոցով պետք է նախապատրաստի օտարերկրյա զորքերի դուրս բերումը Չինական Տայվան (Ֆորմոզա) կղզուց։ Խորհրդակցությունը պետք է հետևի Հնդկաչինի վերաբերյալ Ժընևի համաձայնագրերի խստիվ պահպանմանը։ Միավորված Ազգերի Կազմակերպությանը խորհրդակցությունը պետք է հնարավորություն տա ստանալու իրոք համաշխարհային բնույթ, իր կազմի մեջ մտցնելով Չինական ժողովրդական Ռեսպուբլիկան։

Բայց դեռ կան ուժեր, որոնց ձեռնտու է սառը պատերազմը, և նրանք դիմադրում են չորս մեծ տերությունների մերձեցմանը։ Հելսինկիի ասամբլեան աշխարհի բոլոր երկրների հասարակական կարծիքին կոչ է անում դիմադրել այդ ուժերին և պաշտպանել բանակցությունների մասնակիցներին։

Խաղաղության գործը, վերջապես, հաջողությամբ կպսակվի, եթե իրենց առջև միևնույն նպատակները դնող խաղաղասեր ուժերը, մասնավորապես խաղաղության պաշտպանությամբ հանդես եկող կանանց շարժումները, քրիստոնեական և սոցիալ-դեմոկրատական ուղղության քաղաքական խոշոր կազմակերպությունները միավորեն իրենց գործողությունները՝ անվստահությունը փարատելու և խաղաղությունը պաշտպանելու համար։

Քայլ առ քայլ կարելի է լուծել միջազգային հակասությունները, և այն ժամանակ կիրականանան ժողովուրդների հույսերը։

Հելսինկի, 29 հունիսի 1955 թ.

(ՏԱՍՍ)

(Երևան, «ՀՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 1 հուլիսի 1955 թ.)

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

ՀԵԼՍԻՆԿԻ, 1 հուլիսի (ՏԱՍՍ).— Գո Մո-ժոյի նախագահությամբ տեղի ունեցավ խաղաղության Համաշխարհային խորհրդի նիստը։ Խաղաղության Համաշխարհային խորհրդի նախագահ կրկին ընտրվեց պրոֆեսոր Ֆրեդերիկ Ժոլիո-Կյուրին (Ֆրանսիա), փոխնախագահներ ընտրվեցին էմմանյուել դ'Աստյե դը լա Վիժերին (Ֆրանսիա), պրոֆեսոր Ջ. Բեռնալը (Մեծ Բրիտանիա), Լասարո Կարդենասը (Մեքսիկա), տիկին Էժենի Կոտոնը (Ֆրանսիա), Իլյա Էրենբուրգը (ՍՍՌՄ), պրոֆեսոր Լեոպոլդ Ինֆելդը (Լեհաստան), Սայֆուդդին Կիտչլուն (Հնդկաստան), Գո Մո ժոն (Չինաստան), Արթուր Լունդկվիստը (Շվեդիա) և Պյետրո Նեննին (Իտալիա)։

Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոյի կազմի մեջ մտավ 51 մարդ։ Դրանց թվում են՝ Լ. Կաղանովան (Ֆրանսիա), Ռոմեշ Չանդրան (Հնդկաստան), Վինսենտ Դանկեն Ջոնսը (Մեծ Բրիտանիա), Ջ. Էնդիկոտտը (Կանադա), Մոնիկա Ֆելտոնը (Մեծ Բրիտանիա), Պ. Գուլյաևը (ՍՍՌՄ), Նազիմ Հիքմեթը (Թյուրքիա), Ի. Գրոմադկան (Չեխոսլովակիա), Դ. Դ. Կոսամբին (Հնդկաստան), Լ. Ի-մանը (Չինաստան), Ժորժի Ամադուն (Բրազիլիա), Իզաբելլա Բլյումը (Բելգիա), Ժիլբեր դը Շամբրենը (Ֆրանսիա), Պյեռ Կոտը (Ֆրանսիա), Ա. Ֆադեևը (ՍՍՌՄ), Յա. Իվաշկևիչը (Լեհաստան), Ա. Կոռնեյչուկը (ՍՍՌՄ), Ժան Լաֆֆիտը (Ֆրանսիա), Ռիկկարդո Լոմբարդին (Իտալիա), Մաո Դունը (Չինաստան), Այվոր Մոնթեգյուն (Մեծ Բրիտանիա), Յան Մուկարժովսկին (Չեխոսլովակիա), Ա. Սուրկովը (ՍՍՌՄ), Ն. Տիխոնովը (ՍՍՌՄ) և ուրիշներ։

Խաղաղության Համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար ընտրվեց Ժան Լաֆֆիտը, քարտուղարության անդամներ ընտրվեցին Իզաբելլա Բլյումը, Ժիլբեր դը Շամբրենը, Վինսենտ Դանկեն Ջոնսը, Նինո Ֆոլյարեզին, Պանտելեյմոն Գուլյաևը, Լի Ի-մանը, Ռիկկարդո Լոմբարդին, Այվոր Մոնթեգյուն, Կոիցի Սայոնձին։

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 3 հուլիսի 1955 թ.)

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՆՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ*

39) Եպարքոս, եպարքի.— «Եռուն պատերազմ ընդ Բուփոսի եպարքոսին» Խոր., Բ 60, էջ 189. ունեն նաև Ոսկ. Յովհ., Ա 37, Վարք հրց., ԺԴ. «Կոչէ զնա Երրորդ Հայք և առնէ զնա եպարքին» Յովհ. կաթ., էջ 68։ Այս բառերը փոխառված են հունարենից համեմատաբար ուշ ժամանակաշրջանում։

40) Երեսաւոր.— «Երեսաւորք ի սիրտ և ի պաշտպանութիւն պատերազմին» Խոր., Ա 13, էջ 43. «և ի մարտս երեսաւորս» Խոր., Ա 21, էջ 65. «զանձնագեղս և զերեսաւորս» Յովհ. կաթ., էջ 119. «արս երեսաւորս ի սիրտս և ի պատրաստութիւն զինուցս» Յովհ. կաթ., էջ 114. «երեսանալ — Մինչ հանդէպ երեսանալ Ազեքսանդրու ի յանդուգն դիմացուածին» Արծր., Ա 6, էջ 79. համեմատե նաև Պատմ. Աղեքս. և Վարք Ոսկ.։ Ըստ երևույթին, հետին շրջանի բառեր են։

41) Եոթնպարիսպեան.— «Բայց Տրդատայ իւր հաստատեալ զեօթնպարիսպեանն Եկբատանս» Խոր., Բ 87, էջ 236. «Եւթն պարիսպն՝ այնք որ յԵկբատանսն Թէոն, էջ 22։ Թեոնի հայերեն թարգմանության հրատարակության առաջաբանում ես արդեն ցույց եմ տվել, որ Խորենացին օգտվել է 6-րդ դարի այս թարգմանությունից. տե՛ս «Թէովնեայ Յաղագս ճարտասանական կրթութեանցն», Երևան, 1938 թ., էջ Լեթ—ԼԸ։

42) Զրուցարան.— «Եւ վասն առ ի Յունաց զրուցարանսն» Խոր., Ա 2, էջ 9. «զրուցարանութիւնս — «Եւ այս փարգ զրուցարանութեան դատարանին առցէ» Խոր., Ա 9, էջ 32. համեմատե նաև Խոր., Ա 8, էջ 28. «որպէս Յովսեպոս մեզ զրուցարանէր» Արծր., Ա 6, էջ 89. «Հնամբասէր ի լսելիս նորա զզրուցարանութիւն հնոցն թագաւորացն» Արծր., Դ 3, էջ 464։

43) Ընթերցասէր, ընթերցասիրութիւն, ընթերցասիրեմ.— «Ով ուշիմ ընթերցասէրդ» Խոր., Ա 5, էջ 17. «Յորժամ զայսպիսիս ընթերցասիրեցեմք իմաստութեան ճառս» Խոր., Ա 3, էջ 10. «զոր ընթերցասէրն Պաղոմէոս գրեալ» Արծր., Ա 6, էջ 84. «Ամենեքեան իսկ ընթերցասիրաց յայտնի են» Արծր., Դ 6, էջ 474. «ով ընթերցասէրդ» Յովհ. կաթ., էջ 12. «որ էր այր ընթերցասէր և ուսումնասէր» Յովհ. կաթ., էջ 88. «և ընթերցասէր աստուածային գրոցս» Սոկր. Սքոլ., Զ 3, էջ 494։ Կարող են լինել ուշ շրջանի բառեր։

44) Կաճեայ.— «Ճախար առնոյր կաճեայն» Խոր., Գ 9, էջ 267. «վաճեալ թաղի կաճեայ» Մովս. Կաղան., Ա 12, էջ 38։

45) Թիկնապահ.— «Եւ թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի դաւակացն Խոռայ Հայկազնոյ» Խոր., Բ 7, էջ 110. «Ապա զգեցուցանեցոս արքայի և թիկնապահաս» Յովհ. կաթ., էջ 26 (նաև էջ 312 և 342). «Եւ Վահրամ Սեպուհ թիկնապահ իշխանին» Արծր., Գ 2, էջ 218 (նաև Ա 5, էջ 79, Գ 2, էջ 224. Գ 29, էջ 426). Մովս. Կաղան., Բ 11, էջ 156, Բ 13, էջ 167։

---

* Շարունակված ամսագրի 1955 թվականի № V-ից։

Ուշագրավ է, որ Խորենացին, Հովհաննես կաթողիկոսը և Թովմա Արծրունին գործ են ածում հաճախ կենցաղային-ռազմական նման բառեր, որոնք չեն հանդիպում մատենագրական հնագույն երկերում. օրինակ՝ աշտանակել, դիպաղեղն, երեսաւոր, պահպանակ, տիգաւոր, կիսախողխող, բազմախողխող և այլն։

46) Թիկնաւէտ.— «Երուանդեանս Տիգրան, երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և Թիկնաւէտն» Խոր., Ա 24, էջ 73. «Այնպէս ապա գունեան այրն և Թիկնաւէտ առ ամիրայն մտանէր» Ցովհ. կաթ., էջ 102. «որ էր այր քաջանձնեայ և Թիկնաւէտ» Ցովհ. կաթ., էջ 135. «Քաջահասակ էր նա և անձնեայ և Թիկնաւէտ» Ցովհ. կաթ., էջ 137։

47) Ինքնահաճոյ.— «Այլ և ինքնահաճոյ արդարև գործա» Խոր., Ա 4, էջ 15. ունեն նաև Ցովհ. կաթ., էջ 12, Պատմ. Աղեքս., էջ 51, 74, Թէոդ. խշ. և այլն։

48) Իրական.— «Որպէս յիրականացն պատմութեանց Հերոդոտեայ է ուսանել ի չորրորդէն» Խոր., Բ 2, էջ 104. «Եւ յիրականացն պատմութեանց են ինչ, զորս և ի Հերոդոտայ առնուլ, որպէս զայն որ ի չորրորդէնն» Խորենացին, ինչպես տեսնում ենք, օգտվել է պարզապես Թեոնի հայերեն թարգմանությունից։

49) Լայնատարած.— «Ի լուսն ընդ լայնատարած և խորասատակն անցանէր ընդ Եփրատն» Խոր., Բ 79, էջ 219. «Դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարածն» Արծր., Ա 8, էջ 60. «Նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին» Արծր., Գ 10, էջ 180. Համեմատե նաև Մովս. Կաղան., Բ 27, էջ 221. Բ 34, էջ 225. Համամ. Մեկն. քերակ. (Հրատ. Ագոնցի, 1915 թ.), էջ 264. «տարածն» հնտադիրով կազմված բարդությունները սովորական են, գլխավորապես, Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում. տե՛ս օրինակ «համատարածն» Ցովհ. կաթ., էջ 18. «պայծառատարածն» Ցովհ. կաթ., էջ 61. «բազկատարածն» Մովս. Կաղան., Բ 29, էջ 232 և այլն։

50) Լծադիր.— «Լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմացս» Խոր., Ա 24, էջ 72. «Ամենեցունց նոցա լծադիր և հարկապահանջ լինէր» Ցովհ. կաթ., էջ 22։

51) Լորդու.— «Պաշտօն տանել լորտուաց և աթերաց առնել բաշխումն» Խոր., Գ 62, էջ 345. «Եւ պաշտօն կրել լորտուացն, որ խնամ տանին տանն, և բաշխումն առնել աթերացնս» Պատմ. Աղեքս., էջ 41։ Խորենացու Պատմության մեջ, ինչպես հայտնի է, քազվածորեն գործ են ածված հաճախ բազմաթիվ բառեր Աղեքսանդրի վարքի հայերեն թարգմանությունից, որը անտարակույս, մատենագրական հետին շրջանի երկ է։ Այդպիսի բառեր են, օրինակ՝ «Հոմիշխանս» Խոր., Գ 66, էջ 353. Պատմ. Աղեքս., էջ 19. «հնդամիտս» Խոր., Գ 68, էջ 361. «որոնամարտիկս» Խոր., Գ 40, էջ 308, Պատմ. Աղեքս., էջ 24. «ձիավարել» Խոր., Գ 13, էջ 271, Պատմ. Աղեքս., էջ 25. «ձիարձակարան» Խոր., Գ 55, էջ 331. Պատմ. Աղեքս., էջ 26. «տուրի» Խոր., Գ 62, էջ 345. Պատմ. Աղեքս., էջ 41, 186. «վիշապազն» Խոր., Ա 30, էջ 84. Պատմ. Աղեքս., էջ 41. «բեռնաբարձս» Խոր., Գ 62, էջ 345. Պատմ. Աղեքս., էջ 41. «հինգակատար» Խոր., Գ 62, էջ 345. Պատմ. Աղեքս., էջ 41.«հանգոյց ի հանդուցէս» Խոր., Բ 46, էջ 172. Պատմ. Աղեքս., էջ 58. «նգախարխարս» Խոր., Գ 28, էջ 280. Պատմ. Աղեքս., էջ 64. «թուլամտութիւն» Խոր., Ա 21. Պատմ. Աղեքս., էջ 96. «ուժաւոր» Խոր., Ա 10, էջ 33. Պատմ. Աղեքս., էջ 97. «առնապատկերս» Խոր., Բ 12, էջ 122. Պատմ. Աղեքս., էջ 149. «վիմուտս» Խոր., Գ 55, էջ 330. Պատմ. Աղեքս., էջ 154 և այլն և այլն։

52) Խան.— «Ելանէ ի խանս կարգեալս ի բանակէն խրմէ ի քաղաքն իւր. «Խոր., Բ 46, էջ 172։ Ըստ երևույթին, ռամկական ուշ շրջանի բառ է։

53) Խաքան.— Տե՛ս Խոր., Բ 87, էջ 235. Բ 89, էջ 239. Սեբ. գլ. Ը, էջ 33, ԻԶ, էջ 67, ԻԷ, էջ 68 և 69. Ղևոնդ, ԺԲ, էջ 41. ԺԸ, էջ 101. Խոր., Աշխ., էջ 605. Սուքր. հրտ. էջ 27։

54) Խորտաբորտ.— «Արշաւել ընդ խորտաբորտս և ընդ վիմուտ տեղիս» Խոր., Գ 55, էջ 330։ Ըստ երևույթին, ուշ շրջանի բառ է։

55) Խրթնանամ.— «Եկեղեցի Հայաստանեայց՝ խրթնացեալ է ի բարեզարդութենէ բեմին» Խոր., Գ 68, էջ 358. «Զի սուրբ եկեղեցին խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմինս Ղևոնդ, Է, էջ 21. ունի նաև Ցովհ. կաթ., էջ 58, 110, 116. տե՛ս նաև Խոսր., Շնորհ., Նար.։ «Խրթնիր — «Այնքան խրթնի անծանօթքն պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանամն» Արծր., Բ 7, էջ 121։ «Խրթնիր «մթին» իմաստով ունի Փիլիպ., Ա 7. Համեմատե նաև Ցովհ. կաթ.,

էջ 74, 80։ «Խրթնազգեստ» Թէոդոր. Մայրագոմ., էջ 147. «Խրթնութիւն» Ստեփ. Սիւն. Մեկն. քեր., էջ 207 (Հրատ. Ադոնցի, 1915 թ.)։

56) Կայկայիմ.— «Կայկայեցաւ տգիտութեամբ շարափառութիւն» Խոր., Գ 68, էջ 358. «Կայկայէին որդիք աղախնեաց» Արծր., Դ 5, էջ 473. գործ է ածված Խորենացու և Արծրունու մոտ։

57) Կապան.— «Անցանէ ընդ կապանն Ճորայ» Խոր., Բ 65, էջ 200. «Նլին արտաքս քան զկապանն Ճորայ» Խոր., Դ 12, էջ 270. «Զոգան հասին ի կապանս Ճորայ» Սեբ. ԽԹ, էջ 151. «Զի է կապանք երկաթի և բանտից և կապանք քարեայ (այսինքն լերանց), որ ասի՝ կիրճս ճանապարհի» Երզն. քեր. «Անցանէին ընդ Նեղ և ընդ դժուար կապանսն լերանցն» Ուռհ.։ «Կապանը հատուկ այս իմաստով, ըստ երևույթին, հեռին շրջանի բառ է։

58) Կիսակտուր.— «Արարեալ սուսերաւ կիսակտուր զգլուխ նորան» Խոր., Գ 39, էջ 307. «ԳՔա ով թագաւոր, ի կիսակտուր շինականս» Սահմ., Թ, էջ 166. «Ոչ թոզլով կիսակտուր զրանիցն ոճ» Ցովհ. կաթ., էջ 228. «Զիա՞րդ եթէ Սատուած կիսակտուրն և ի կաղէն գողացեալն» Արծր., Ա 3, էջ 64։

59) Կղիմայ.— «Վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Ցոյնք զկղիմայն զայն Պոռոին Արմենիան» Խոր., Ա 14, էջ 46. «Եւ զի զկղիմայն զայն» Ցովհ. կաթ., էջ 18. նաև Վարդ. վրդ., Ոսկեփ. և այլն։

60) Կոմնակալ.— «Եւ վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացեալց և մեծաց կոմնակալաց» Խոր., Ա 21, էջ 66. Բ 7, էջ 109, Բ 8, էջ 113. տե՛ս նաև Ցովհ. կաթ., էջ 26. Արծր, Բ 5, էջ 184, Բ 6, էջ 197, Գ 1, էջ 209, Դ 2, էջ 223. Մովս. Կաղան., Ա 4, էջ 14. «Կոմնակալութիւն» — Խոր., Բ 8, էջ 113, Բ 11, էջ 121։ Այս բառերը չեն հանդիպում հնագույն երկերում։

61) Կոպտարանձն.— «Զայս խոժոռադեղ և բարձր և կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և դժնահայեաց» Խոր., Բ 8, էջ 114. «Կոպտանձն» Վարդ. պատմ.։ Ըստ Աճառյանի (Արմատ. բառ.)՝ «կոպիտ» արմատը, որ այս բարդությունների առաջադիրն է, գործ է ածվել միջին հայերենում։

62) Հակառակաթոռ.— «Զի լիցի ընդդիմապատ մեծին Սահակայ և հակառակաթոռ» Խոր., Գ 65, էջ 350. «Սակայն հակառակաթոռ գոլով» Ցովհ. կաթ., էջ 73. «Եւ կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ զՍորմակ մոլի» Արծր., Ա 129, «Հակառակաթոռ» բառը, որքան ինձ հայտնի է, չի հանդիպում հնագույն երկերում։

63) Հարսնանամ.— «Զի հարսնասցի արքային» Խոր. Բ 83, էջ 226. տե՛ս նաև Պատմ. Հռիփ., էջ 298, 307 (Վենետիկ, 1843 թ.). Զաքր. կաթ., Վրդ. ծն., Լամբր. և այլն։ Կարող է լինել հեռին շրջանի բառ։

64) Հաւանողական.— «Իսկ նուաճել հաւանողական կամ բռնաւորական բանին» Խոր., Բ 92, էջ 245. «Զոմանս հաւանողականաւ, իսկ զոմանս բռնաւորականաւ կարդաս» Ցովհ. կաթ., էջ 41. նաև Նար., ԺԷ։

65) Հաւասարաէր.— «Արդարադատ և հաւասարաէր կշիռս ունելով յամենայնի» Խոր., Ա 24, էջ 73. «Այլ և ի հաւասարասիրութիւն առ ամենեսեան զինքն կշռադատեալ» Ցովհ. կաթ., էջ 22։

66) Հեղձամահ լինել.— «Վասն որոյ հեղձամահ եղև յիւրոց սենեկապետաց» Խոր., Գ 22, էջ 283. «Եւ այնպէս հեղձամահ վճարէին ի վենաց» Ղևոնդ, Ը, էջ 25. ունեն նաև Զաքր. կաթ., Մովս. Կաղան.։ Տե՛ս Ակինյան, Մատեն, հետազ., III, էջ 197։

67) Հնախօսութիւն.— «Ոչ հնախօսութիւնք եղեալ մեծոյ աշխարհիս» Խոր., Գ 1, էջ 257. «Եւ որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից» Խոր., Բ 75, էջ 214. «Ի հնախօս շարադրական մատեանս» Արծր., Ա 1, էջ 24։

68) Հրընկեց, հրընկեցութիւն.— «Ամպք հրընկեցք» Խոր., Գ 68, էջ 365. «Հրընկեց բարկութիւն». ունի Պատմ. Աղեքս.։

69) Հրէշ.— «Անբաւութիւն յամուրաց և հրէշից» Խոր., Բ 18, էջ 223. «Ունի և հրէշ և մուշկ և սիրամարգ շատ» Խոր., Աշխ. (Վենետիկ, 1843 թ.), էջ 616. «Եւ ունի հրէշ, և մուշկ, և սիրամարգ շատ» Խոր., Աշխ. (Հրատ. Սուքր.), էջ 46։ Այս բառը առաջին անգամ գործ է ածված Աշխարհացույցի մեջ, որ ուշ շրջանի երկ է։

70) Ճախր առնում.— «Ճախր առնոյր կաճեայն» Խոր., Գ 9, էջ 267. «Ճախր առեալ ճահողաբար» Պետր. Սիւն., էջ 14 (Վաղարշապատ, 1902 թ.). «Ճախր առեալ

ճեմէր յասպարիսի անդ» Յովհ. կաթ., էջ 176. «ԵԹԷ զինուք հարկանէին՝ ոչ գործէր, այլ ճախր առնոյր» Մովս. Կաղան., Ա 12, էջ 38. «Ընդ հովիտս դաշտացն ճախր առեալ» Մովս. Կաղան., Բ 36, էջ 263. ունի նաև Պատմ. Աղեքս., էջ 134. «ճախրեալ» Արծր., Գ 29, էջ 412. «ճախրասլացք» Մովս. Կաղան., Բ 28, էջ 229։ «Ճախիր առնում» բառը սովորական է ոչ շրջանի հիկերում։

71) Մարդադաւ, մարդադաւութիւն.— «Իսկ միսն գիշերային և մարդադաւացս» Խոր., Բ 39, էջ 165. «Եւ զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեանցս» Խոր., Բ 6, էջ 109. «Ի բաց քեցել յանձանց զաւազակութիւնն և զմարդադաւութիւնն» Յովհ. կաթ., էջ 25. «Ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեանս» Յովհ. կաթ., էջ 140. «Պատուէր առնէր՝ զաւազակութիւն և զմարդադաւութիւն թողուլ» Մովս. Կաղան., Ա 4, էջ 14. «Եբարձ նա յայդխարհէն իւրմէ զաւազակութիւն» Ասող., Գ 17, էջ 196։ «Մարդադաւութիւն» բառը հանդիպում է միայն ուշ շրջանի երկերում։

72) Մեծահասակ.— «Զանասնոց պաճարս բազմացուցանեն, մեծահասակս, քաջամարմինս» Խոր., Բ 59, էջ 338. «ուժեղ և մեծահասակ լինի, և հնաղանդ և գործունեայ» Շիր. Տիեզ., էջ 20 (Երևան, 1940 թ.). «Եւ էր նա մեծահասակ և վայելուչ երեսօք» Մեսր. երէց, էջ 19։

73) Մեծիմաստ.— «Մեծիմաստ և պերճաբան» Խոր., Ա 24, էջ 73. «Մեծիմաստ և պարկեշտ և մեծաշան» Յովհ. կաթ., էջ 137 և 292. «Պարգեալ էր և զօրագլուխ մի մեծիմաստ և յառաջատես» Արծր., Դ 3, էջ 460։ «Մեծիմաստս» բառը հանդիպում է ուշ շրջանի երկերում։

74) Միջակտուր.— «Միջակտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ» Խոր., Բ 85, էջ 231. «Սրախողխող միջակտուր արարեալ» Արծր., Գ 25, էջ 387. «Ինքն լինի միջակտուր ի նմանէն» Մովս. Կաղան., Ա 12, էջ 87. ունեն նաև Մխ. առակք, Ասող. և այլն։

75) Միջերկրեայ.—«Եւ քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ զՄաժաք և զհոգս Միջերկրեայցն» Խոր., Բ 14, էջ 127. տե՛ս նաև Խոր., Բ 25, էջ 142. Գ 5, էջ 261. 12, էջ 270 և 19, էջ 278. ունեն նաև Խոր. Աշխ., էջ 592, 600 և այլն և Սուքր. Հրատ. էջ 6, 21 և այլն. «Աշխարհն Միւսիգիոն, որ թարգմանի Միջերկրեայք» Ղևոնդ, ԺԹ, էջ 103։ «Միջերկրեայք» վերոհիշյալ իմաստով առաջին անգամ գործ է ածված Ղևոնդի Պատմության մեջ։

76) Մոլեխնդ.— «Տան նմա արրումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխնդն» Խոր., Բ 92, էջ 247. «Ցաղագս մոլեխնդին Սոկրատայ» Նոննոս, III, ԺԳ, էջ 30. ունեն նաև Յովհ. կաթ., էջ 261. Նխա. կարմ., Մեսր. երէց և ուրիշներ։ Խորենացին, հավանորեն, օգտվել է Նոննոսի հայերեն թարգմանությունից։

77) Մրրկալից.— «Զմեռն սաստկասաստոյց, մրրկալից, յերկարացեալ» Խոր., Գ 68, էջ 365. «Իբրև ձմեռն ընդմիջեցաւ և ոգն խստացաւ թանձրացաւ միգախառն մրրկալից» Արծր., Բ 7, էջ 200. «Զկոհակսն մրրկալից դադարեցուցին» Արծր. Գ 5, էջ 247. «Ի բռնութենէ մրրկալից հողմոյն» Արծր., Գ 7, էջ 269։

78) Յայտարարութիւն.— «Եւ անտի զյայտարարութիւն մերոյ աղգարանութեանս խոստացաք» Խոր., Ա 2, էջ 7, «Յայտարարութիւն սակաւուք» Խոր., Ա 7, էջ 27. ունեն նաև Յովհ. կաթ., էջ 10, 12. Արծր., Ա 10, էջ 106, Ա 11, էջ 134, Դ 7, էջ 293. Մովս. քերթողահայր, տե՛ս Գիրք թղթ., էջ 22 և Յովհ. եպիսկոպոսապետ, տե՛ս Գիրք թղթ., էջ 32։ Այս բառը սովորական էր ուշ շրջանի երկերում։

79) Յաջողաձեռն, յաջողաձեռնութիւն.— «Նորատիք և հարուստք յոյժ և յաջողաձեռնութիւն իսկ» Խոր., Ա 13, էջ 43. «Եւ ի սու�եր աջողաձեռնագոյն» Խոր., Ա 21, էջ 65. «աջողաձեռնութեամբ» Յովհ. կաթ., էջ 137. «յաջողաձեռն» Յովհ. կաթ., էջ 336. «աջողաձեռնաբար» Յովհ. կաթ., էջ 114. «յաջողաձեռնական» Յովհ. կաթ., էջ 120։

80) Նաւակամուրջ.— «Եւ զօրացն Պարսից կողմնապահաց հատեալ զյուանս նաւակամրջին Եփրատուս» Խոր., Գ 13, էջ 271. «Խնդրէր զինքն վարգել պահապան նաւակամրջացն» Ղևոնդ, Դ, էջ 13. «Հատեալ զլարս նաւակամրջացն» Սեբ., Լէ, էջ 95։ «Նաւակամուրջ» բառը, որքան ինձ հայտնի է, առաջին անգամ հիշատակված է Սեբեոսի պատմության մեջ։

81) Շղոմարար.— «Զայր շոյտ և շղոմարար և սուտակասպասս» Խոր., Բ 60, էջ 190. «Հրապուրեցայ ի շղոմարար շղոմոգեալ բանից մերոց թագաւորացն» Յովհ. կաթ., էջ 288. «Շղոմարար հպատակութեամբ վարէր առ թագաւորն» Արծր., Ա 8, էջ 101. «Մեռանի անձամբ ընդ այլ շղոմա-

բարսեն» Արծր., Ա 8, էջ 102, «Ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շողումարար հաճութեամբ թագաւորիդ յանձն առնուլ» Արծր., Բ. 2, էջ 143. «շողմոդէր, շողոմութեամբ» Յովհ. կաթ., էջ 252, «Շողոմն արմատը ունեն Ոսկ. Հոռվմ., 415 և Նոննոս, 45, սակայն «շողոմարար» բառը, որ չի հանդիպում հնագույն երկերում, տովորական ու ընդհանուր տարածված բառ է եղել, հավանորեն, Թագրատունյաց շրջանում։

82) Ուղղախօսեմ.— «Անուանէին հինք աշխարհին՝ «Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել» Խոր., Ա 14, էջ 46—47. «Զայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց և Ասորւոց՝ կոչեցին Աբգարոս» Խոր., Բ 26. էջ 143. «Երկարակեցութեամբ զմիմեանս աւանդութեամբ ուսուցանէին ուղղախօսել» Ստ. քեր., էջ 183 (հրատ Ադոնցի). «Զատ մեզոումս լեզուի ոչ բաւեալ ուղղախօսել» Յովհ. կաթ., էջ 32. ունի նաև Մագ. թղթ. (1910 թ.), էջ 131. «ուղղախօսութիւն», Ստ. քեր., էջ 183. Մագ.։

83) Չափաբերապէս.— «Վերահայեցողք չափաբերապէս մակագրութեանց» Խոր., Գ 62, էջ 343. «Զառ ի ծերունեացն անցեալ բան ի պարզագունից չափաբերապէս հանդիպեցայց» Յովհ. կաթ., էջ 131. «չափաբերութիւն», «չափաբերեալ» — «Ի չափաբերութիւն անհատից մարդկային սեռից» Արծր., առաջաբան, էջ 18. «Տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի» Արծր., Գ 29, էջ 400։ Մատնանշված այս բառերը չեն հանդիպում հայ մատենագրության հնագույն երկերում։

84) Պահպանակ.— «Եւ պահպանակս բարձից և բազկաց» Խոր., Ա 11, էջ 36. տե՛ս նաև Խոր., Ա 24, էջ 72. Բ 85, էջ 230. Գ 37, էջ 303. «Լիգէոն պահպանակ թիկունացս» Յովհ. կաթ., էջ 26. «Ի պահպանակացն բարձիցն և բազկացն» Յովհ. կաթ., էջ 312։

85) Պատել.— «Պշրանօք և պոստելով վեայր զօրհանապազ» Խոր., Բ 63, էջ 194. «Կայր զյոնան պռոտեալ» Արծր., Գ 6, էջ 254. Գ 15, էջ 340. ունեն նաև Վրդ. սղմ., Կիր. պատմ.։ Հնագույն երկերում չի հանդիպում։

86) Ջալոտ.— «Հրամայեաց ջալոտիւք հարկանել յերկարս» Խոր., Գ 14, էջ 272. «Հրեալ ջալոտիւք գթիկունս նորա՝ սաստկագոյնս տանջէին Ղևոնդ, Խ, էջ 164. ունեն նաև Սիսական. Սուփերք ԺԲ, էջ 33. Ցաքմ. և այլն։ Առաջին անգամ հիշատակված է Ղևոնդի Պատմության մեջ։

87) Ջախումն.— «Եւ այսպիսի ջախմամբ վախճանեցաւ» Խոր., Բ 46, էջ 173. «ջախել» կամ «ջաղխել» — «Որք միանդամ եկին ընդդեմ նոցա պատերազմել՝ ջախեցին մանր իբրև զփոշի» Ղևոնդ, ԼԷ. էջ 156. «Եղարկ զթագն Աղեքսանդրի և ջախեաց զսպաղաւորս նորա» Պատմ. Աղեքս., էջ 91. «Եւ բոլոր անդամք նորա ջախեալ ջախջախեալ» Յովհ. կաթ., էջ 117. «Մեծամեծս փքայր ջնջել ջարդել ջաղխել» Յովհ. կաթ., էջ 289։ Հնագույն երկերն ունեն կրկնութեամբ «ջախջախել»։

88) Սաղապեցուցանել.— «Ի դէն մագդլանց սաղապեցուցանել» Խոր., Գ 55, էջ 330. «Եւ այնպիսեաւ սաղապաՀիմի մտաք յԵգիպտոս» Խոր., Գ, էջ 344. «սաղապել» Պիտ. վերջաբ., էջ 581. «սաղապ» — «Զսաղապ և զանոտի միտս նորա յինքն յանկուցեալ» Յովհ. կաթ., էջ 121. տե՛ս նաև Յովհ. կաթ., էջ 180, 216. Ոսկ. Յովհ. Բ լիշ., էջ 960. «անսաղապ» Յովհ. կաթ., էջ 291։ Թեև «առասաղապել» ունի մեկ անգամ նաև Տիմ., էջ 108 (տե՛ս Աճառյան, Արմատ. բառ.), սակայն «սաղապ» և «սաղապել» տովորական ու ընդհանուր գործածական բառեր էին, հավանորեն, Թագրատունյաց շրջանում։

89) Սաստկասառոյց.— «Զմեռն սաստկասառոյց մրրկալից» Խոր., Գ 68, էջ 365. «Զարշարէին զնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն գառնութեան» Արծր., Բ 6, էջ 200։

90) Սմբակակոխ առնել.—«Սմբակակոխ արարեալ զսահմանս Հայոց» Խոր., Ա 13, էջ 44. «Եւ բազում արեան ճապաղիս ի նոցանէ հեղուին սմբակակոխ արարեալ» Յովհ. կաթ., էջ 114. «Բազմութիւնք սմբակակոխ ձիոցն Մովս. Կաղան., Ա 21, էջ 81։ «Սմբակակոխս բառը ևս չի հանդիպում հնագույն երկերում։

91) Սրագլուխ.— «Իսկ արդեամբ Թերսիտեայ նմանեալ կղզի և սրագլխոյ» Խոր., Գ 19, էջ 278. «Վեպեշտի էր [Թերսիտես] և սրագլուխ և կաղ ի միոջէ ոտանէն» Թէոն, էջ 116. Նոննոս, IV, 20, 21, էջ 72 («Թերսիտէս, որ էր կաղ, և խեղ աչաւք, կորովի և լեպեշտի, լեռկ և սրագլուխ և յառաջախաւս»)։ Խորենացին օգտվել է Թեոնի կամ Նոննոսի հայերեն թարգմանություններից։

92) Սրտեայ.— «Այր սրտեայ և ուժեղ» Խոր., Բ 63, էջ 194. «Միհրդատ, այր սրտեայ և աջողաձեռն» Ջուանշ., էջ 73. «Զի էր այր սրտեայ և ուժեղ» Արծր., Բ 1, էջ 138։

93) Վերահասու.— «Եղև վերահասուս» Խոր., Բ 78, էջ 217. «Վերահասու եղաք գրելոցս առ ի քէն» Խոր., Գ 57, էջ 335. «Որչափ մեք եղաք վերահասուս» Խոր., Բ 36, էջ 161. «Վերահասուցեալս — Սոկր. Աքոլ., Ա 8, էջ 23. ունեն նաև Զքր. կաթ., Սանահն. և այլն։

94) Վերահայեցող.— «Վերահայեցողք լապիտերապէս մակագրութեանց» Խոր., Գ 62, էջ 343. «Վերհայիմ» — Զքր. կաթ. խչ. «Վերահայեաց» Թէոդոր. Կուս. Լմբ. պտրգ. «Վերահայեցողութիւն» — Դիոն. երկն. և եկեղ. Շն., Լամբ. և այլն։

95) Վերջոտնիլ.— «Ի նոյն բլուր ուսի էջն՝ վերջոտնեալ ելանէր» Խոր., Ա 11, էջ 36. «Որ ոչ վերջոտնեալ կալայ ամօթով ոյնոյն տեղին» Արծր., Ա 11, էջ 134. «Բայց Աշոտ վերջոտնեալ հանդերձ Վահանաւ՝ եկն եհաս խաղաղութեամբ» Արծր., Գ 16, էջ 343. «Վերջոտնեալ եկն բանակեցաւ յԱրտաշեսեան ավանին» Արծր., Գ 18, էջ 348. ունեն նաև Նանայ. Սկևռ. և այլն։ «Վերջոտնիլ» կարող է լինել. ուշ շրջանի բառ։

96) Վիթխարի.— «Ցաղթանդամք մարմնով և վիթխարիք» Խոր., Ա 9, էջ 31. «Վիթխարի հասակաւ և ուժով» Խոր., Բ 8, էջ 114. «Ընդ վիթխարի սկայիցն միակամեալ» Յովհ. կաթ., էջ 14. ունեն նաև Յովհ. Իմաստ. Պալ. և այլն։ «Վիթխարա» արմատը չի պատահում հնագույն երկերում։

97) Վսեմանալ.— «Զմիտան վսեմացեալս» Խոր., Գ 69, էջ 363. «Վսեմակուն» — Յովհ. կաթ., էջ 265. ունեն նաև Անան. եկ. և այլն. «Վսեմապետ» — Արծր., Գ 29, էջ 399. «Վսեմախոհութիւն» — Պատմ. Աղեքս., էջ 129. «Վսամ» — Մովս. Կաղան., Ա 26, էջ 102. «Վսեմարփիս» — Թէոդ. խչ. «Վսեմագոյն» — Գիրք թղթ., էջ 381։ «Վսեմ» կամ «Վսամ» արմատը, ինչպես և նրանից կազմված բարդությունները, համարվելու են, հավանորեն, հետին շրջանի բառեր. համեմատ Աճառյան, Արմատ. բառ.։

98) Տափակքիթ.— «Կոպտարանձն և տափակքիթ (տափաքիթ)» Խոր., Բ 8, էջ 114. «տափաքիթք, լայնեռնքք» Խոր., Աշխ, էջ 615 (Վենետիկ, 1843 թ.) «Տափաքիթ», հավանորեն, ուշ շրջանի բառ է։

99) Տիզերակալ, տիեզերակալութիւն.— «Որպէս տիեզերակալին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» Խոր., Բ 88, էջ 238, «Վկայութիւնք տիեզերակալութեանն Արտաշիսի» Խոր., Բ 13, էջ 123. «Աղեքսանդր Փիլիպպեայ տիեզերակալեալ բազմաց» Յովհ. կաթ., էջ 23. «Եւ վասն զի տիեզերակալութեամբ խմն ձեռներէց լինէր [Արշակ քաջ]» Յովհ. կաթ., էջ 24. «Թագաւորեալ Աղեքսանդր Մակեդոնացի տիեզերակալութեամբ» Արծր., Ա 6, էջ 79. «Հաճամարէն տիեզերակալեաց ամս էր» Արծր., Ա 6, էջ 80. ունեն նաև Վրք., Ագաթ., Լմբ. և այլն։ Մատնանշված այս բառերը չեն հանդիպում հնագույն երկերում։

100) Քաջազդի.— «Ընդ քաջազդոյ կոյս օրիորդիս Ալանացւոյ» Խոր., Բ 50, էջ 178. «Խոյսարարածակ քաջազդի» Արծր., Գ 29, էջ 427. «Բարեխնամող քաջազնեայ, յաւետաբարգաւաճ զորուսոր ապուհի պատրիկ տէր Ջիւանշիրոյ» Մովս Կաղան., Բ 30, էջ 239։

101) Քարտուղար, քարտուղարութիւն.— ունեն Խոր., Բ 67, էջ 202, Բ 60, էջ 190. Գ 47, էջ 316. Գ 52, էջ 325. Յովհ. կաթ., էջ 53, 193, 203, 204. Պատմ. Հռիփս., էջ 297. Պատմ. Ներս., էջ 28, Խոր. և այլն։ Ուշագրավ է, որ այս բառերը հները չեն գործածել։

102) Քուաւոր.— «Եւ ի վերուստ պաղանձաւ քուաւորս» Խոր., Գ 45, էջ 314. «Հասեալ ի տեղի ապառաժ քուսւորս» Արծր., Ա 1, էջ 46։

103) Օթանոց.— «Ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեացս» Խոր., Բ 92, էջ 248. «Սկսան ամենեքին մտանել ի քուն յանձնիւր օթանոցն» Արծր., Գ 20, էջ 361. ունի նաև Սոկր. «Օթոց» — «Ընդառ ննջէին յիւրաքանչիւր վրանաց օթոցին» Արծր., Գ 11, էջ 310. «Ի տեղւոջ օթոցին» Արծր., Գ 16, էջ 341. «Օթարան» — Խոր., Բ 74, էջ 212. ունեն նաև Շնորհ. Յս. Որդի և այլն։ Հնագույն երկերում գործ է ածված «Օթեան» բառը։

104) Օտարանոց.— «Սահմանէ և յամենայն դիւղս վանս շինել, զի լինիցին օտարանոցք» Խոր., Գ 20, էջ 280. «Վարդէ և վանորայս և օտարանոցս և հիւրանոցս և տնանկանոցս» Յովհ. կաթ., էջ 46. «Այլ հրամայեաց զվանորայսն քակել և զօտարանոցսն» Մեսր. երէց, էջ 116։

105) Շատխօսութիւն.— «Շատխօսութեանն հոսանք» Խոր., Բ 92, էջ 249. ունի նաև Արծր., Գ 10, էջ 292։

Բացի վերև մեջ բերված բառերից, որոնց մեծագույն մասը համարվելու են մատենագրական ուշ շրջանի բառեր՝ կասկածելի են,

իմ կարծիքով, և կարող են հատուկ քննության նաև մի ստվար մասը Խորենացու Պատմության մեջ գործածված հետևյալ բառերի.

1. «արագաբանություն» Ա 32, էջ 87։ — 2. «արդարախոսող» Ա 6, էջ 23։— 3. «աւարտաբանություն» (վերնագիր), էջ 257։— 4. «բարձրահասակ» Ա 26, էջ 75։— 5. «բքքարբ», «բքքաթիր» Գ 68, էջ 365։— 6. «գթածություն» Գ 57, էջ 333։— 7. «դառնահոտ» Բ 39, էջ 165։— 8. «դեղակուր» Բ 87, էջ 235։— 9. «դժուարահաւաք» Ա 5, էջ 17։— 10. «դիւանագիրք» Ա 3, էջ 10։— 11. «երգարան» Ա 3, էջ 11։— 12. «երկարոգի» Գ 54, էջ 328։— 13. «երկայնանիստ» Ա 10, էջ 33։— 14. «երթևեկություն» Ա 15, էջ 49։— 15 «էշ» (պատերազմական մեքենա) Գ 28, էջ 290։— 16. «ընդվզիլ» Բ 79, էջ 218 (նույն այս բառի հնագույն իմաստը տարբեր է)։— 17. «թուլասրտություն» Գ 9, էջ 266։— 18. «լայքա» Բ 50, էջ 179։— 19. «լաւակամ» Գ 67, էջ 356։— 20. «կականումն» Բ 83, էջ 227։— 21. «կծիլիք» Գ 68, էջ 364։— 22. «կծեմ» Գ 68, էջ 364։— 23. «կոդմնապետ» Ա 14, էջ 46. 17, էջ 55։— 24. «համաթիւ» Բ 82, էջ 225։— 25. «համբերողական» Գ 67, էջ 357։— 26. «համբաւատենչ» Գ 62, էջ 344։—27. «հայրենատէր» Ա 13, էջ 43։— 28. «հարկապահանջ» Ա 24, էջ 72։— 29. «հարկեցուցանեմ» Գ 65, էջ 353։— 30 «հարստի» Բ 37, էջ 162։— 31. «հնարաւորություն» Ա 27, էջ 78։— 32. «հնգապատիկ» Բ 88, էջ 238։— 33. «ձիմակիր» Բ 7, էջ 111։— 34. «ձեռնտություն» Բ 7, էջ 110։— 35. «մետաքսագործ» Բ 33, էջ 152։— 36. «նախագուխ» Բ 19, էջ 278։— 37. «նորատի» Ա 13, էջ 43։— 38. «շամփրեմ» Ա 30, էջ 82։— 39. «շատակեր» Ա 12, էջ 39։— 40. «շատահանձար» Ա 20, էջ 63։— 41. «ոստչիմ» Բ 37, էջ 304։— 42. «ուսումնատեաց» Բ 92, էջ 248։— 43. «չարաբանեմ» Գ 64, էջ 348։— 44. «պտուտիմ» Բ 37, էջ 304։— 45. «պասրություն» Գ 68, էջ 363։— 46. «պատառաքաղ» Բ 47, էջ 174։— 47. «պետանամ» Գ 36, էջ 302։— 48. «չերմահոտ» (չերմահոտիտ ?) Բ 6, էջ 108։— 49. «չրաւոր» Բ 7, էջ 264 (հնագույն իմաստը տարբեր է)։— 50. «անաղգեստ» Բ 60, էջ 191։— 51. «սիպանոն» Բ 83, էջ 226։— 52. «սպուդէք» Գ 49, էջ 320։— 53. «ստրատելատ» Գ 36, էջ 302. 48, էջ 317. 57, էջ 335. 58, էջ 337 և այլն։— 54. «սեբտիմ» Բ 81, էջ 244։— 55. «վատթարաբզգի» Բ 63, էջ 195։— 56. «տարգալ» Բ 47, էջ 174։— 57. «տմարդի» Գ 68, էջ 364։— 58. «փառամոլ», «փառամոլություն» Գ 63, էջ 347. Բ 92, էջ 248։— 59. «քարաբգայթն» Բ 4, էջ 106։— 60. «քարակտուր» Բ 39, էջ 165։



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Հայ ժողովրդի դիտական-ստեղծագործական միտքը հին և միջին դարերում ունեցել է շորս ականավոր ներկայացուցիչներ՝ շորս խոշոր այուններ, որոնց վրա բարձրացել է անցյալի գիտական մեր ողջ մատենագրությունը— մենք նկատի ունենք Անանիա Շիրակացուն, Գրիգոր Մագիստրոսին, Հովհաննես Իմաստասերին և Հովհաննես Երզնկացուն։

Այդ խոշոր գիտնականներից մեկի՝ Անանիա Շիրակացու մասին մենք խոսել ենք մեր նախորդ դասախոսություններից մեկում։ Երկրորդ խոշոր գիտնականը, որի ստեղծագործության հետ ցանկանում ենք ձեզ ծանոթացնել, այդ Հովհաննես Իմաստասերն է— 12-րդ դարի հայ ականավոր գիտնականներից մեկը, որը մեր մատենագրության մեջ հայտնի է նաև «Սոփեստես», «Պոետիկոս» և «Սարկավագ» մականուններով։

Հանձին Հովհաննես Իմաստասերի մենք ունեցել ենք, իրոք, խոշոր մի գիտնական, մի հանճարեղ հեղինակություն։ Նրա ժամանակակիցներից մեկը՝ Կիրակոս Գանձակեցին, որ մոտից ծանոթ է նրա գիտական ստեղծագործություններին հետ, հետևյալ ձևով է բնութագրել նրան. «...Մեծիմաստն գիտութեամբ բան զյոլովս և հանճարեղն ամենայնի՝ մտահարուստն Յովհաննէս», ժամանակակից մեր գիտնականները Հովհաննեսին համարում են «խուզախնդիր և որոնող» հեղինակ, որը բարձր է կանգնած իր ժամանակակիցներից։ Ոմանք նույնիսկ նրա անվան հետ են կապում Հայկական վերածննդի առաջին շրջանը։ Այս մասին խոսք կլինի մեր մի այլ դասախոսության մեջ։

Հովհաննես Իմաստասերի գրական ժառանգության ուսումնասիրությունը մեծ պատմություն ունի։ Հ. Ղ. Ալիշանն առաջինն է, որ հրատարակել է նրա բանաստեղծություններից մեկը՝ «Սարյակը», «Բաղմավէպ» ամսագրում, 1847 թվին։ Այնուհետև Հ. Ալիշանը մեր հեղինակին անդրադարձել է իր «Ցուշիկք Հայրենեաց Հայոց» աշխատության երկրորդ հատորում՝ «Յովհաննէս Սոփեստէս» խորագրի տակ։ Հ. Ղ. Ալիշանն աշխատել է ցույց տալ, որ հանձին Հովհաննես Իմաստասերի մենք ունենք «Բնատուր մեծ հանճար՝ կրթությամբ և երկար ուսմամբ կրկնակի մեծացած և զորացած, բարակամիտ ըմբռնումն և վարպետ բացատրություն, լեզու արվեստավոր՝ բայց հատակ և հայկաբան, արտաքին և ասավածային գիտությանց հմտություն, քաջախոհ դատողություն, վսեմ և անխռով ոգի՝ ան-

* Պրոֆ.-դոկտ. Ա. Գ. Աբրահամյանի այս դասախոսությունը նրա Անթիլիասի Կաթողիկոսարանի Կյուլպենկյան սրահում տված հայագիտական դասախոսությունների շարքից 7-րդն է, կարդացված 1955 թվականի փետրվարի 10-ին։

խոնջ, հետաքնին և սիրող ստուգության, պատկառելի ծանրության հետ զվարճախառն ընտանություն։

Ալիշանից հետո, Հովհաննես Իմաստասերի մատենագրությամբ հանգամանորեն, ձեռագրական տվյալների հիման վրա, զբաղվել է Հ. Ոսկյանը, և իր ուսումնասիրության արդյունքները, երկու ընդարձակ հոդվածներով՝ «Հովհաննես Սարկավագի կյանքը» և «Հովհաննես Սարկավագի գրությունները», հրատարակել «Հանդէս ամսօրեայի» մեջ 1925 թվականին։

Հովհաննես Իմաստասերով լուրջ զբաղվել են նաև՝ պրոֆ. Մ. Արեղյանը, Հ. Գ. Ջարբհանելյանը, դոկտ. Ե. Տեր-Մինասյանը, պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկը և ուրիշները։

Ավելի մոտ ժամանակներում Հովհաննես Իմաստասերի մատենագրությամբ զբաղվել ենք նաև մենք— Շիրակացու մատենագրության ուսումնասիրությունն ավարտելուց հետո, մեր ուսումնասիրության հիմնական թեման, կարելի է ասել, հանդիսացել է Հովհաննես Իմաստասերի գիտական մատենագրությունը։ Մեր կատարած ուսումնասիրության մի մասը մենք հրատարակել ենք Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում, իսկ ամբողջական ձևով, նորահայտ բոլոր տեքստերի հետ միասին, նախատեսված է այս տարի հրատարակել Երևանի Պետական համալսարանի կողմից։

Անցնելով բուն նյութին, մենք պետք է ասենք, որ մի դասախոսությամբ դժվար է սպառել Հովհաննես Իմաստասերի մատենագրության թեման— Հովհաննեսը մեր թալմավաստակ այն հեղինակներից մեկն է, որի համար ոչ թե մեկ դասախոսություն է պետք, այլ դասախոսությունների մի ամբողջ շարք, ուստի և չցրվելու համար, որոշել ենք ձեզ ծանոթացնել մեր հեղինակի կարևոր աշխատությունների հետ, ինչպես և ցույց տալ՝ թե ի՞նչ է կատարված եղել մեզանից առաջ և ի՞նչ ենք արել մենք Հայաստանի Պետական մատենադարանի ձեռագրերի ուսումնասիրության հիման վրա. ո՞րն է եղել մեր համեստ մուծումն այդ գործում։

Սկսենք Հովհաննես Իմաստասերի կենսագրությունից։

***

Հովհաննես Իմաստասերի կենսագրությամբ զբաղվող բոլոր բանասերները՝ և՛ Հ. Ալիշանը, և՛ Հ. Ոսկյանը, և՛ նաև պրոֆ. Աբեղյանը, գանգատվել են, որ այս խոշոր գիտնականի կենսագրության մասին կցկտուր տեղեկություններ են պահվել. նրան ժամանակակից կամ մոտիկ ժամանակակից հեղինակները՝ Սամվել քահանա Անեցին (Հովհաննեսի աշակերտը), Մխիթար Այրիվանեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և մյուսները, կցկտուր տեղեկություններ են հաղորդում մեզ և նրանց հիման վրա դժվար է ամբողջական պատկեր կազմել մեծ գիտնականի վաստակների մասին։

Մեր հայագետներից Հ. Ղ. Ալիշանն առաջինն է եղել, որ ենթադրություն է արել, թե Հովհաննես Իմաստասերը պիտի որ ունեցած լինի իր կենսագրությունը. Հովհաննեսին ժամանակակից և նրանից հետո աչքի ընկնող հայ գրեթե բոլոր մատենագիրները ունեցել են իրենց կենսագրականները— ուստի չէր կարող պատահել, որ Հովհաննես Իմաստասերը՝ այդ խոշոր գիտնականը ունեցած չլիներ նման կենսագրական։ Եվ նա համոզմունք է հայտնել, որ մեր հեղինակի աշխատավայրերում՝ Հաղբատ և Սանահին վանքերում գրված ձեռագրերում, պիտի՞ որ երևի գտնվի Հովհաննեսի կենսագրությունը։

Հ. Ալիշանի կռահումը վերջերս իրականություն դարձավ. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերից մեկում, իրոք, գտնվեց մեր խոշոր գիտնականի կենսագրությունը, սակայն գտնվեց ո՞չ թե Հաղբատ-Սանահնում գրված մի ձեռագրում, ինչպես ենթադրել էր Հ. Ալիշանը, այլ Սիսիանի շրջանի պատմական Անգեղակոթ գյուղում 1378 թվականին գրված մի ձեռագրում։ Ձեռագրի ընդօրինակող գրիչն է Մատթեոս երեցը։ Կենսագրության կազմողը թեպետ չի թողել իր անունը, սակայն դատելով նրա մի քանի ակնարկներից՝ որ նա կենսագրությունը կազմել է որպես ականատես և ականջալուր հեղինակ, որ նա տեսել և խոսել է Հովհաննեսին ծանոթ մարդկանց հետ և այլն, պետք է ենթադրել, որ նա հանդիսացել է Հովհաննեսին ժամանակակից անձնավորություն։

Հովհաննես Իմաստասերի կենսագրականը վերնագրված է՝ «Հանդէս բանից վասն երանելոյ առն Աստուծոյ Սարկաւագին կենաց, և մահուն և այլոց նուպ յայն ժամանակս»:

Այս կենսագրականը, որ բացառիկ պատմական արժեք ունի, հրատարակել է վերջերս Գարեգին Կաթողիկոսի «Հիշատակարանների մեջ պ. Ս. Սիմոնյանը՝ սասունցի այդ շնորհալի և մեղվաջան հայագետը։

Այդ կենսագրությունը բավականաչափ նորություններ բերեց մեզ։ Նա, ամենից առաջ, օգնեց մեզ պարզելու՝ թե ո՞րտեղից է Հովհաննես Իմաստասերը։ Մինչև այժմ ենթադրում էինք, որ նա Փառիսոսից է (Փառիսոսը գտնվել է Գանձակի շրջանում)։ Կենսագրությունից պարզվեց, որ Հովհաննես Իմաստասերը ո՛չ թե Փառիսոսից է, այլ անեցի, Անի քաղաքից, ուր և նա ծնվել է, սնվել և մեծացել։ Ինչպես երևում է, Փառիսոսը եղել է նրա մոր ծննդավայրը, իսկ մեր մատենագրերը, թյուրիմացաբար, այն շփոթել են Հովհաննեսի ծննդավայրի հետ։ Կենսագիրը պարզորոշ ձևով Անին համարում է «քաղաք իւր», «տեղի սնունդեան»։

Նորահայտ այս կենսագրականից երևում է, որ Հովհաննեսը իր երիտասարդ հասակից տչքի է ընկել բացառիկ ընդունակություններով և աշխատասիրությամբ։ Կենսագիրը բերում է Հաղբատի այրի հետ կապված նշանավոր այն միջադեպը, որը հիշատակված է նաև Կիրակոս Գանձակեցու մոտ— Հովհաննեսն իր ընկերների հետ մտնում է վանքի այրը՝ ձեռագրեր ուսումնասիրելու համար. աշխատանքը վերջացնելուց հետո, երբ դուրս են գալիս այրից, պարզվում է, որ Հովհաննեսը կորել է։ Սկսում են փնտրել նրան, բայց չեն գտնում։ Օրեր հետո, երբ բաց են անում այրի դուռը և ներս մտնում, Հովհաննեսին տեսնում են ձեռագրերի վրա հանգիստ աշխատելիս։ Երբ նրան հարցնում են, թե ի՞նչ է կերել և խմել այդ օրերին, նա ցույց է տալիս իր կարդացած ձեռագրերը և պատասխանում. «Այդ է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաւուրս զայսոսիկ»։ Կենսագիրն այս մանրավեպը բերել է բարոյախոսական նպատակով։

Նշված կենսագրականի պարունակած պատմական տեղեկություններից բացառիկ արժեք ունեն նրանք, որոնք վերաբերում են Հովհաննեսի Անիում հիմնած դպրոցին։ Մինչև վերջերս մեզ համար անլուծելի առեղծված էր մնում այն հարցը, թե ինչպե՞ս է որ Անին հազար ու մի եկեղեցի է տվել, բայց ոչ մի դպրոց։ Լեռն մի տեղ իրավացի դիտել է տվել մեզ այդ։ Այդ առեղծվածը ավելի խճճվեց ակադ. Մառի Անիում կատարած պեղումներից հետո, երբ հայտնաբերվեցին հրաշալի հուշարձաններ, մշակույթի աննման նմուշներ։ Անհասկանալի էր մնում՝ թե ինչպես է, որ Անին այնպես հրաշալիքներ է տվել, բայց ոչ մի դպրոց. նյութական կուլտուրայի տվյալները և մատենագրական տեղեկությունները հակասում էին իրար։ Հովհաննես Իմաստասերի կենսագրությունից պարզվեց, որ Անին ունեցել է ո՛չ միայն դպրոց, այլև բարձրագույն ուսումնարան, համալսարան, և նրա ղեկավարն է հանդիսացել մեր մեծ գիտնականը՝ Հովհաննես Իմաստասերը։ Ըստ կենսագրի վկայության, Հովհաննեսի հիմնած այդ բարձրագույն դպրոցը մեծ համարում ուներ իր ժամանակին. Հայաստանի բոլոր շրջաններից ուսանողները գալիս էին սովորելու Հովհաննեսի մոտ և, կենսագրի խոսքերով ասած, լեցնում իրենց «մտքի քսակները» և վերադառնում էին իրենց բնակավայրերը՝ որպես գիտության քարոզիչներ։

Հովհաննեսի հիմնած բարձրագույն դպրոցում դասավանդվել են իր ժամանակի դիտական ամենակարևոր առարկաները՝ Փիլոնի երկրաչափությունը, Արիստոտելի փիլիսոփայությունը, բարձրագույն տոմար, տիեզերագիտություն, աստղաբաշխություն և գիտական այլ առարկաներ։

Այսպիսով, նոր տվյալները եկան լրացնելու, բացատրելու պեղումների տվյալները, առանց որի, իրոք, չէին կարող առեղծվածներ չառաջանալ։

Հովհաննես Իմաստասերի այս կենսագրությունից վերջնականապես ճշտվեց նաև նրա մահվան թվականը. պարզվեց, որ նա իրոք մահացել է 1129 թվին, մի թվական, որի շուրջը երկար վեճեր են եղել։ Այս կենսագրականից պարզվեցին Հովհաննեսի անձնավորության հետ կապված այլ հարցեր ևս։ Այսպես, վիճում էին այն մասին, թե ովքեր

են եղել նրա ծնողները. պարզվեց, որ Հովհաննեսի հայրը եղել է քահանա։ Վիճում էին Սարկավագ մականվան մասին. պարզվեց, որ Հովհաննեսը փոքր հասակից եկեղեցի է մտել, սարկավագ ձեռնադրվել, որը և մականուն է դարձել և այլն։

Նորահայտ այս կենսագրականի մասին բանասիրական ասելիքներ շատ ունենք, սակայն ժամանակ չունենալու պատճառով, հարկադրված ենք անցնել մյուս հարցերին։

***

Պատմիչների տեղեկություններից հայտնի է, որ Հովհաննես Իմաստասերը ունեցել է պատմական աշխատություններ ևս։ Գիտենք, որ Սամվել Անեցին, նրա աշակերտը, աչքով տեսել է իր ուսուցչի պատմական աշխատություններից մեկը և նրանից քաղվածքներ արել իր ժամանակագրության մեջ։ Հովհաննեսի այդ աշխատությունը, ուր շարադրված են եղել սելջուկյան առաջին նվաճումները Տուղրիլ բեկի գլխավորությամբ, դժբախտաբար, կորած է մեզ համար։ Անեցու օգտված և բերած մի հատվածի հիման վրա հայագետներից Հ. Ալիշանը, Հ. Ոսկյանը և պրոֆ. Աբեղյանը իրավացի գտել են, որ Հովհաննեսի այդ կորած աշխատությունը մեծ արժեք ունեցող պատմական երկ է հանդիսացել։ Դժբախտաբար, մեր ձեռագրական պրպտումները ապարդյուն անցան— կարելոր ոչինչ չկարողացանք գտնել։ Այնուամենայնիվ, մենք դեռ մեր հույսերը բոլորովին չենք կտրել, և ամեն անգամ, երբ նոր ձեռագիր ենք տեսնում, դողացող ձեռքերով թերթում ենք մեծ հույսով, և սպասում, որ ահա մի խունացած ձեռագրի էջերում պիտի՝ որ գտնվեն մատենագրական մեր կորուստները, այդ թվում և Հովհաննեսի պատմական աշխատությունները։

Ուսումնասիրության ընթացքում մեր ցավը, պետք է հայտնեմ, կրկնապատկվեց, որովհետև պարզվեց, որ Հովհաննես Իմաստասերը ունեցել է ո՛չ թե մի պատմություն, այլ՝ երկու— մեկը բովանդակել է սելջուկյան արշավանքները դեպի Արևմուտք և Հայաստան, իսկ մյուսը՝ Մելիք շահի պատմությունը։ Այնպես որ՝ մեր կորուստը ո՛չ թե մեկն է, այլ երկուսը։ Սամվել Անեցին իր ժամանակագրությունը կազմելիս ձեռքի տակ ունեցել է Հովհաննեսի պատմական աշխատությունը և օգտվել նրանից, իսկ երկրորդը՝ Մելիք շահի պատմությունը ձեռքի տակ չի ունեցել։

Հովհաննես Իմաստասերի կորած պատմությունից մի հատված հայտնաբերվել է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի Հաղբատ-Սանահնի «Քյոթուկ» կոչվող ձեռագրում։ Այդ ձեռագիրը «Քյոթուկ» է կոչվում այն պատճառով, որ հանդիսացել է վանքի մայր մատյանը. սովորություն է եղել այդ ձեռագրում գրանցել գնված կամ նվեր ստացված վանքի կալվածական ձեռքբերումները։ Ահա այդ ձեռագրի ներածական մասում շարադրված է Հաղբատի պատմությունը, որի հեղինակը որպես պատմական սկզբնաղբյուր մատնացույց է արել Հովհաննես Իմաստասերի պատմությունը և բերել նրանից մի հատված։ Այդ հատվածում տեղեկություն կա այն մասին, թե ինչպես Դավիթ Կյուրապաղատը Հաղբատի վանքում գտնված ժամանակ սելջուկները շրջապատել են վանքը, իսկ վանքի վանահայրը փախցրել է Դավթին։ Դեպքը տեղի է ունեցել 1110 թվականի օգոստոսի 13-ին։

Եթե չհաշվենք այս փոքրիկ հատվածը, կրկնում ենք, Հովհաննես Իմաստասերի պատմական աշխատությունների որոնումների ուղղությամբ մեր և մեր կոլեգաների կատարած պրպտումները անցել են ապարդյուն։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում գտնվում է մի ձեռագիր, որի վրա կասկածներ ունենք՝ որ նա կարող է Հովհաննեսի պատմական երկերից մեկը պարունակել, բայց ձեռագիրն անձամբ չենք տեսել և կռահում ենք Հ. Բ. Սարգսյանի կազմած ցուցակի հիման վրա, որը կարող է և ճիշտ չլինել։

Հովհաննես Իմաստասերը գրել է նաև մի եկեղեցական պատմություն, որի մի հատվածը պահել է մեր Մատենադարանի ձեռագրերից մեկը։ Այդ տեքստը, ինչպես պարզվեց, առանձին արժեք չունի և տառացի արտագրություն է Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական պատմությունից։

***

Հովհաննես Իմաստասերի աշխատություններից ամենից արժեքավորը, մեր կարծիքով, հանդիսանում է նրա մաթեմատիկական աշխատությունը, որը կրում է «Ցաղագս անկիւնաւոր թուոց» վերնագիրը։ Այս աշխատությունը թեպետ մեկնից առաջ հիշված է Հ. Ալիշանի, Հ. Ոսկյանի և այլ ուսումնասիրողների մոտ, բայց հիշված է սխալ ոգիտակի տակ։ Վերև հիշված ուսումնասիրողները, ինչպես երևում է, ծանոթ չլինելով Հովհաննեսի այս աշխատության բովանդակության հետ, այդ տեքստը համարել են առմարական տեքստ։ Սխալվել է նաև հանգուցյալ Բարգեն կաթողիկոս Կյուլեսերյանը, որն իր «Հայու հնագույն դասագիրք» վերնագրով հոդվածում, որ տպագրվել է Ա. Զոպանյանի «Անահիտի մեջ, այն կարծիքն է հայտնել, որ իբր այդ տեքստը քերականություն է։ Իրականության մեջ, այդ տեքստը ո՛չ տոմար է և ո՛չ քերականություն, այլ մաթեմատիկական շատ լուրջ մի աշխատություն։

Հովհաննեսի «Ցաղագս անկիւնաւոր թուոց» այս աշխատությունը մեզ է հասել մոտ բան ձեռագրերով, որոնք ցրված են մի շարք մատենադարաններում։ Մեզ հասած և հայտնի ընդօրինակություններից լավագույնները հանդիսանում են Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1770 և 2595 ձեռագրերը և երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանի № 157 ընդօրինակությունը. այս ձեռագրերի տեքստերը և՛ հին են և՛ ամբողջական։

Հովհաննես Իմաստասերի այս աշխատությանը, որպես մաթեմատիկական գործ, առաջին անգամ անդրադարձել ենք մեր «Յորերորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու թվաբանական դասագիրքը» խորագրով աշխատության մեջ 1939 թվին։ Երկու տարի հետո, նրա վրա կանգ է առել դոց. Տ. Գ. Թումանյանը «Ա. Շիրակացու անկյունավոր թվերի աղյուսակի մասին» խորագրով հոդվածում, որ տպագրվել է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածուի № 1-ում։ Վերջերս այս տեքստի մաթեմատիկական արժեքը վեր հանելու տեսանկյունով հանդամանորեն զբաղվել է դոց. Գ. Պետրոսյանը. նրա ուսումնասիրությունը հրատարակվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» մեջ։

Հովհաննես Իմաստասերի «Ցաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը սկզբից ունի փոքրիկ ներածական, որից երևում է, որ նա դասագիրք է հանդիսացել։ Հովհաննեսն իր ներածականում հայտնում է, որ գրում է աշակերտների համար և ցանկանում է, որ աշակերտները ջանասիրությամբ սովորեն և խորանան մաթեմատիկայի մեջ։

Այնուհետև, Հովհաննես Իմաստասերը իր այդ ներածականում հայտնում է, որ իր աղյուսակները երեք շարք ունեն՝ առաջին շարքում տեղադրված են «արմատ» և «բողբոջ» կոչվող թվերը, իսկ մյուս երկուսում շարադրված են արտադրյալները առանձին-առանձին։ Նա հայտնում է, որ իր կազմած թվերի շարքը հասցված է մինչև 20-րդ աղյուսակը, որից հետո ցանկացողը կարող է իր ուզածի չափ նույն սկզբունքով շարունակել։ Ներածականին հաջորդում է բացատրական մի տեքստ անկյունավոր թվերը կազմելու սկզբունքի մասին։

Այնուհետև բացատրական այդ տեքստին հաջորդում են արմատի և բողբոջների եռանկյունու աղյուսակները, որոնք ձեռագրերում ընդօրինակված են երկու տարբեր խմբագրությամբ՝ մեկում շարադրված են լայնքով, իսկ մյուսում՝ երկարությամբ։

Հովհաննեսի «անկյունավոր թվերը» կազմված են հետևյալ սկզբունքով.

Եռանկյունի	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ
	Ա	Գ	Զ	Ժ	ԺԵ	ԻԱ	ԻԸ	ԼԶ	ՄԵ	ՄԵ	ԿԶ	ՀԸ
Քառանկյունի	Ա	Գ	Ե	Է	Թ	ԺԱ	ԺԳ	ԺԵ	ԺԷ	ԺԹ	ԻԱ	ԻԳ
	Ա	Դ	Թ	ԺԶ	ԻԵ	ԼԶ	ԻԹ	ԿԴ	ՁԱ	Ձ	ՁԻԱ	ՁՄԴ

եռանկյունին այս սկզբունքով շարունակվում է մինչև 14-րդ անկյունը։

Հովհաննես Իմաստասերի անկյունավոր թվերը կարելի է հետևյալ երկրաչափական ե բառանկյունի ձևով արտահայտել.



Երկրաչափական գծագրությամբ, այդ թվերը կարելի է արտահայտել և այս ձևով.



Եռանկյուն թվերի աղյուսակներին հաջորդում են եռանկյան արմատների և քառքոշի աղյուսակները՝ շարադրված առանձին-առանձին։

Հարց է առաջանում՝ Հովհաննես Իմաստասերը ի՞նքն է հորինել «Ցաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը, թե՞ օգտվել է ուրիշից։ Մեր կարծիքով, Հովհաննեսը թվաբանական և երկրաչափական նոր սիստեմ չի ստեղծել, այլ օգտվել է հույն հեղինակներից։ Դոց. Թոմանյանի կարծիքով, Հովհաննես Իմաստասերի սկզբնաղբյուրն է հանդիսացել հույն մաթեմատիկոս Նիկոմախը։ Դոց. Գ. Պետրոսյանը պարզել է, որ Հովհաննես Իմաստասերը, բացի Նիկոմախից, օգտվել է նաև Փիլոնից՝ նրա «Ցաղագս տասն բանիցն» աշխատությունից։

Հովհաննեսի «Ցաղագս անկիւնաւոր թուոցի» ձեռագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ հեղինակի տվյալ աշխատության վրա հետագայում, ընդօրինակողների կողմից, կատարվել են որոշ լրացումներ, որոնք նույնպես արժեքավոր են մաթեմատիկայի պատմության համար։

Հովհաննեսի «Ցաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը մեզ համար արժեքավոր երկ է, ամենից առաջ, այն տեսակետից, որ նա ցույց է տալիս, թե դիտական գրականությունը, մասնավորապես մաթեմատիկան, զարգացման ի՞նչ աստիճանի վրա է գտնվել Հայաստանում միջին դարերում։ Պարզվում է, որ հունարենից հայերեն են թարգմանված եղել Պյութագորասի, Փիլոնի, Նիկոմախի, Էվկլիդեսի և այլ հեղինակների մաթեմատիկական աշխատությունները, ինչպես և տեղում գրվել են մաթեմատիկական ինքնատիպ տեքստեր։

Հովհաննես Իմաստասերի «Ցաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը արժեքավոր է նաև անցյալում մեզ մոտ գոյություն ունեցող հաշվարկումների սիստեմը, գործածվող տերմինները և թվաբանական նշանները պատկերացնելու տեսակետից։

***

Ուսումնասիրությունները պարզել են, որ Հովհաննես Իմաստասերը հանդիսացել է նաև խոշոր փիլիսոփա։ Պատահական չէ, որ նրա մի շարք աշխատությունների խորագրերում նա հիշված է «սոփեստեսն», այսինքն՝ փիլիսոփա մականունով։ Ընդհանրապես, հին և միջին դարերում, փիլիսոփա իմաստասեր արտահայտող երեք տերմին է գործածվել հայ մատենագրության մեջ՝ «փիլիսոփա», «իմաստասեր» և «սոփեստեսն»։

Հովհաննեսի փիլիսոփա հանդիսանալու մասին ժամանակին մատնացույց է արել Հ. Ալիշանը՝ Իտալիայի Պավի համալսարանում գտնվող փիլիսոփայական բովանդակություն ունեցող 13-րդ դարի մի ձեռագրի հիման վրա, որը խմբագրված է Հովհաննես Իմաստասերի կողմից։ Հովհաննեսը խմբագրել է Արիստոտելի, Պորփյուրի, Դավիթ Անհաղթի և մի քանի այլ հին հեղինակների փիլիսոփայական աշխատությունները։ Հովհաննեսի նորահայտ կենսագրականից երևում է, որ նրա դպրոցում դասախոսվել են «արտաքին» գիտություններ, որոնց մեջ և փիլիսոփայությունը։

Հովհաննես Իմաստասերի նորահայտ աշխատություններից փիլիսոփայական բովանդակություն ունի նրա «Ցաղագս խրատու

սուղ ինչ բնախուզութեամբ» աշխատությունը։ Այս աշխատության մեջ նա ընդարձակ տեղ է տվել գոյի բնորոշմանը—«Ո՞րն է որին հաջորդել— Աստվա՞ծ նյութին, թե՞ նյութը Աստծուն։ Հովհաննեսը առաջնակարգ տալիս է Աստծուն. նա որոշակի հարում է իդեալիստական տեսակետին։ Այդ կապակցությամբ նա առանց անունները տալու քննադատում է մատերիալիստական ա՛յն փիլիսոփաներին, որոնք գտնում են, թե նյութը անեղ է և հավիտենական։ Հովհաննեսի համոզմամբ, Աստված լինելով Արարիչ, նա՛ է ստեղծել երկիրը, տիեզերքը, և ամեն ինչ։ Աստծու ստեղծագործությունից առաջ, ասում է նա, «նիւթ գոյական ոչ էր»։

Հովհաննեսը իր տոմարական աշխատություններից մեկի մեջ ընդունում է օբյեկտիվ մատերիայի գոյությունը մարդու գիտակցությունից անկախ։ Նա գտնում է նույնպես, որ խոսքը, ինչքան էլ պատշաճահարմար և պարզ լինի, իրական ճշմարտություն արտահայտել չի կարող. «ինչպես որ պատկերահանված նկարը չի կարող ճիշտ արտահայտել շարժուն կենդանին, որովհետև նա կեղծ տարբեր ունի իր մեջ, այնպես էլ խոսքը չի կարող անթերի տալ ճշմարտությունը։ Հովհաննեսի կարծիքով մեծ, տքնաջան աշխատանք է պետք ճշտելու խոսքի և իրի ստուգությունը. «Դիպաբանութիւն,— գրում է նա,—ցուցանել ոյստակ և ոյայտնի ճշմարտութիւն ոչ զաւրէ, որպէս ո՛չ պատկեր կենդանագրեալ և ստեղծեալ՝ շարժուն կենդանի, քանզի մերձ է յառասպել և վկայութիւն սուտ... աշխատութիւն և տքնութիւն ոչ դուզնաքեայ պէտք են առ ի գիտել զբնաւորութիւն բանից և իրացն»։

Նա քննադատում է տգետ այն «գիտունների», որոնք խուսափում են իրողությունը ճշմարտորեն ներկայացնելուց և արհամարհանքով նկատում՝ թե ի՞նչ օգուտ ունի երբ իրն իր իսկական կացությամբ չի ներկայացվում, քանի որ անկախ նրանից, թե մենք ներկայացնում ենք այն իր իսկական կացությամբ թե ոչ, իրն իր սեփական հատկությամբ գոյություն ունի անկախ մեր կամքից. «Արդ, զի՞նչ օգուտ բերէ բանիւն ոչ ասել իրին հաստատապէս կացելոյ,— գրում է նա,— քանզի առէ բան և եթէ ոչ, իրն անսխալ ունի զիւրոյ յատկութիւնս»։

Նույն աշխատության մեջ Հովհաննեսը, մի այլ տեղ, խոսելով խոսքի և իրի փոխհարաբերության մասին, գտնում է, որ մենք հակառակ շաղակրատ խոսակցությամբ զբաղվող «գիտունների», ոչ թե խոսքը պիտի հակադրենք իրին, այլ, հակառակը, իրը ուշադիր քննությամբ, հարազատ ձևով բացահայտենք. «...Ոչ է պարտ,— գրում է նա,— հայիլ ի բանից շաղակրատանս, թէպէտ և հաւանական թուեսցի, եթէ բանն նշանակ իրին է (այսինքն՝ խոսքը արտահայտիչն է իրին— Ա. Ա.), ոչ է իրաւացի հակառակ իրացն արտաբերել, այլ մանաւանդ ստուգութեամբ առաւել քննութենէ առանց մոլորութեան զնոյն յանդիման կացուցանել»։

Հովհաննես Իմաստասերի վերև հիշված երկու տեքստերում, ինչպես և իր մյուս աշխատությունների մեջ, հատուկ շեշտվածությամբ տրվում է փորձի և կրթության նշանակությունը հասարակական կյանքում։ Այսպես օրինակ, նա իր տոմարական աշխատության մեջ խոսելով գիտությունների և արվեստների աստիճանաբար առաջ գնալու մասին, գտնում է, որ նրանց զարգացումը կատարվում է առավելագույն վարժման և աշխատասիրության շնորհիվ, սխալները աստիճանաբար ուղղվում են կրթության միջոցով «...Ամենայն մակացութիւն և արուեստ,— գրում է նա,— մի ըստ միոջէ ի յայտ գան յառաւելագոյն վարժմանէ, և ի չիրմ աշխատասիրութենէ աճեալ գեղեցկանան։ Նա և ուղղել սխալման լինի ի կրթասիրութենէ»։

Հովհաննես Իմաստասերի կողմից փորձի, որպես իմացության կարևոր աղբյուրի տեսության առաջ քաշումը գիտական խոշոր նշանակություն ունեցող հարց է։ Արևմտաեվրոպական գիտնականները այդ հարցն առաջադրեցին մի քանի դար հետո, վերածնունդի շրջանում։

Հետաքրքիր է Հովհաննես Իմաստասերի կարծիքը մարդու ունակությունների աղբյուրների մասին։ Հիմնվելով Արիստոտելի վրա, նա գտնում է, որ մարդկային ունակությունների աղբյուրը երկու է՝ մեկը բնածին է, գտնվում է մարդու մեջ, իսկ մյուսը՝ ներ-

գործական է։ Ներգործումը մեծ արդյունքներ է տալիս հատկապես փոքրահասակների վրա, ուստի և նա անհրաժեշտ է գտնում փոքրահասակների կրթության վրա առանձնահատուկ ուշադրություն դարձնելը։ Այսպես, Հովհաննեսն իր «Ցաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախաւութեամբ» աշխատության մեջ գրում է. «Արիստոտել զերկուս ախորժէ անուանել, զոր ի մեզ բանականն՝ ըստ զաւրութեամբ զոմն և զմիւսն՝ ըստ ներգործութեամբ... Եւ զաւրութեամբ բնաւորական (այսինքն՝ բնածին։— Ա. Ա.) գոլ, իսկ ներգործութեամբ ի դրուստ մտեալ, որ է ուսմամբ և կրթասիրութեամբ առաքինագործել և լինել տարերայմիտ... Զառաջին հասակն ոչ տալ թոյլ արտաքս ընդ զգայութիւնս ցնդել մտացն, այլ որպէս ի մանուկս, խելամտութեամբ մեծաւ, առանց յապազման, յամենայն կողմանց շարայպնդել ի զանազան ուսման իմաստութեան... զի հոսանուտ և մշտայսահ յառաջմունք ամանակաց քաշեն տանին, առանց հասանելոյ զանցեալն...»։

Ուշադրության արժանի է Հովհաննեսի տված նշանակությունը գիտությանը։ Ինչո՞ւ համար ենք մենք ուսումնասիրում գիտությունը։ Հովհաննեսը դրան պատասխանում է. մերձավոր և արդի ժամանակը առաջնորդ ընդունելով և անցյալը գիտականորեն ավելի ուշադիր ուսումնասիրելով՝ մենք հնարավորություն ենք ստանում ապագան ավելի արվեստապես ճանաչել. «Մերձաւորս զայս և զներկայ առեալ առաջնորդ, և զյանցեալսն և. իմաստասիրել նկրտիմք և զհանդերձեալն արուեստապէս ճանաչեմք»։

Հովհաննեսը սակայն, բոլոր տեսակի փիլիսոփաներին և գիտնականներին չէ, որ վստահում է և խորհուրդ է տալիս նրանց մոտ գնալ սովորելու։ Նա գտնում է, որ կան շինծու գիտուն և իմաստուն համարվածներ, մեր բառով ասած՝ ալքիմիկոսներ, որոնցից, ընդհանրապես, հեռու պիտի կանգնել, որ չլինի թե փուչ աշխատանքով մարդ իր կյանքը մաշի և փոխանակ շահ բերելու՝ վնաս բերի։

Ուշադրության արժանի է այն, որ Հովհաննեսը իր աշխատություններում մեջբերումներ է անում Արիստոտելից, Պլատոնից և հին հունական այլ փիլիսոփաներից։ Նա իր «Ցաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախաւութեամբ» աշխատությունում մեջբերում է արել նույնիսկ Զենոնից, որը կարևոր է այն տեսակետից, որ ցույց է տալիս Զենոնի փիլիսոփայական ուղղության հայ իրականության մեջ գործ ածվելը։

***

Ավելի երկար կարելի է խոսել Հովհաննես Իմաստասերի տոմարական աշխատությունների մասին, որոնք, բարեբախտաբար, հասել են մեզ։ Միայն Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերում մեզ հաջողվել է հայտնաբերել և հրատարակության պատրաստել մեր հեղինակի 17 կտոր տոմարական աշխատությունները։

Շիրակացուց հետո, հայկական ամենախոշոր տոմարագետը հանդիսացել է Հովհաննես Իմաստասերը։ Նա, փաստորեն, հանդիսացել է հայկական շարժական տոմարը անշարժ դարձնողը։ Մինչև Հովհաննես Իմաստասերը հայկական տոմարը չորս տարին մեկ օրով առաջ էր ընկնում, որովհետև հայկական մեր տարին բաղկացած էր 13 ամիսներից, որոնցից 12-ը՝ 30-ական օրից, իսկ 13-րդ, «ավելյաց» կոչվող ամիսը՝ 5 օրից։ Այսպիսով, ամբողջ տարին, առանց փոփոխության, բաղկացած էր 365 օրից։ Մենք գիտենք, որ արեգակնային տարին ունի մոտավորապես 365 օր և 6 ժամ։ Տարվա այդ 6 ժամի հաշիվը ճիշտ պահելու համար չորս տարին մեկ անգամ նահանջ են համարում և մեկ օր ավելացնում փետրվար ամսվա օրերի վրա՝ փոխանակ 28-ի, հաշվում 29 օր։ Այդ նահանջի գաղափարն էր, որ մինչև Հովհաննես Իմաստասերը հաշվի չէր առնվում։ Հայկական շարժական տոմարը չորս տարին մեկ օրով առաջ անցնելով, Հովհաննեսի ժամանակ հասել էր մոտ մի տարու։ Հովհաննես Իմաստասերը հայկական տոմարի այս խառնված հաշիվները կարգավորեց։ Նախ նա մեր թվականի հավելյալ տարին դեն նետեց— 1084 թվականը նա կրկնեց։ Ապա նա կարգ սահմանեց՝ չորս տարին մեկ անգամ «ավելյաց» ամիսը հաշվել ո՛չ թե 5, այլ 6 օր։ Այդ միջոցով նա հայկական տոմարը շարժականից անշարժ դարձրեց։

Իր կատարած բարեփոխությունը հասկանալի դարձնելու համար, նա կազմել է մի շարք աղյուսակներ, սխեմաներ, բացատրական տեքստեր և այլն։ Կարևորներից մի քանիսի վրա մենք ուզում ենք կանգ առնել։

Բարեփոխված տոմարով անվրեպ առաջնորդվելու համար, նա, ամենից առաջ, կազմեց համեմատական տախտակներ՝ զուգադրելով հայկական ամսաթվերը հարևան ասանհինգ ժողովուրդների ամսաթվերի հետ՝ հույների, հրեաների, ասորիների, վրացիների և այլ ժողովուրդների։ Նա համեմատության մեջ է դրել անգամ այնպիսի ժողովուրդների ամիսները և ամսաթվերը, որոնք ժամանակին ձուլվել են և գրավոր ոչինչ չեն թողել (աղվաններ և փոքրասիական մի քանի ժողովուրդներ)։ Համեմատական այդ աղյուսակում ցույց է տրված, թե հայկական ամսաթվի այս կամ այն օրը ժողովուրդներից որի, ինչ ամսի, քանիսին է համապատասխանում։ Այս աղյուսակները մեր տոմարական գրականության մեջ կոչվել են «խառնախորան»։

Հովհաննեսի տոմարական աղյուսակներից կարևոր են նրա 532 թվերի աղյուսակները, որոնք կոչվում են նաև ՇԼԲ աղյուսակներ։ Այս աղյուսակները պարունակում են լուսնի 19-ամյա և արեգակի 28-ամյա շրջանները և նշում յուրաքանչյուր տարվա յոթներյակը, վերադիրը, ոսկեգիրը և այլն։ Առաջին հայկական 532-ամյա աղյուսակները կազմված էին 552 թվին և վերջացան 1084 թվին։ Առաջին ՇԼԲ աղյուսակները խառնվելուց հետո հայկական տոմարական հաշիվները խառնվեցին— պետք էր կազմել նորը. և ահա այդ աշխատանքն իր վրա վերցրեց Հովհաննես Իմաստասերը։ Նրա 532-ամյա աղյուսակները հասել են մեզ հնագույն ընդօրինակություններով. մենք պատրաստել ենք այն հրատարակության։

Հովհաննեսի տոմարական լուրջ գործերից է նաև նրա «Պատճէն տոմարի» և «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» վերնագրերով աշխատությունները։ Տոմարական այդ աշխատությունները կոնկրետ խորհուրդներ են պարունակում այն մասին, թե ինչպե՞ս պիտի գտնել այս կամ այն տոնը, լուսնի վերադիրը, յոթներյակը, ոսկեգիրը և տոմարական մյուս հաշվումները։ Ըստ որում, հայկական անշարժ տոմարի կողքին բերված են նաև նախկին շարժական տոմարի հաշվումները, ինչպես և հունական, ասորական և հրեական տոմարական հաշվումները։

Մեծ թիվ են կազմում Հովհաննես Իմաստասերի տոմարական-տեսական աշխատությունները, որոնց վրա կանգ առնելու հնարավորություն չունենք, եթե ժամանակ ունենանք, խոստանում ենք այդ հարցին ծանոթ կամ նրանով զբաղվող մասնագետների շրջանակի համար առանձին գասախոսություն կարդալ։

***

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում հայտնաբերված են Հովհաննես Իմաստասերի կրոնա-բարոյական մի շարք աշխատությունները, որոնք դարձյալ բարձր արժեքի երկեր են և հնարավորություն են տալիս մեզ պարզաբանելու մեր բազմաշխատ հեղինակի աշխարհայացքը, նրա ժամանակի գաղափարական հոսանքները և այլն։

Մեզ հաջողվել է նույնպես հայտնաբերել Հովհաննես Իմաստասերի «Աղօթամատոյց»ի ավելի լրիվ և ընդարձակ տեքստը, քան այն, ինչ հայտնի է և հրատարակված։ Նորահայտ այդ նյութերից առանձնապես արժեքավոր են մեր հեղինակի «Աղօթք ճոխացելոց», «Խրատ մանկանց», «Խոստովանութիւն ճաւատացելոց» և «Առ եղբայր վասն ձեր կենաց» խորագրերով կրոնա-բարոյական տեքստերը, որոնք առանձին ուսումնասիրված են մեր կողմից։

***

Հովհաննես Իմաստասերը հանդիսացել է խոշոր բանաստեղծ։ Հայտնի է, որ որոշ մատենագրեր նրան հիշում են «Պոետիկոս» մականունով, որ ունի բանաստեղծ իմաստը։

Հովհաննեսի բանաստեղծություններից մինչև այժմ հայտնի է միայն նրա «Սարյակ»ը, որ 1847 թվին հրատարակել է Ալիշանը «Բազմավէպ»ում։

Հովհաննեսի այս բանաստեղծությունը արժանացել է հայագետների հատուկ ուշադրությանը և բարձր գնահատականին։ Հ. Ղ. Ալիշանը գտնում է, որ Հովհաննեսի այս տաղը

մեր գրականության մեջ աննման գրվածոց մին է», իսկ պրոֆ. Մ. Աբեղյանը այն համարում է «նշանակալից նորություն մեր հին գրականության պատմության մեջ» և գտնում, որ «եթե դա պատահմամբ փրկված չլիներ, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար»։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի երկու ձեռագրերում մեզ հաջողվել է հայտնաբերել և պատրաստել հրատարակության Հովհաննես Իմաստասերի երկու բանաստեղծությունները, որոնցից մեկը վերնագրված է «Նորին [Յովհաննու քահանայի] առ Սարգիս Ողբ», իսկ մյուսը արձակ մի բանաստեղծություն է, առանց վերնագրի։

Առաջին տաղը բաղկացած է 40 տողից. տողերի առաջին տառերը ագրոստիկոսով հոդվում են «Յովհաննէս քահանայ Սարգսի մեծի խնդալ Աստուած կենդանի»։ Այս տաղի չափը նույնն է, ինչ որ «Մարյակոի չափը, այսինքն այն չափը, ինչ ընդունված է հայկական անվանել։ Հովհաննես Իմաստասերի նորահայտ տաղը բանաստեղծական իր վարպետ կառուցվածքով, իր շնչով, իր խոհականությամբ, մեր կարծիքով, միջնադարյան հայ գեղարվեստական գրականության գլուխգործոցներից մեկը կարելի է համարել։

Երկրորդ բանաստեղծությունը արձակ է և բաղկացած է ավելի քան 300 տողից։ Բանաստեղծությունը պոլեմիկ բնույթ ունի— ուղղված է քաղկեդոնականների դեմ։ Հովհաննես Իմաստասերը մեծ վարպետությամբ սպանիչ քննադատության է ենթարկում քաղկեդոնականությունը։ Այս քննադատությունը առանձնապես 12-րդ դարում, երբ Բյուզանդիան Արևելքում վարում էր նվաճողական քաղաքականություն, ուներ քաղաքական իմաստ։ Գրչի հիշատակարանից երևում է, որ այս բանաստեղծությունը արտագրված է Հովհաննես Իմաստասերի ինքնագիր ձեռագրից։ Գրիչը հետևյալն է խնդրում ընդօրինակողներից. «Արդ՝ մի՛ ոք յանդգնեալ իշխեսցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից, կամ ի տանց և յարուեստից, զի և մեք ոչ իշխեցաք յաւելուլ կամ պակասեցուցանել, զոր ինքն իւրով ձեռամբ գրեալ էր։

Մենք չենք ուզում կանգ առնել Հովհաննես Իմաստասերի անունով մեզ հասած տպագիր և անտիպ տաղերի վրա, որոնց մեր հեղինակի գրչին պատկանելը թեական է։

***

Ուզում եմ երկու խոսք ասել Հովհաննես Իմաստասերի Ղևոնդյանց հիշատակին նվիրած մի բանաստեղծության մասին և վերջացնել։ Այս բանաստեղծությունը, ավելի ճիշտ՝ հոգևոր երգը, հայտնի է մեր մատենագրության մեջ. նա մտել է անգամ շարակնոցի մեջ և երգվում է եկեղեցիներում Ղևոնդյանց հիշատակին։

Ղևոնդյանց հիշատակին նվիրված Հովհաննես Իմաստասերի այս բանաստեղծության մասին ես ուզում եմ առանձին ջերմությամբ խոսել, որովհետև այստեղ ավելի, քան մի այլ երկում, մեր բազմավաստակ գիտնականը բաց է արել իր ցավող սիրտը հայրենակիցների դժբախտության առթիվ և արտահայտել իր իղձերը և սիրազեղ ցանկությունները նրանց լավագույն ապագայի նկատմամբ. «Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց զեկեղեցւոյ,—գրում է նա,— ցրուեալ մանկունս ժողովեա յուրախութիւն, ըզվարատեալս տրտմութեամբ և արտասուաց յորդահոս բղխմամբ փրկութեան մերոյ պարգևաց բաշխողս։ Այսինքն՝ Աստված, դու հայ ժողովրդի զավակներին, տրտմությամբ և հորդահոս արտասուքով վարատվածներին, այսինքն՝ երկրից քշված, ցիրուցան եղածներին ի մի հավաքիր և փրկիր։

Պետք է ասել, որ ցրված հայությանը հայրենիք հավաքելու այս կոչն ու ձգտումը, դարեր շարունակ, մեր ժողովրդի նվիրական ցանկությունը և մաղթանքն է եղել։ Նա դարձել է մեր նախնիքների առօրյա տենչանքը և վեր է ածվել աղոթքի։ Ցանկանանք, որ մեր մեծ հայրենասերների և գիտնականի այդ տենչանքը մարմնավորվի և իրականանա, մարմնավորվի և իրականանա մեր՝ ժամանակակիցներիս օրոք, մեր աչքի առաջ։

Թույլ տվեցեք այդ ցանկությամբ վերջացնել մեր այսօրվա դասախոսությունը։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Մեծ թափով և ուշադրությամբ առաջ են տարվում Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքները։ Մի խումբ նկարիչներ և նկարչուհիներ, ղեկավարությամբ մանրանկարչության հանրածանոթ մասնագետ Լ. Ա. Դուռնովայի, գիշեր ու ցերեկ աշխատում են Մայր Կաթուղիկեի Նաղաշ Հովնաթանյան նկարազարդերը վերականգնելու, մինչ հայ վարպետներ, հայ երեսի ինժեներների առաջնորդությամբ, ցեմենտով ու երկաթով ամրացնում են հսկայական սյուներն ու լուսավորշահիմն խարիսխները։ Ուրախալի է տեսնել, որ Մայր Տաճարի շինարարական աշխատանքներով անձամբ հետաքրքրվում են Հայաստանի ամենանշանավոր ճարտարապետներն ու նկարիչները։ Նրանք հաճախ այցելում են Ս. Էջմիածին ու հայտնում իրենց հեղինակավոր կարծիքը, որպեսզի համայն հայության պապենական հավատքի սուրբ խորանն եղող դարավոր Մայր Տաճարը լինի հավերժորեն հոյակապ ու փառաշուք, մշտընջենապես անսասան և անխորտակ։ Միևնույն նպատակին են ձգտում նաև Մայր Տաճարի արտաքին մայթերը սալահատակող հայրենադարձ ջեբել-մուսացի վարպետները, երբ սրբատաշ սալաքարերը ցեմենտով հաստատում են մեծահամբավ հայրապետների կոխոտած սրբասուն գետնին։

— Ըստ ճարտարապետների հավաստիացման, հազար տարով ևս երկարաձգված է Մայր Տաճարի տասնվեց ու կես դար ապրած կյանքը,— ասում է Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը և օրհնում ամենայն հայոց Մայր եկեղեցու ֆիզիկական դոյությունն ապահովելու համար նյութական միջոցներ շնորհող մեր իմաստուն կառավարությունը։

***

Ինչպես Հոգեգալստյան տոնին (5 հունիսի), նույնպես և Ս. Հռիփսիմեի տոնին (6 հունիսի), Ս. Գայանեի տոնին (7 հունիսի), Ս. Շողակաթի տոնին (9 հունիսի), Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապից ելքի (11 հունիսի) և նշխարների դյուտի (25 հունիսի) տոներին սուրբ պատարագ մատուցվեց համապատասխան տաճարներում, որոնք լի էին հավատացյալներով։

Աչքառու հանդիսությամբ տոնվեց Կաթուղիկե Ս. Էջմիածնի տոնը (12 հունիսի) Ս. Հռիփսիմեի տաճարում։ Պատարագիչն էր Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Օրվա տոնից ներշնչված գեղեցիկ քարոզ խոսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը՝ վեր առնելով Ս. Էջմիածնի կարևոր գերը։ Քարոզի վերջում նորին Սրբազնությունը բարեմաղթություններ արեց Մայր Աթոռի վրայից սուգի քողի շուտով վերացման և Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության համար։

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Հունիսի 30-ին, Օշականի պատմական տաճարում, Ս. Մեսրոպի գերեզմանի վրա, ավանդական հանդիսությամբ, սրտագին ու երախտադետ մեծարանքով նշվեց մեր եռամեծ երկու թարգմանիչ-լուսավորիչների՝ Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի տոնը։

Մայր Աթոռի միաբանությունը, Ճեմարանի ուսանողությունը և ուխտավորների մի մեծ բազմություն մայրաքաղաքից և շրջաններից փութացել էին Օշական՝ մի անգամ ևս խոնարհվելու Աստվածաշնչի հոյակապ և անստգյուտ թարգմանչի՝ Ս. Սահակ Պարթևի խնկելի հիշատակի և հայ գրերի հանճարեղ ստեղծողի՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի անմոռանալի գերեզմանի առաջ։

Մեծ Տարոնցու գերեզման-խորանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Մայր Աթոռի երիտասարդ և խոստումնալից միաբաններից հոգեշնորհ Տ. Մուշեղ աբեղա Պետիկյանը մատուցեց հանդիսավոր պատարագը, հավատացյալների խուռն բազմությանն ներկայությամբ։

Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը այդ օրը խոսեց իր գեղեցիկ և իմաստալից քարոզներից մեկը, վեր հանելով Ս. Սահակի և Ս. Մեսրոպի կատարած շնորհակալ և աստվածահաճո աշխատանքը հայ գրերի և հայ ինքնուրույն գրականության և մշակույթի ստեղծման և զարգացման պատվարեր գործում։

«Մեր թարգմանիչ վարդապետների՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի համազգային-եկեղեցական տոնը,— ասաց սրբազանը,— պանծացման է հայ գրի, հայ գրականության և մշակույթի։ Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը 5-րդ դարի առաջին քառորդին հիմք դրեցին մշակութային, ազգային-եկեղեցական մի պատմական շարժման, որը բացառիկ կարևորություն ունեցող իրողություն դարձավ հայ ժողովրդի պատմության մեջ։ Հայ ժողովրդի մշակույթի գանձանակի մեջ մեր երկու թարգմանիչ վարդապետները մի անկրկնելի գանձ են թողել։ Նրանց ստեղծած գրականությունը կազմակերպող, ոգեշնչող ուժ է հանդիսացել հայ ժողովրդի կյանքում 5-րդ դարից մինչև այսօր։ Ապա սրբազանը խոսում է Ս. Սահակի և Ս. Մեսրոպի կյանքի և գործունեության վրա և այն մասին, որ «Հայ գիրն ու գրականությունը ստեղծվել են պատմական այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը գտնվում էր երկու քարի միջև, երբ Բյուզանդիոնի և Տիզբոնի կողմից օրակարգի վրա էր դրված հայ պետականության գոյությունը, և երբ Հայ Եկեղեցու վրա կախված էր հունասորական օտար մշակույթների ներթափանցող վտանգը, որովհետև «պաշտոն եկեղեցւոյ և կարգացմունք Ս. Գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոց» (Փարպեցի)։ Հայ եկեղեցիներում կարդացված աղոթքն ու Ս. Ավետարանը, երգված երգերն ու շարականները, ամբողջ եկեղեցական ժամասացությունը հունարեն և ասորերեն լինելով, օտար և անիմաստ հնչյուններ էին հայ սրտի և հայ հոգու համար։ Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը ահա մտածում էին այդ անել կացությունից փրկել և՛ հայ հավատացյալ ժողովրդին և՛ Հայ Եկեղեցուն, աշխատում էին հասնել այն բանին, որ հայ եկեղեցիներում մտցվեր ամենքին հասկանալի մայրենի լեզուն և հայ դպրոցներից դուրս վանվեին ասորերենն ու հունարենը և ստեղծվեր ինքնուրույն հայ գիր ու գրականություն։

«Լինել անկախ ժողովուրդ,— շարունակում է սրբազանը,— ունենալ քաղաքական իշխանություն և անկախություն, ապրել հին աշխարհի ծանոթ ու մեծ մշակույթի և լեզվի տեր ժողովուրդների՝ հռոմայեցիների, հույների, ասորիների, պարսիկների հետ և յու-

նենալ սեփական գիր ու գրականություն, դա մի մեծ ու խորունկ ցավ էր երկու մեծ հայրապետների և հավատավոր հոգիների՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի համար։

«Գրերի գյուտով, հայ գրավոր գրականության ստեղծումով, մեծ հեղաշրջում է կատարվում հայ կյանքի մեջ. «Ցայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհն Հայոց անպայման սքանչելի լիներ... սկիզբն դպրութեանս Հայոց լինէր սկիզբն մեծի գիտութեաննս» (Կորյուն)։ Հայոց մեծասքանչ լեզուն, մեր ճոխ ու գեղեցիկ գրականությունը միշտ էլ հազարամյակներով հանդիսացել են օտար ու խորթ միջավայրերում ապրող մեր ժողովրդի հայրենասեր բեկորների համար համազգային միության, ազգային ընդհանրության, հոգևոր միասնականության անխորտակելի ամրոցները։

«Ահա թե ինչո՛ւ Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը շատ խորն էին գիտակցում հայ լեզվի ու գրականության դերը հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնության և հոգևոր ընդհանրության խնդրում։

«Մեր թարգմանիչ վարդապետները,— եզրակացնում է սրբազանը,— մի հոյակապ հոգևոր անկրկնելի ժառանգություն են թողել մեզ—դա հայ գիրն ու գրականությունն է։ Սուրբ թարգմանչաց խնկելի հիշատակը պարտականություն է դնում յուրաքանչյուր ճշմարտասեր և հայրենասեր հայ մարդու վրա՝ աչքի լույսի պես սիրել ու պահպանել մեր մեծասքանչ լեզուն ընտանիքներում, դպրոցներում, հավաքույթներում, ամեն տեղ ուր կա մի հայ միտք ու սիրտ, ու պայքարել օտար լեզուների ապազգայնացնող ազդեցությունների դեմ։ Ցավ է մեզ համար, որ մինչև այսօր, մեր մի շարք գաղութներում դեռ չի հաղթահարված թրքախոսության, և կամ օտար լեզուներով, հատկապես՝ ֆրանսերեն կամ անգլերեն լեզուներով խոսելու վատ սովորությունը։ Պետք է միշտ հիշել պատմության անողոք դասը. մայրենի լեզվի մոռացումը, հայրենի հնավանդ սովորություններից հրաժարվելը ճակատագրական կարող են լինել մանավանդ Սփյուռքի մեր պանդուխտ եղբայրների համար։

«Մեր պանծալի լուսավորիչ-թարգմանիչների անմահ գործի հիշատակը լավագույնս պահելու միջոցն է՝ սիրել ու տարածել հայոց լեզուն, հայ գիրն ու գրականությունը։

Ապա սրբազանը իր խոսքը մասնավորելով օշականցիներին ասաց. «Հայաստանում շատ պատմական ու նշանավոր գյուղեր կան. բայց Օշականը ամենաճանաչվածն է նրանով, որ իր ծոցում է ամփոփել Ս. Մեսրոպի՝ հայության անմոռանալի և առաջին մեծ ուսուցչի նվիրական աճյունը։ Դուք,— ասաց վերջում սրբազանը,— պիտի ուրախ ու հպարտ լինեք, որ Ս. Մեսրոպի գերեզմանով Օշականը ճանաչվում է ողջ հայ ժողովրդի կողմից, որպես Մայր Հայրենիքի առաջին ուխտավայրերից մեկը, որտեղ հազարամյակներով ծնրադրել է երախտագիտական մաքուր զգացմունքներով հայ ժողովուրդը, 5-րդ դարից մինչև այսօր։ Ահա այսօր մենք էլ եկել ենք ձեր գյուղը փոխանորդաբար հայության կողմից՝ մի անգամ ևս ծնրադրելու Ս. Մեսրոպի գերեզմանի առաջ։

«Ապրեցե՛ք թարգմանիչների խորհրդով և գործով, ինչպես ապրել են մեր նախնիքները, և ձեզ հետ ապրեցրե՛ք մեր անմահ թարգմանիչների, մեր մտքի և հոգու լուսավորիչների՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի անունը, փառավոր գործն ու խնկելի հիշատակը։ Ամեն։

ՄԻԱԲԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

(Վերատիրուչ Հոգևոր Ճեմարանի)

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳԱՎԱՌԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ

(Ուղևորական նոթեր)

Սկսա ինքնաշարժը դուրս է ելնում վանքի բակից, թեքվում դեպի ձախ, ապա դեպի աջ, անցնում Բաղրամյանի անվան պողոտայով և բռնում էջմիածին—Օշական ճանապարհը։

Գեղեցիկ է մայիսյան առավոտը։ Փչում է մեղմ զեփյուռը և խշխշացնում էջմիածնի պարտեզների մրգատու ծառերի սաղարթները։ Խոխոջում են առուների ջրերը, որոնք կենդանություն են պարգևում բամբակ, եգիպտացորեն, հացահատիկ, բանջարեղեններ, կոնկենի և խաղողենի ցանված այս ընդարձակ և արգավանդ հողերին։ Արտեղ կանաչություն է տիրապետում համատարած, հիանալի, ակնապարար կանաչություն՝ տեղտեղ նորափթիթ ծաղիկների գույնզգույն երանգներով։ Կապտորակ երկնքում, վաղաբաթ արտույտների երգն է լսվում, իսկ գետնի վրա, արտերի մեջ, քաղհանող երկսեռ մշակների զվարթ երգը։

Անցնելով մրգատու ծառերի և խաղողի այգիների կանաչով շրջապատված Դաշտ կամ Ներքին Օշական գյուղի միջով, որի արևելքում արևի ցոլքերի տակ փայլփլում են Թռչնաբուծարանի սպիտակ շենքերը, մեր ինքնաշարժը մագլցում է դեպի Օշական տանող սարաճամբան և քիչ հետո մտնում մեծամեծ ապառաժներով եզերված մի խորունկ ձորի մեջ։

Այս նեղ ու նվազ շուրը, որ գարնանը ժիտրաձայն է հոսում ձորի միջով, դարավոր Քասաղ գետն է, որ կոչվել է նաև Կարբու շուրթ։ Երբեմն ավելի ուժգին պիտի լիներ Քարասաղ կոչել այս գետը, որովհետև նրա անդնդախոր հունն ու եզերքները համարյա լրիվ ժայռերից են կազմված, որոնց վրայից անհուշ ժամանակներից ի վեր սահել են նրա ջրերը։

Այն կետի վրա, որտեղ ճամբան թեքվում է դեպի աջ և մտնում ձորամեջ, պատվառաջդու է երևում Օշականը՝ մանավանդ Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցով, որի հետ բարձրանում է հայ գրերի անմահ գտիչ Ս. Մեսրոպ Մաշտոցի գեղակերտ եկեղեցին։

Մեր ինքնաշարժը հանգարտորեն անցնում է Նահապետ վարդապետի կառուցած (1691—1705 թ. թ.) և Սիմեոն կաթողիկոսի վերանորոգած (1763—1780 թ. թ.) կամրջի վրայից և գոռգոռաձայն բարձրանում դեպի գյուղ տանող վերելքն ի վեր։ Ինքնաշարժը կանգ է առնում։ Օշականը սիրելի է յուրաքանչյուր հայի համար, որովհետև այնտեղ է գտնվում հայ գրերի հեղինակ Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը։ Ինչպես հայտնի է, Օշականը սեփականությունն է եղել Վահան Ամատունի զորավարի, որի հազարապետության օրով, Վաղարշապատում, հանգեց հայ ժողովրդի մտավոր լույսի ջահը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցը՝ «գեղեցազանցեալ քան զամենայն», որը զայնու ժամանակաւ էին առաքինիքս», և մարմինը բերվեց ու թաղվեց այստեղ։

Օշականի վահանակերտ եկեղեցուց այժմ մնացել են միայն արևելյան խորանի հիմունքի քարերը։ Չափազանց հնացած այդ եկեղե-

ցին 1640 թվականին նորոգվել է Փիլիպոս կաթողիկոսի օրով, 1875 թվականին է, որ Գևորգ Դ. կաթողիկոսի ջանքերով հիմն ի վեր նորոգվել և արդի վիճակն է տացել Օշականի եկեղեցին, որի խորանի տակ է գտնվում Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, իսկ բակում, եկեղեցու և դպրոցի միջև, թթենիների տակ, բարձր է կանգնել հայոց հազարապետի շիրիմը, որի վրա դրված է՝ Վահան Ամատունի:

Ներկայումս Օշականը գյուղ չէ, այլ մի լքնաղ գյուղաքաղաք՝ հարուստ այգիներով և

Ոսկեվազը հին Ղըզըլ-Թամիրն է, որի մոտից անցնող Քասաղ գետի ապառաժուտ ափունքի վրա գտնվում է ուրարտական մի ամրոցի մնացորդը: Այդ վայրը կոչվում է Ազ-Թամիր, որտեղ կան կրոմլեխներ և ամրոցի դռան առաջ՝ հսկայական բուրգեր:

Գյուղից դուրս գալով, դեմ-հանդիման ենք գտնվում գեղակերտ ու հսկայածավալ մի շենքի, որ միջնադարդ դպրոցն է եղեմական պարտեղների մեջ կորած Ոսկեվազի, որտեղ, ըստ բնակիչների ասածի՝ կան 7-րդ դարին

Հոգևոր ծեմարանի ուսանողները Մայր Աթոռի միաբանության և վերատեսչի հետ

մրգաշատ պարտեզներով: Ափսո՜ս, սակայն, որ մենք այսօր ժամանակ չունենք այցելելու ո՛չ գետամեջ կիկլոպյան շենքը, որի համար ասվում է, թե Վահան Ամատունու ապարանքն է, ո՛չ Մանկանոց կոչված Ս. Աիոն եկեղեցին, ո՛չ էլ Դիտի կոնդն ու Գյուլլե կոնդը, առաջինը՝ իբր դիտարանը Վահան Ամատունու, իսկ երկրորդը՝ նախապատմական դամբարան, ուստ Ն. Լալայանի, ինչպես չենք տեսնելու նաև Մորիկ կայսեր մորը վերադրված գերեզմանական հուշարձանը:

Մեր ինքնաշարժը սուրալով անցնում է Օշականի ստվերածածկ փողոցներով, մի քանի րոպեում կտրում է ջրառատ բացատները և մտնում Ոսկեվազ գյուղը, այնքան նշանավոր իր համանուն դինիով:

պատկանող եկեղեցիների մնացորդներ, քանդակազարդ և արձանագրություն կրող քարեր, խոյակներ և որմասյուներ:

Մեր ինքնաշարժը, միշտ միևնույն ճանապարհով, տանում է մեզ դեպի Ագարակ գյուղը, որի մուտքին, գյուղատնտես մշակներ ծխախոտի սածիլներ են պատրաստում՝ ցանելու համար:

Սակայն, այստեղ հարկ է փոխել ճանապարհը և մտնել մի ուրիշ, ավելի բանուկ ասֆալտապատ ճանապարհ՝ Երևան—Աշտարակ—Լենինական ճանապարհը, որն անցնում է գյուղի միջով:

Կանաչության մեջ է լողում նաև Ագարակը, որի կենտրոնական մասում, մի ցուցատախտակի վրա նկարված ճանապարհային նիդա-

կը դեպի աջ ցույց է տալիս Բյուրականի ուղղությունը։

Ուսանողների հետ այց տվինք ավերակ այն եկեղեցուն, որ գտնվում է մրգաշատ պարտեզների մեջ։ Ագարակի ավերակ եկեղեցին շինված է եղել հրաբխային կարմրագույն ավազաքարով, այդ պատճառով էլ արձանագրությունները դարձել են անընթեռնելի, բացառությամբ նախապես կարդացված մի արձանագրության հիշում է Զաքարյան Զաքարեի որդի Շահնշահի անունը։ Հետաքրքրական են միակտուր մեծաղանգված քարերը, որոնցից արևմտյան միակ դռան վերնասյամինն արտաքուստ ունի 2,50 մ. երկարություն և 0,95 մ. բարձրություն։

Մեզ համար շատ ցանկալի էր անշուշտ թեքվել դեպի աջ տանող ճանապարհը և բարձրանալ Արագածի ոտը զարդարող գեղատեսիլ գյուղը՝ Բյուրական։

Այստեղ, Բյուրականն ու մերձակա Ամբերդը տեսնելու և Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նման (1874 թվականին նա կառուցել էր հայրապետական հովոց Բյուրականում) այս վայրերի անմահական օդն ու ջուրը վայելելու մեր փափագի իրականացումը հետաձգելով հետագա պատեհ առիթի, ընտրում ենք դեպի ձախ՝ Արագածի արևմտյան սարահարթերը բարձրացող մայր ճանապարհը, դիտելով հարավ-արևմուտքում տարածվող Օշականի և Ոսկեվազի կանաչավետ տարածության անմիջական շարունակությունն եղող Բաթուինը, որ ավելի հին ժամանակներում, եղել է նույնպես հայրապետական ամառանոց։

Ագարակն ու Բյուրականը թողնելով թիկունքում, մեր ինքնաշարժը անդադար բարձրանում է սարահարթն ի վեր։

Այստեղ, Արագածի կատարը ցածրանում է այլևս ու բնությունը դառնում ավելի դյուրահաղորդ։ Սակայն ի հակառակությունը, այստեղ աչքի է ընկնում աշխատասիրությունը հայ ժողովրդի, որ դրախտի է վերածում լեռկ ու խոպան այս սարավանդները։ Ստեղծ են տնկված խճուղու երկու կողմերը և ջուրը ոռոգում է բույսերը ամեն մի ուղղությամբ, նայած հողի բարձրությանն։

Խճուղին սկսեց արդեն եռալ։ Այծերի և ոչխարների հոտերը, կովերի և եզների նախիրները բարձրանում են հանդարտ քայլերով՝ դեպի Արագածի արոտավայրերը։ Լեռներից և գյուղերից Երևան իջնող ճամբորդատար ինքնաշարժերի շչակների սուր ձայներն արձագանքում են սարերում ու ձորերում։ Նրանց հեռանալուց հետո վերատացված լռության մեջ նորից լսվում են արտույտների և լեռ բարձրացող հովվի սրնգի երգերը։ Ժայռի վրա թառած մի խիզախ արծիվ արհամարհում է մեր ինքնաշարժի գոռգոռոցը և բարձրից նայելով՝ հավանաբար ծիծաղում գիտության այդ անհանդարտ զավակի վրա։

Եվ ահա, ճանապարհի աջակողմում, երևում է կանաչող մի ընդարձակ գյուղ, արծվի պես թառած Արագածի անառիկ կողի վրա։

Աջում թողնելով Տեղերը կամ Դրզբը, որտեղ եղել է հոյակապորեն զմբեթավորված մի եկեղեցի՝ զավիթով, կառուցված Վաչե իշխանի Մամախաթունի կողմից (1232 թ.), ինքնաշարժն իջնում է զառիվայր։ Եվ ահա մի ցուցատախտակի վրա կարդում ենք՝ «Ուշան»։

Ուշանը կամ Ուճանը թյուրքական անունն է ներկայումս 300 տնվոր այս մեծ գյուղի, որ հայ ժողովրդի պատմության մեջ հիշվում է Վժան անունով։

Թվում է, թե «Վժանն» է կոչվել գյուղը սարի կատարից ջրվեժի ձևով իջնող ջրերի համար։ Արդարև, շատ հեռվից նկատելի է վժվժան ջրերի սպիտակ ժապավենը, որ գյուղը կապում է լեռան կատարին, ստորոտում ստեղծելով հարուստ բուսականություն։

Վժանը, որի առջևից սուրալով անցնում է հիմա մեր ինքնաշարժը, ըստ Հովհաննես պատմաբան կաթողիկոսի, ապաստանարանն եղավ Սմբատ Ա. Բագրատունուն։

Ի հնումն, Վժանում եղել է քարաշեն եկեղեցի։ Այժմ տաճարամյա դպրոցում միջնակարգ ուսում են ստանում հարյուրավոր երկսեռ պատանիներ։

Դեռևս Կուաշ կամ Կոշ չհասած, մեր ինքնաշարժը կանգ է առնում ասֆալտապատ ճանապարհի անմիջապես աջում կանգնած մի փառահեղ ու բարձրարերձ հուշարձանի մոտ, որի արևմտահայաց կողմը միայն վերևում կրում է մի խոշոր խաչի քանդակը, իսկ ստորոտում արձանագրություն, դժբախտաբար ոչ ընթեռնելի։

Պատմական վայրերից է նաև Կուաշը կամ Կոշը, որի անվան հետ կապված են տխուր դեպքեր։ Ինչպես հայտնի է, Շապուհը հույներին հալածելուց հետո Տիրանին խարդախ բարեկամությամբ հրավիրեց իր մոտ և գրքերի առջև նախատելով նրան ոխտապրժության համար, աչքերը հանեց և ուղարկեց Կուաշ ավանը։

Վարդան աշխարհագիրը հիշում է «Կոշավանք», ուր գերեզմանն է Պետրոս Ակաեատեսի սուրբ վարդապետինս։ Հիշվում է նաև, որ Կոշն ունեցել է Ս. Ստեփանոս նախավկայի անվան մի եկեղեցի, նման Թալինի եկեղեցուն, կառուցված 981 թվականին Բագրատունիների տիրապետության ժամանակ։

Մի պահ թողնենք մեր ճանապարհորդությունը և ավանդության թևերի վրա թառած, ման գանք քառագագաթ Արագածի կատարին, ուր ձգտելն է տիրապետում ապիտակափառ Միջնադարյան Վարդան աշխարհագիրը պատմում է հայ ժողովրդին շատ սիրելի ա-

վանդությունը. «Ասեն, թէ օրհնեալ և օծեալ է նշան տէրունական՝ շնորհաբաշխ աջովն սուրբ Լուսաւորչին լերինքն այն, ի փառս խաչելոյն Քրիստոսի, և ի մէջ հովտին քարաձերպ այր մեծ. ի նմին այրի շինեալ տաճար փոքրիկ խորան, և կախեալ կանթեղս առանց շղանի, և փոխանակ ջրոյ՝ արտասուօք լցեալ, և հրով երկնային վառեալ. և մնալ մինչև ի գալուստն Քրիստոսի»։

Լուսավորչի կանթեղը, հավիտենական Արագածի վրա, հայ ժողովրդի հավերժության խորհրդանիշն է, որով նշանակվել են մեր լեռները։

Թալիշի և նրա եկեղեցու մասին շահեկան տեղեկություններ պիտի գտնեն ընթերցողները «էջմիածին» ամսագրի սույն թվականի փետրվարի (II) համարում՝ պատմական գիտությունների թեկնածու, հնագետ Հ. Եղիազարյանի հոդվածում։

Բացի հայ պատմիչներից, Արուճը հիշվում է նաև թյուրք պատմիչներից Ուրուճ անունով, որտեղից անցել է սուլթան Սելիմը (1514 թ.), վաղուցվան բանաստեղծներից Հովհաննես Թումանյանն ու Վահան Թեքեյանը։

Ագարակից մինչև Թալիշ, մեր տեսած գյուղերն ու պատմական հուշարձանները գտնվում էին Աշտարակ—Լենինական խճուղու աջում, Զախում մեր տեսած առաջին տաճարն եղավ Թալիշի կամ Արուճի կաթողիկեն, կառուցված Գրիգոր Մամիկոնյան իշխանի կողմից (676—684 թ. թ.)։

Ուսանողների հետ միասին մեծ հետաքրքրությամբ դիտեցինք ավերակները Գրիգոր Մամիկոնյան իշխանի պալատի, աղբյուրի, որը շորացել է այժմ և բազիլիկ սրահի, բայց մանավանդ հայկական ճարտարապետության գոհար եկեղեցին, որ գտնվում է Հայաստանի Հնություններին պահպանության կոմիտեի հոգատարության տակ։

Թալիշի և նրա եկեղեցու մասին շահեկան տեղեկություններ պիտի գտնեն ընթերցողները «էջմիածին» ամսագրի սույն թվականի փետրվարի (II) համարում՝ պատմական գիտությունների թեկնածու, հնագետ Հ. Եղիազարյանի հոդվածում։

Բացի հայ պատմիչներից, Արուճը հիշվում է նաև թյուրք պատմիչներից Ուրուճ անունով, որտեղից անցել է սուլթան Սելիմը (1514 թ.),

Հոգևոր ճնմարանի ուսանողները Թալինի Կամսարականների մեծ եկեղեցու ավերակների մոտ

Ամենասարակ Սիրիայի Լավոդիկե գավառի սև քարաշեն ավերակներն են հիշեցնում Արուճի հյուսիսում գտնվող ավերակները, որոնք, անցյալում, եղել են իշխանատեղի և վաճառանոց, մի փան, որ ապացուցում է, թե Արուճից էին անցնում Դվինից Անի և դեպի արևմտյան երկրները ճանապարհորդող քարավանները։

Թալիշի ծիրանաբատ պարտեզների միջով և վերոհիշյալ ավերակների կողքով անցնելով, ոչ շատ ուշ, հասնում ենք 250 տնվոր Բազմաբերդ գյուղը, որ նախապես կոչվել է Աղճա-գալա և գտնվում է խճուղու աջում, Արագածի ոտին։

Բազմաբերդի բնակիչները սասունցիներ են, ինչպես սասունցիներ են Թալինի շրջանի 12 գյուղերի բնակիչները։ Նրանք նախընտրել են բնակվել այս լեռնային շրջանում, որովհետև այստեղ են գտել իրենց ծննդավայրի՝ Սասունի անառիկությունը, ոգի և ջրի հստակությունը, խստամբեր կլիման, չարքաշ կենցաղի պայմանները։ Չէ՞ որ այս վայրերի պատմությունն էլ շատ նմանություններ է ունեցել Սասունի պատմության հետ։

Առաջին ուշագրավ գեղեցկությունը, որ աչքի է զարնում Բազմաբերդում, մոտ 300 աշակերտով յոթնամյա դպրոցն է, որի մարզադաշտը համարյա կից է գտնվում խճուղուն։

Բազմաբերդից ոչ շատ հեռու, Դավիթաշեն գյուղից հետո և Մերիման գյուղից առաջ, միշտ խճուղու աջում, կա մի հոյակապ աղբյուր, որի մոտ, կանաչ մարգերի վրա, ճեմարանի ուսանողները նախաճաշեցին արտակարգ ախորժակով։

Բարձրաձայն երգված տերունի աղոթքը թնդում, արձագանքում է Արագածն ի վեր և մեր փոքրաշարժը սուրում է դեպի Թալին, որ այսօրվա ուսանողական արշավի վերջին կայանն է լինելու։

Անցնելով Թալինի գետի կամուրջը, ձախում ընկած գերեզմանատան մեջ բարձրացած ենք գտնում Հին Թալինի մեծ և հոյակապ եկեղեցին և նրանից հազիվ 200 քայլ հարավում, նրան զուգահեռ գծի վրա, Ներսեհ Կամսարականի կառուցած փոքրիկ եկեղեցին, Բակուտու լեռան մոտ։

Մոայլ ու տխուր է մեծ եկեղեցու տեսարանը։ Ժամանակի և բնության ահեղ հարվածների տակ փուլ են եկել նրա հարավային պատի, ծածկի և բարձրակարկառ գմբեթի մեծագույն մասերը։ Այնուամենայնիվ, կամսարականների ձեռքով, 7-րդ դարում կառուցված այս հաստահեղույս եկեղեցին մնում է միշտ պատկառազդու, իր բարձրաբերձ սյունաշարով, դռների վրա որպես վերնասյամ զետեղված միակտուր կամարաձև մեծազանգված քարերով և ճարտարապետական տիպիկ ոճով։

Համարյա անաղարտ է մնացել բարեփախտարար Ներսեհ Կամսարականի կառուցած սիրունիկ եկեղեցին, իր գմբեթով։ Այս եկեղեցու մեջ ուսանողները հետաքրքրությամբ ուսումնասիրեցին Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի հավաքած պատկերաքանդակները, որոնց միջև է գտնվում Տրդատ Թագավորի խողակերպ քանդակը։

Հազիվ փորձում էինք կարդալ հարավային դռան արձանագրությունը, որով Շիրակի և Արշարունյաց տեր Ներսեհ պատրիկը հայտնում էր, թե իբն է շինել այս եկեղեցին հանուն Ա. Աստվածածնի, ի բարեխոսություն իր և ամուսնին Շուշանի և որդուն Հրահատի, ահա մթագնեց երկինքը՝ ահեղագոռ որոտումներով։ Շտապ տեղավորվեցինք ինքնաշարժի մեջ ուսանողների հետ միասին և բռնեցինք վիրաղարձի ճամբան այն խճուղով, որով բարձրացել էինք մինչև Թալին։

Օրհասարակի (կեսօրի) հասած արևը ամպերի միջից մեզ ժպտաց Ագարակում և այդ ժպիտը քաջալերեց արշավախմբին՝ շրջագայությունը շարունակելու Աշտարակի ուղղությամբ։ Ուստի, փոխանակ խնքվելու դեպի Էջմիածնի ճանապարհը, ինքնաշարժը սուրաց Աշտարակի ուղղությամբ։

Կանաչ ծով է Աշտարակը՝ իր պտղառատ այգիներով, որոնց մեջ հասարակ բնակարանն անգամ համարժեք է գեղակառույց վիլլայի։ Այդ դրախտավայել գեղեցկությունը տեսնելու և վայելելու հաճույքը մեզ շնորհեց մայր խճուղու վրա կատարվող նորոգությունը, որովհետև ինքնաշարժը պարտավորվել էր անցնել շրջանային կենտրոն Աշտարակի ստվերածածկ փողոցներով, ուր ջուրը հոսում է ամեն ուղղությամբ, լայն առուների միջով։

Անդուլ եռուզեռ և անընդմեջ շինարարության շարժում տեսանք Աշտարակի կենտրոնական հրապարակում, երբ մեր ինքնաշարժը արագասույր մագլցում էր Մողնի բարձրացող ղառիվերն ի վեր։ Այդտեղ, բարձունքի վրա, հրապուրիչ է Աշտարակի համայնապատկերը՝ խորագնաց Քասաղ գետով, դեպի Բյուրական և Փարպի երկարաձգվող այգիների կանաչով, Բերդաթաղի Սպիտակավոր և Կարմրաբավոր կամ Միրանավոր կոչված եկեղեցիներով, Ս. Մարիանեի փոքրիկ, վայելչաձև, սրածայր գմբեթավոր սիրուն մատուռով, քստավանդության կառուցված մի երիտասարդ երեցի կողմից, որին հաջողվել էր ստանալ հավանությունը ժամանակի կաթողիկոսի, երիցուհու մահից հետո երկրորդ անգամ ամուսնանալու համար։ Աշտարակը հպարտ է ոչ միայն պատմականորեն հարուստ անցյալով, այլև փառավոր իր ներկայով։ Հայաստանի ամենածաղկյալ կենտրոններից մեկն է Արագածոտն գավառի թագուհի այս գյուղաքաղաքը, ուր Պերճ Պռոշյան վիպասանը ներշնչվել, երկնել ու վիպերգել է «Սոս և Վարդիթերը», որը հայ եկեղեցուն տվել է Ներսես Ե. Աշտարակեցի հայրենասեր և քաջակորով կաթողիկոսը, նշանավոր եպիսկոպոսներ՝ ինչպես Սիմեոն կաթողիկոսի տոնացույցի տպագրության գործակից Ղուկիանոսը։

Անցել է այն ժամանակը, երբ Մողնու Ս. Գևորգը հեռավոր ուխտատեղի էր նկատվում Աշտարակի բնակիչների համար։ Հիմա, շնորհիվ գիտության, Մողնին, Կարբին, Ուշին, Հովհաննավանքը համարյա արվարձան են դարձել գավառագույն Աշտարակի, մեկը

մյուսի ետեւից գեղալար մանյակի թանկարժեք ուլունքների պես շարված ասֆալտապատ խճուղու աջ ու ձախ կողմերը։

Մողնիում, բարձրությամբ ու շքեղությամբ տիրապետող դիրք ունի Ս. Գեորգ հրաշափառ եկեղեցին, որի հյուսիսային ավանդատան մեջ իբր պահապան կան Գեորգ զորավարի նշխարները։

1580 թվականին, Մողնին հիշվում է որպես եպիսկոպոսական աթոռ։ Փիլիպոս վաթողիկոսի (1633—1655 թ. թ.) օրով, թեմի առաջնորդ է եղել Մարտիրոս Մուղնեցի եպիսկոպոսը, որ ըստ պատմիչ Առաքել Դավրիժեցու, հին եկեղեցին քանդելով կառուցել է նորը և պարապով շրջապատել, բայց, ըստ Զաքարիայի, Մարտիրոս եպիսկոպոսի եղբորորդի Հովհաննես վարդապետը, քանդել տալով իր հորեղբոր «կոշտ ու կոպիտ» քարով կառուցած եկեղեցին, նորն է կառուցել։

Անցյալում նշանավոր կենտրոններից մեկն է եղել Կարբին (գրվում է նաև Կարփի, Քարբի), որի անունով, մի ժամանակ, Արագածոտնի մեծ մասը կոչվել է «Կարբոյ երկիր կամ Կարբոյ գաւառ», իսկ շրջակայքը՝ «Կարբոյ դաշտ» և լեռնակողմը՝ «Կարբու դարեր»։

Այստեղ մենք արտաքուստ դիտեցինք մեծահարուստ Խոջադզա Այվազի կողմից 1691 թվականին կառուցված եկեղեցին (Ս. Աստվածածին)։ Բայց եկեղեցուց ավելի մեր ուշադրությունը գրավեց նրա արևելքում, խորանի պատից հազիվ մի մետր դուրս կառուցված, քառակուսի զանգակատունը, որի հարավային պատի վրա կա մի արձանագրություն՝ (ՉՉԷ) վաչէ իշխանի հիշատակությամբ։ Զանգակատան այսպես անջատ կառուցումը աննախընթաց է թվում մեզ, որովհետև ոչ արտասահմանում և ոչ էլ Հայաստանում մեր տեսած հայ եկեղեցիներում չենք հանդիպած նման երևույթի։

Հրաժեշտ տալով Կարբիին, գնում ենք դեպի Սաղմոսավանք՝ այցելելու Հովհաննավանքը։ Բայց, ինչպես ժողովրդական առածն է ասում՝ «Մարդն է ծրագրում, սակայն Աստված՝ գործադրում», տեղացող հորդառատ անձրևն արգելք հանդիսացավ մեր արշավախմբի Սաղմոսավանք կատարելիք այցելության։ Ճիշտ է, ասֆալտապատ խճուղու վրա, Սաղմոսավանք գյուղից հազիվ մի կիլոմետր հեռու կանգ առած ինքնաշարժում դիտեցինք Հասաղ գետի գեղադիտակ և քարձրավանդակ քարափի վրա կառուցված «երկնահանդես և գերահռչակ» Սաղմոսավանքի սուրբ ուխտը, բայց չկարողանալով անցնել շրջող արահետով և պատեհ առիթի հետաձգելով սաղմոսերգության, դպրության և սուրբ գրոց ընթերցման այս կենտրոնի այցելությունը, վերադարձանք դեպի Հովհաննավանք։

Ինչպես դեպի Սաղմոսավանք արշավելու, նույնպես և վերադառնալու ժամանակ, մենք երկարօրեն դիտեցինք Արայի լեռը, որի մոտ, ըստ ավանդության, պատերազմի դաշտի վրա ընկած և թաղված է Արամ նահապետի որդի, ամուսնական հավատարմության խորհրդանիշ Գեղեցիկն Արան։ Եթե Քասաղ գետը անմերձենալի է դարձնում Արայի լեռան վայրը, ապա Հրազդան գետը արգելք է հանդիսանում շամբուշ սիրահարուհու՝ Շամիրամի լեռան (Քյոդան դաղի) տեղաշարժին։ Եվ այդպես, Արայի լեռը՝ Արագածոտն գավառում և Շամիրամի լեռը՝ Կոտայքում հավիտենականորեն մնում են իրար դեմ հանդիման...։

Այսօր մեր տեսած և հիշած սակավաթիվ հնություններ միջև (միայն Արագածոտն գավառում գտնվող հնությունները հարյուրյակների են հասնում), ամենապատկառազդուն է Հովհաննավանքը, որի հարուստ պատմության կարելի է ծանոթանալ կարդալով Հայաստանի Պետական պատմական թանգարանի տնօրեն Կարո Ղաֆադարյանի «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները» պատկերազարդ հոյակապ ուսումնասիրությունը (1948 թ., Երևան)։

Ճեմարանի ուսանողները հարգանքով ու պատկառանքով դիտեցին Գրիգոր Լուսավորչի շինած բազիլիկ եկեղեցին (4-րդ դար), ուր գտնվում է Հովհաննես Մկրտչի նշխարների մի մասը, զարդաքանդակներով հարուստ կաթողիկե եկեղեցին (1216—1221 թ. թ.), որի ծածկն ու հարավային պատը, ափսոս՝ ս, փուլ են եկել, 13-րդ դարի հայ ճարտարապետության պարծանքներից գմբեթակիր ժամատունը, որի պատերի վրա տեղավորված նրբաքանդակ խաչքարերը հիացմունք են պատճառում, ինչպես նաև անկանոն շինությամբ տապանատունը, որի մեջ մենք տապան չտեսանք, այլ կենտրոնում զետեղված մի սեղանի վրա, հնագիտական մեծ արժեք չներկայացնող իրեր, պղնձյա դրամներ, գործիքներ հավանաբար գտնված վանքի շրջակա հողերից։ Մեծ ուրախությամբ հաստատեցինք ներկայությունը, բազիլիկ եկեղեցու ձախակողմյան որմնախորշում, եկեղեցական գրքերի, որոնց միջև մի ցուցաբերից ավետարան։ Առանձնապես շատ խորունկ տպավորություն է թողնում Հովհաննու Կարապետի անվան նվիրված այս փառահեղ սրբավայրի արևելքն եղերող Քասաղ գետի անդնդախոր ձորը։

Անձրևը հորդառատ իջնում էր և օրը տարաժամում, երբ մեր արշավախումբը շրջապատեց 7-րդ դարի գործ հուշասյունը, որ գտնվում է Հովհաննավանքի դպրոցի մուտքին, վանքից ոչ շատ հեռու, հարավ-արևմուտքում։ Հուշասյան ո՞ւմ պատկանելու մա-

սին հիշատակություն չկա, բայց գյուղի բնակիչներն ասում են, որ նա իբր եղել է Վաչուտեանց Աարգսի որդի Վաչե իշխանաց իշխանի զուգակից Մամախաթունի գերեզմանական հուշարձանը։

Հուզումով ու հարգանքով հրաժեշտ տալով վարդապետական պատվական գրքերի հարուստ մատենադարան ունեցած Հովհաննավանքին, ուսանողները տեղավորվեցին ինքնաշարժի մեջ և բռնեցին դեպի Էջմիածին վերադարձի ճամբան։

Մենք Էջմիածին վերադարձանք դարձյալ Ագարակ—Օշական ճանապարհով, և այս՝ առիթ ընծայեց, որ լիովին ըմբռշխնենք Արագածոտնի դրախտային գեղեցկություններն ու հիմնովին ծանոթանանք այս գավառում կատարված շինարարական ու կուլտուրական բարգավաճման հետ։

Մենք մի օրվա ժամանակամիջոցում կտրել անցել էինք այնքան մեծ տարածություն և պիտել ու տեսել այնքան հետաքրքրական և շահեկան բաներ, այնինչ չէր կարելի իրագործել շաբաթների ընթացքում՝ դեռևս քառասնյակ տարի առաջ։ Մեր անցած վայրերում ոչ մի հետք Առաքել Դավրիժեցու պատմած ահավոր երևույթներից։ Ընդհակառակը, ամեն տեղ առատություն, ամեն տեղ երջանիկ նոր կյանք, ամեն տեղ հայություն։ Անցյալում հիշված 10 տնվոր գյուղերը այժմ դարձել են առնվազն 250—300 տնվոր փոքր ավաններ, բոլորն էլ իրար կապված ճանապարհներով, էլեկտրացանցով և հեռախոսով։

Օշականի եկեղեցու հանդիպակաց դռան առաջ ալեոր մի մամիկ հրավիրում է մեզ տունը՝ հյուրասիրելու համար, իսկ մենք չենք մոռացել այն անակնկալ հյուրընկալությունը, որին արժանացանք անցյալ ամառ մի օշականցու այգում, երբ եկեղեցու նորոգության կապակցությամբ այցելած էինք հայ ժողովրդի պատմության սերտորեն կապված այդ մեծ կենտրոնը։

Անձրևը շարունակում էր իջնել։ Կարելիություն չկար ընդունելու բարեսեր և հյուրասեր օշականցու հրավերն ու գործադրել Օշականը մեր այսօրվա ուխտագնացության վերջին կայանն անելու ծրագիրը։ Ինքնաշարժը կես ժամ հետո ճեմարան է հասցնում ուսանողներին։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հ. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՆԿԱՐԻՉ ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆ

Ռաֆայել Շիշմանյանը հայրենադարձ կերպարվեստագետների խմբի երիցագույն անդամն է, բոլորի անահապետը, ինչպես պատկառանքով և ազապատանքով կոչում են նրան մտերմական շրջանում։

Ակնա դավակ է Շիշմանյանը՝ ծնված լինելով առափնյա այդ շրջանի Լիճք գյուղում 1885 թվականին։ Փոքր Հայքի Ակնա շրջանը հայտնի է իր նկարագեղ բնությամբ, ժողովրդական բանահյուսության, հայադրոշմ բառ ու բանի հարստությամբ, ականտունիքների սրտագրավ գեղեցկությամբ։ Այդ գեղեցիկ շրջանում ապրող առույգ, ուժեղ բնավորությամբ ժողովուրդը տվել է մեզ անվանի գրողներ, ինչպիսիք են Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Միսակ Մեծարենցը և ուրիշներ, այնպիսի մեծ նկարիչ, ինչպիսին է Էդգար Շահինը, և հասարակական ու մտավորական կյանքի մեջ ակնառու դեր կատարած մի շարք այլ անձնավորություններ։ Մանուկ Ռաֆայելը, մեծանալով, դառնալու էր մեկն այն աչքի ընկնող անձնավորություններից, որոնցից այնքան շատ է տվել մեր ժողովրդին Ակնա շրջանը։

Ռաֆայելը որբանում է ութ տարեկանից։ Նրան իրենց խնամքի տակ են առնում Համիդյան ջարդերի հետևանքով Բուլղարիա ապաստանած հորեղբայրը, ավելի ուշ՝ հորաքույրը, որ ապրում էր Կոստանդնուպոլսում։ Սովորում է Կոստանդնուպոլսի Բեշիկթաշ թաղամասի Մաքրուհյան նախակրթարանում, իսկ հետո՝ Ղալաթիայի կենտրոնական վարժարանում՝ ցուցաբերելով բացառիկ ջանասիրություն և ընդունակություն։

Դեռ կենտրոնականի աշակերտ, պատանի Ռաֆայելը ցուցաբերում է նկարչության համար առանձին նախասիրություն ու շնորհ։ Նրա վառ ձգտումն էր գնալ Փարիզ՝ կերպարվեստի բարձրագույն հաստատություններում նկարչություն սովորելու։ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի ցույց տված օգնությամբ, որը նշանակում է թոշակ, 1908 թվականին նա անցնում է Փարիզ և հետևում է միաժամանակ պետական երկու բարձրագույն հաստատությունների դասընթացներին— Գեղարվեստի ազգային բարձրագույն վարժարանին (ակադեմիա) և Զարդարվեստի բարձրագույն վարժարանին։ Ուսման շրջանն ավարտում է 1913 թվականին։

Շատ վաղուց Շիշմանյանի մեջ եղել է Հայրենիքում, Արարատի հովանու տակ ապրելու ցանկությունը։ Դեռևս 1914 թվականին, Համաշխարհային առաջին պատերազմի սկզբնավորությունից մի քանի ամիս առաջ, նա դիմում է Երևանի այդ ժամանակվա թեմական դպրոցի հոգաբարձությանը՝ իր թեկնածությունն առաջարկելով այդ դպրոցի դծագրության և նկարչության դասատուի պաշտոնի համար, բայց չի հաջողվում։ Պայթում է Համաշխարհային առաջին պատերազմը։ Սկսվում են արևմտահայերի զանգվածային տեղահանությունները ու կոտորածները։ Շիշմանյանը հարկադրված է լինում մնալ ու բնակվել Փարիզում համարյա մի ամբողջ քառասնամյակ, մինչև 1947 թվականը, երբ վերջապես նրան հաջողվում է գալ Հայրենիք. դեռ 1914 թվականից փայփայված երազը իրականանալու էր տասնամյակներ հետո։

***

Ֆրանսիայի մայրաքաղաքում Ռաֆայել Շիշմանյանն ունենում է բեղուն գործունեություն և՛ իր մասնագիտության գծով և՛ հասարակական կյանքում։

1920 թվականից Շիշմանյանն անդամակցում է Ֆրանսիայի «Անկախ արվեստագետների միության», և մասնակցում է այդ միության կազմակերպած բոլոր հաջորդական ցուցահանդեսներին, «մեծայլ բնություններով (նատյուր մորտ), դիմանկարներով (պորտրե) և հատկապես ու առավելապես բնանկարներով (պեյզաժ), որի մեջ մասնագիտանում է։

Պեյզաժը նրա նախասիրած ժանրն է։ Պատահական չէ, որ արտասահմանյան նրա մոտ 200 գեղանկարների ճնշող մեծամասնությունը պեյզաժներ են։ Տիրական վարպետությամբ վրձինված, պայծառ ու գունեղ են նրա պեյզաժները, ընդհանրապես հանդարտ օպտիմիզմով հագեցված։ Նա մեզ տվել է բնությունն իր ամբողջ հարուստ այլազանության մեջ։ Գեղանկարչին առանձնապես սիրելի է բնության անդորրությունը, որ նա կարողանում է դարձնել պեյզաժներից մեծ մասի հիմնական լեյտ-մոտիվը։ Հայացքդ, ներվերդ ու հոգիդ հանգստանում են, խաղաղվում, զվարթանում, երբ նայում ես Շիշմանյանի վրձինած պեյզաժներին։

Գեղանկարչական բնության աշխատանքների հետ զուգընթացաբար, Շիշմանյանը աշքի է ընկնում և իր զարդանկարչական-գրաֆիկական գործերով։

Զարդանկարչության կոչումը նրա մեջ արթնանում է շատ վաղ, դեռ Կոստանդնուպոլսի Կենտրոնական դպրոցում աշակերտության տարիներին։ 1906—1907 թվականներին, պատանի Ռաֆայելը օգնում է այն ժամանակ Ղալաթիայի քարոզիչ Բարգեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյանին (հետագայում աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո), Ղալաթիայի ազգային մատենադարանի թվով ավելի քան 300 հայկական գրչագրերը ցուցակագրելու և դասավորելու գործում։ Այդ գրչագրությունների մեծ մասը զարդարված էր միջնադարյան հայկական վարպետների մանրանկարչական գործերով, զարդանկարներով։ Կային Կիլիկյան դպրոցի ականավոր վարպետ Սարգիս Պիծակից և ուրիշներից գործեր։ Ապագա նկարիչը խոր տպավորություն է կրում ազգային արվեստի հետ այս անդրանիկ շփումից։ Խորապես ուսումնասիրում է ձեռքի տակ ունեցած մանրանկարներն ու զարդագրերը։ Հետագայում, Շիշմանյանն ուսումնասիրում է նաև Փարիզի Ազգային մատենադարանի (Բիբլիոտեկ նասիոնալ) հայ

Ինքնանկար
(Գործ՝ նկարիչ Ռ. Շիշմանյանի)

գրչագրերը, ուշադիր կարդում է հայ մանրանկարչական արվեստի մասին գրված բոլոր հրատարակությունները, խոր ուսումնասիրության առարկա է դարձնում նաև ընդհանրապես արևելյան մանրանկարչական արվեստը, հատկապես արաբականն ու պարսկականը։

Իր հետագա գրաֆիկական աշխատանքներում, որ բազմաթիվ են ու շքեղ, Շիշմանյանը երբեք էլ մեխանիկորեն չի օգտագործել հայկական և արևելյան մանրանկարչության և զարդագրերի նմուշները, այլ միշտ՝ ստեղծագործորեն։ Իր գործերի մեջ, պահպանելով հանդերձ այդ արվեստներից յուրաքանչյուրի ազգային հիմնական դրոշմն ու ոգին, վերանորոգել և արդիականացրել է հնավանդ մոտիվները։

Շիշմանյանի զարդանկարչական բնության աշխատանքների մեջ առանձին հիշատակության արժանի են Փարիզի համալսարանական ուսանում Հայ ուսանողների տան, ինչպես նաև Փարիզի Նուպարյան մատենադարանի որմանկարները՝ նրբարվեստ գծերով և ներդաշնակ գույներով, արդիական հայկական ոճով։

Շիշմանյանի գործունեությունն արտասահմանում չի սահմանափակվում միայն գե-

ղանկարչական և զարդանկարչական բնագավառներում իր բազմաթիվ և բազմապիսի ստեղծագործություններով։ Մեծ է նրա վաստակը նաև որպես արվեստի տեսաբան։ Իր առաջին հոդվածը նա գրել է Կոստանդնուպոլսի «Մանզումեում» 1907 թվականին, երբ նոր էր ավարտել Կենտրոնականը, սկսնակ նկարիչ էր, Փարիզ անցնելու և նկարչական արվեստի մեջ կատարելագործվելու ցանկությամբ լի։ Այդ հոդվածում երիտասարդ Շիշմանյանը ընթերցողներին ծանոթացնում է հայ հանճարեղ ծովանկարիչ Այվազովսկու և միջնադարյան հայ վարպետների գործերի հետ։

Արտասահմանում գրված վերջին հոդվածը լույս տեսավ առաջինից ճիշտ քառասուն տարի հետո, 1947 թվականի սեպտեմբերին։ Փարիզի «Ժողովուրդ» թերթում, երբ հեղինակն արդեն մի քանի օրից ի վեր վերադարձել էր Հայրենիք։ Այդ հոդվածը նվիրված էր նկարիչ Շաուլ Ադամյանին։ Առաջին և վերջին հոդվածների միջև ընկած քառասուն տարիների ընթացքում, Շիշմանյանը գրել է բազմաթիվ հոդվածներ և տեսություններ՝ արվեստի հարցերի, ցուցահանդեսների, հայ և օտարերկրացի կերպարվեստագետների մասին, արտասահմանյան հայ մամուլի զանազան պարբերականներում, ալմանախներում և ուրիշ հրատարակություններում։ Դրանցից լավագույնները եթե ի մի հավաքվեին, կարող կլինեին կազմել մի շատ ծավալուն հատոր, ուր ընթերցողը կգտներ շատ նյութ՝ մի ամբողջ քառասնամյակ արվեստների ընդգավառներում տեղի ունեցած իրադարձությունների, հոլովող հարցերի, կերպարվեստագետների կյանքի և ստեղծագործությունների մասին, միջազգային թե հայկական չափանիշներով։

Էսպալիոսի նիս կամուրջը

(Գործ՝ նկարիչ Ռ. Շիշմանյանի)

Նշելի է և այն հանգամանքը, որ Շիշմանյանը, իր տեսական-քննադատական գործունեության մեջ, իր հետաքրքրության և համակրության տեսադաշտում միշտ ընդգրկել է սովետական կերպարվեստի նվաճումները, սովետական և սովետահայ կերպարվեստագետներին, այն էլ շատ վաղուց, դեռ 20-ական թվականներից։ Այդ մասին են վկայում, օրինակ, Շիշմանյանի հետևյալ հոդվածները՝ «Գեղարվեստները Խորհրդային

իրավակարգի մեջ», լույս տեսած Փարիզի «Երևան» թերթում, 1926 թվականի հոկտեմբերի 1-ին, «Միջազգայնությունը գեղարվեստի մեջ», լույս տեսած «Երևանի 1927 թվականի հունվարի 21-ի համարում, «Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյան», հրատարակված «Երևանի նույն տարվա հունվարի 30-ի համարում և այլն։

Արտասահմանում լույս տեսած նրա հոդվածներից քչերն են կրում հեղինակի բուն ստորագրությունը, կամ նրա անվան և ազգանվան սկզբնատառերը։ Մեծ մասի տակ դրված են Շիշմանյանի ծածկանունները— «Նազաշ Լճեցի», «Հրայր», «Հրաչ», և կամ պարզապես «Հ» սկզբնատառը, ինչպես նաև մի շարք ուրիշ ծածկանուններ։

Բոլոր այդ հոդվածները բացահայտում են հեղինակի մոտ արվեստի հարցերի և կերպարվեստագետների վերաբերյալ խորը հմտություն և հասկացողություն, և գրված են վճիտ և դյուրասահ լեզվով, գունեղ ու պատկերավոր ոճով։ Կարդացվում են գեղարվեստական երկի հաճելիությամբ։

Բացի իր մասնագիտության գծով հասարակական աշխատանքից, Շիշմանյանը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ավելի լայն առումով հասարակական գործունեության։ Եղել է հայրենասիրական-առաջադիմական ճակատի գործիչ, հանդիսացել է, 20-ական թվականներին ՀԿԿ-ի կենտրոնական վարչության անդամ, իսկ 40-ական թվականների կեսից՝ «Հայ ազգային ճակատի կենտրոնական վարչության անդամ, Հայաստանյան-հայրենասիրական ճակատի պրոպագանդայի և գեղարվեստական հանձնաժողովների նախագահ և այլն։

Ցնսարան Սրմյուսիլ

(Գործ՝ նկարիչ Ռ. Շիշմանյանի)

1947 թվականին Հայրենիք գալուց հետո նոր էջ բացվեց բազմավաստակ արվեստագետի կյանքում։ Իսկույն ևթ նա ընդունվեց Հայաստանի կերպարվեստագետների միության շարքերը և վայելեց Գեղարվեստական ֆոնդի նյութական լայն աջակցությունը։ Հետագայում նա ընտրվեց և վարչության անդամ։

Նկարչի Հայրենիք հասնելուց մի քանի շաբաթ հետո բացվեց Կերպարվեստագետների միության տարեկան ցուցահանդեսը, որին մասնակցելու հրավիրվեց նաև Շիշմանյանը մասնակցեց մի շարք գործերով, որոնցից երկուսը հատկապես՝ «Մարթիկի տեսարանը բարձունքից» և «Էսպալիոնի հին կամուրջը» առանձին դնահատանքի արժանացան։

Մի քանի ամիս հետո, 1948 թվականին, կերպարվեստագետների միությունը կազմակերպեց Շիշմանյանի արտասահմանյան ստեղծագործությունների անհատական ցուցահանդես. ցուցադրվել էին հայրենադարձ արվեստագետի գործերից 83 գեղանկար և մոտ 20 գրաֆիկական աշխատություններ։ Մայրաքաղաքի արվեստասեր հասարակայնությունը հետաքրքրությամբ և համակրանքով դիտեց ցուցահանդեսը։ Արձագանքեցին Երևանյան մամուլի համարյա բոլոր օրգանները ջերմ տողերով։

Այդ առիթով տպագրված հատուկ կատալոգում նկարիչ և արվեստի տեսաբան Էդ. Սարգսյանը, սեղմ բայց կուռ մի հոդվածով հանրագումարի բերելով նկարչի արտասահմանյան մոտ քառասնամյա վաստակը, գրում է ի միջի այլոց. «Աշխատելով առավելապես պեյզաժային ժանրի ընագավառում, նկարիչը ձգտել է բնության գեղեցկությունը պատկերել ռեալիստորեն, հմայիչ կենդանությամբ, ըմբռնելի յուրաքանչյուր դիտողի համար։ Իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում, անխախտ պահելով ռեալիստ գեղանկարչի համոզմունքները, վերծ մնալով ձևապաշտական դպրոցների ազդեցությունից, Շիշմանյանը կարողացել է շարունակ ընթանալ օպտիմիստական առողջ աշխարհազգացողության ճանապարհով, միշտ հավատարիմ բնության կենդանի կերպարին, նրանից ստացած լիրիկական զգայությանը։

Կերպարվեստագետների միության ընձեռած նյութական միջոցներով, հայրենադարձ արվեստագետը գործուղվեց Մոսկվա և Լենինգրադ, երկու մեծ քաղաքների կերպարվեստի թանգարաններում ռուս կլասիկ վարպետների և սովետական ականավոր կերպարվեստագետների ստեղծագործություններին ծանոթանալու, սովետական կերպարվեստագետների շրջանների հետ կենդանի շփում հաստատելու։ Արվեստագետն իր շրջագայությունից վերադարձավ խանդավառված, հարուստ տպավորություններով։

Չորս տարի (1948—1952 թ. թ.) նա ունեցավ մանկավարժական օգտակար գործունեություն, դասավանդելով գծանկարի առարկան Երևանի կերպարվեստի ուսումնարանում։

Միշտ էլ բնությունը խորապես սիրած, նրա բոլոր գաղտնիքների հետ մտերմացած, առավելաբար նրա պատկերմանը նվիրված արվեստագետը ջերմ խանդավառությամբ նվիրվեց հայրենի գեղածիծաղ բնության ուսումնասիրմանն ու պատկերմանը։ Եղավ Երևանի շրջակայքում, Արարատյան դաշտի զանազան վայրերում, Ծաղկաձորում, Սևանում։ Մասնակցելով ժողովրդական նկարիչ Գ. Գյուրջյանի գլխավորած շրջիկ արվեստանոցների էքսկուրսիաներին, այցելեց Լոռին, Զանգեզուրը։ Հայրենական բնությունից և տեսարժան վայրերից ոգեշնչված, ոչ պակաս քան երեսուն գեղանկար ստեղծագործեց ծերունազարդ վարպետը՝ ընդամենը յոթ տարվա մի ժամանակաշրջանում։ Այդ ստեղծագործություններից մեծ մասը նա ցուցադրեց Կերպարվեստագետների միության տարեկան ցուցահանդեսին։ Դրանցից մի տասնյակ գնվեց Կերպարվեստագետների միության կամ պետության կողմից՝ թանգարանի համար։ Հայրենիքում ստեղծագործված այս գործերի համար էլ նկարիչն ստացավ նյութական լայն վարձատրություն։

Անխոնջ արվեստագետը Հայպետհրատի հանձնարարությամբ կատարեց և բազմաթիվ գրաֆիկական աշխատություններ։ Նա ձևավորեց ու հորինեց մի շարք հրատարակությունների (մեծ մասը՝ երաժշտական) կազմերը, անվանաթերթերը, ենթատիտղոսները։ Ջերմ գնահատանքի արժանացած նրբարվեստ գործեր են դրանք։

Վաղեմի հրապարակախոս արվեստի քննադատը գրեց և մի շարք հոդվածներ՝ Արտասահմանի հետ մշակութային կապի Հայկական ընկերության «Սովետական Հայաստան» ամսագրում։

Շիշմանյանը ունեցավ մի շարք հմտալից ելույթներ՝ կերպարվեստագետների միության հավաքներում, արվեստի հարցերի և արվեստագետների մասին։

Նշված բոլոր գործերը դեռ չսպառեցին այս բեղուն, հարաշխատ մարդու եռանդը։ Նա շարադրեց և մի շարք ելկարաշունչ ուսումնասիրություններ։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի սեկտորի հրատարակությամբ շուտով լույս կտեսնի Շիշմանյանի երկը՝ նվիրված Էդգար Շահինի կյանքին ու գործունեությանը, իսկ Հայպետհրատի հրատարակությամբ նրա ավելի ևս երկարաշունչ աշխատանքը՝ «Պեյզաժը հայ նկարչության մեջ» սկզբից մինչև սովետական շրջանը։ Վերնագրով, 12 հեղինակային մամուլի սահմաններում։

Դեռ շատ սպասելիք ունենք տաղանդ ու հարուստ կենսափորձ, բեղուն և կազմակերպված միտք ունեցող և նաև դեռևս կենսառողջ ու անսպառ աշխատանքային եռանդով օժտված վաստակավոր վարպետից։



ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ.— Այս տարի լրանում է հայ մեծ լուսավորիչ, մեր նորագույն գրականության ու լեզվի հիմնադիր, անմահ Խաչատուր Աբովյանի ծննդյան 150-ամյակը։ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների Սովետը որոշում է կայացրել այդ նշանակալից տարեթիվը նշել սույն թվականի հոկտեմբերին։

Հոբելյանը նախապատրաստելու և անցկացնելու համար ստեղծված է կառավարական հոբելյանական հանձնաժողով՝ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Մոլչանովի գլխավորությամբ։ Հանձնաժողովի մեջ մտնում են գրողներ Ա. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Մ. Արազին, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Հր. Քոչարը, Հմ. Սիրազը, գրողների միության պատասխանատու քարտուղար, գրականագետ Էդ. Թոփչյանը, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, Մինիստրների Սովետի նախագահի տեղակալ Բ. Մարտիրոսյանը, կուլտուրայի մինիստր Ա. Շահինյանը, լուսավորության մինիստր Ե. Սիմոնյանը և ուրիշներ։

Խաչատուր Աբովյանի ծննդյան 150-ամյակը նշվելու է նաև Մոսկվայում, որի համար ՍՍՌՄ Գրողների միությունը կազմել է հոբելյանական հատուկ հանձնաժողով։

Մեծանուն գրողի հոբելյանի առթիվ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտը հրատարակում է Խ. Աբովյանի երկերի լիակատար ժողովածուն 8 հատորով։ Այդ հրատարակության 5 հատորներն արդեն լույս են տեսել։ Տպագրության են հանձնված 6-րդ և 7-րդ հատորները, որոնք լույս կտեսնեն ընթացիկ տարում։ Պատրաստվում է 8-րդ հատորը, որի մեջ կմտնեն հեղինակի հոդվածները և ազգագրական ուսումնասիրությունները։

Մենագրական աշխատություններ են հրատարակվելու «Լեռից Հայաստանին» վեպի ստեղծագործական պատմության, ինչպես նաև Խ. Աբովյանի կյանքի և ստեղծագործության մասին։

ՆԿԱՐԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ.— Երևանի հասարակայնությունը նշեց նկարիչ Մարտիրոս Սարյանի ծննդյան 75-ամյակը։

Մ. Սարյանը վրձինի մեծ վարպետ է, ակամա՛վոր սովետական նկարիչ, որի անունը քաջ հայտնի է ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս։ Իր երկարամյա բեղուն գործունեության ընթացքում նա ստեղծել է Հայաստանի բնությունը, նրա մարդկանց անմնացորդ աշխատանքը պատկերող հիանալի կտավներ, որոնք մտել են սովետական կերպարվեստի գանձարանը։

Ահա թե ինչ է գրում տաղանդավոր նկարչի ծննդյան 75-ամյակի առթիվ մեր մեծանուն բանաստեղծ Ա. Իսահակյանը. «Մ. Սարյանի արվեստը լավատես է, կենսուրախ, գարնանային թարմությամբ թաթախուն։ Կյանքի սեր է զարթեցնում մեր մեջ նա, ապրեցնող է, բերկրանք հորդող... Մ. Սարյանի գործերը մեր նկարչական արվեստի հաղթանակն են, մեր կուլտուրայի աննախադեպ զարգացման։ Բայց որ գլխավորն է, Սարյանը ազգային կուլտուրայի նկարիչ է։ Նրա արվեստի արմատները սուզվում են մեր հին արվեստի մեջ։»

Մ. Սարյանի ծննդյան 75-ամյակի կապակցությամբ Երևանում տեղի ունեցավ հոբելյանական հանդիսավոր նիստ։ Նկարչին ողջունեցին ռեսպուբլիկական շատ կազմակերպությունների և հաստատությունների ներկայացուցիչներ։ Ստացվել էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր Սովետական Միության տարբեր վայրերից։

Հայաստանի Պետական պատկերասրահում բացվել է Մ. Սարյանի ստեղծագործությունների ցուցահանդես, ուր ներկայացված են շուրջ 400 գործեր։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Սույն թվականի հունիսի 4-ից 7-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի ճարտարապետների 3-րդ համագումարը։ Համագումարի աշխատանքներին մասնակցում էին Մոսկվայից, Լենինգրադից, Ուկրաինայից, Ադրբեջանից, Վրաստանից, Ուզբեկիստանից, Թուրքմենիայից, Մոլդավիայից, Տաջիկիստանից հրավիրված շատ ճարտարապետներ, ինչպես նաև բազմաթիվ այլ հյուրեր՝ ինժեներներ, գծագրողներ, շինարարներ և այլն։ Համագումարի բացմանը ներկա էր նաև մեծանուն բանաստեղծ Ա. Իսահակյանը, որը ողջույնի խոսքով դիմեց ներկա եղողներին։

Համագումարը լսեց ու քննարկեց ճարտարապետների միության վարչության հաշվետվությունը, ինչպես նաև այլ զեկուցումներ ռեսպուբլիկայի ճարտարապետների առջև խնդիրների և Երևան քաղաքի վերակառուցման հարցերի վերաբերյալ։

Վերջում ընտրվեց Հայաստանի ճարտարապետների միության վարչություն, բաղկացած 17 հոգուց։ Վարչության նախագահ ընտրվեց ճարտարապետ Հովհաննես Մարգարյանը։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ.— Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ավարտվեցին քննությունները։ Ռեսպուբլիկայի ուսումնական այդ հաստատություններն այս տարի տվեցին ընդամենը 3.300 շրջանավարտներ։ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտեցին տարբեր մասնագիտության 270 ինժեներներ։ 250 հոգի ավարտեցին բժշկական ինստիտուտը, 500 հոգի՝ Գյուղատնտեսական և անասնաբուժական-անասնաբուժական, 700 հոգի՝ Երևանի և Լենինականի մանկավարժական ինստիտուտները և այլն։ Պետական համալսարանի 9 ֆակուլտետներն ավարտեցին 576 տղաներ և աղջիկներ։

ՖԻՆԼԱՆԴԱՑԻ ԵՐԱԺՇՏԱԳԵՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ.— Ֆինլանդացի հայտնի երաժշտագետ-դիրիժոր Տաուստ Հանենիկայնենը, որը այս գարնան այցելել էր Սովետական Միություն և համերգներով

հանդես եկել Մոսկվայում, Լենինգրադում և Երևանում, հայրենիք վերադառնալուց հետո «Ֆինլանդիա» Սովետական Միությունում ընկերության ամսագրում տպագրել է իր ճանապարհորդական տպավորություններ, որտեղ Հայաստանի մասին գրել է հետևյալը.

«Հայաստանում, ուր ես ժամանեցի 3 օրով, ինձ դիմավորեցին ամառը և ծաղիկների բուրմունքը։ Երևանում տված համերգից հետո ես ստացա հատուկ մի հսկայական փունջ։ Երևանի սիմֆոնիկ նվագախումբը բավական երիտասարդ է, այդ իսկ պատճառով նա չի գտնվում այն բարձրության վրա, ինչ որ Լենինգրադի և Մոսկվայի նվագախմբերը։ Ընդհանրությունն այստեղ չափազանց լեռնային էր։ Երբ ես դուրս եկա դեկավարելու նվագախումբը, հասարակությունն ինձ դիմավորեց ծափերով։ Ես բարձրացրի ձեռքս և հայերեն լեզվով հայտնեցի իմ շնորհակալությունը։ Դրան ի պատասխան բարձրացավ ծափերի մի իսկական փոթորիկ։ Ինձ նվիրեցին հայ երաժշտագետների պարտիտուրաներ՝ առանձին մակագրություններով։ Ես զարմացած էի այն բանով, որ բոլոր հայ երաժշտագետները բավական երիտասարդ են։

Երևանում ես նորից եղա Հայկական ժողովրդական հրդեհ-պարի անսամբլի համերգին։ Անսամբլը բաղկացած է հիանալի երաժիշտներից, երգիչներից և պարողներից։ Այդ համերգը չափազանց հետաքրքիր էր։

Հայերը գոհունակությամբ և ոգևորությամբ պատմում էին իրենց կյանքի ու ձեռք բերած նվաճումների մասին։ Ես այն տպավորությունն ստացա, որ Սովետական Միությունում տեղի է ունենում բազմակողմանի ստեղծագործական աշխատանք։»

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ.— Ուսումնական տարվա ավարտման կապակցությամբ, տեղի ունեցավ Երևանի Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիայի (երաժշտական բարձրագույն ուսումնարանի) օպերային երգեցողության դասարանի ուսանողների հաշվետու ներկայացումը։ Ելույթ ունեցավ ուսումնական տարվա երաժշտագետ Պ. Զայկովսկու անվան Օպերային հրաշակավոր օպերան։ Գլխավոր դերերը կատարում էին բարձր դասարանների ուսանողները։ Ներկայացումն անցավ մեծ հաջողությամբ և ցույց տվեց, որ կոնսերվատորիայում կրթվում են օպերային արվեստի շնորհալի ուժեր։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԳՈՐԻՍՈՒՄ.— Գորիսը Զանգեզուրի կենտրոնն է։ Այգիների մեջ թաղված կոկիկ, գեղեցիկ այս քաղաքը արագորեն զարգանում է։ Հետպատերազմյան տարիներին այստեղ ստեղծվել են արդյունաբերական նոր ձեռնարկություններ, կառուցվել են շատ շենքեր ու բնակելի տներ, ասֆալտապատվել են կենտրոնական փողոցները։

Քաղաքն ունի երեք հանրակրթական դպրոց, մանկավարժական և գյուղատնտեսական ուսումնարաններ, քաղաքային դրամատիկ թատրոն, նորակառուց կինոթատրոն, բարեկարգ հիվանդանոցներ և բուժարաններ։ Գորիսի կուլտուրական հաստատություններից մեկն է Զանգեզուրի գավառագիտական հարուստ թանգարանը։

Վերջերս նշվեց Զանգեզուրի գյուղատնտեսական ուսումնարանի (տեխնիկումի) գոյության 25 տարին։ Իր գոյության 25 տարվա ընթացքում ուսումնարանը ավել է մոտ 800 մասնագետներ՝ գյուղատնտեսության տարբեր բնագավառների համար։ Ներկայումս ուսումնարանում սովորում են 300 պատանիներ և աղջիկներ։

ՊԵՂՈՒՄՆԵՐ ՎԱՄԻԱՆԻ ԵՐՋԱՆՈՒՄ.— Ավարտվեցին Էջմիածնի շրջանի Արագած գյուղի շրջակայքում կատարվող պեղումները, որ կատարում էր Մատենադարանի զորձերի վարչությունը։ Պեղումների արդյունքներն ապացուցում են, որ այստեղ եղել է ուրարտական շրջանի քաղաքատեղի։ Հայտնաբերվել է բնակելի տուն՝ բաղկացած 3 սենյակից և բակից։ Սենյակներից մեկում, որն, ըստ երևույթին, ծառայել է որպես մատան, գտնվել են մեծ կարասներ՝ փշրված վիճակում։ Այս տունն իր կառուցվածքով ու ձևով նման է կարմիր բլուրում (Երևանի մոտ) հայտնաբերված բնակելի շենքերին, որոնք, ինչպես հայտնի է, նույնպես պատկանում են ուրարտական շրջանին։

Պեղումների արդյունքները հնարավորություն տվին կազմելու պատմական այս բնակավայրի մի քանի մասերի ամբողջական գծագրությունը։ Այս ամրոցը ուրարտական շրջանի Ճարտարապետական հետաքրքիր կոթողներից մեկն է եղել։

Միաժամանակ Ճարտարապետական զորձերի վարչությունը ձեռնամուխ է եղել Մաղկանոցի պատմական վանքի վերականգնման աշխատանքներին։ Վանքի քարե կամարը վերականգնվելու է նախնական տեսքով։ Շենքի ներսում բացվելու է փոքրիկ թանգարան, ուր կենտրոնացվելու են վանքին վերաբերող դանազան նյութեր, նմուշներ։

ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՐ ԹԵՄԵՐԸ

Ի. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԸ

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամսագիրը մեծ չափով սպառվում է մեր Հայրենիքի թեմերում և Սովետական Միության մեջ, և ընդառաջելով վերջերս ընթերցողների կողմից հայտնված՝ Սփյուռքի մեր թեմերի մասին տեղեկություններ ունենալու գրավոր ու բերանացի ցանկություններին, և մանավանդ ամրապնդելու և սերտացնելու համար կապը Մայր Հայրենիքի և Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական թեմերի, որոնք մի օրգանական ամբողջություն են կազմում ազգային-եկեղեցական տեսակետից, որոշել է, ամսագրի էջերում, Հայրենիքի իր ընթերցողներին ամփոփ տեղեկություններ հաղորդել Սփյուռքի հայ գաղութների և մեր եկեղեցական թեմերի կյանքի և գործունեության մասին։— ԽՄԲ.։

Այս անգամ ցանկանում ենք խոսել Սփյուռքի մեր գաղութներից և թեմերից հեռավոր Հարավային Ամերիկայի թեմի մասին, այն պարզ պատճառով, որ այդ թեմը համեմատաբար նոր է, գտնվում է իր կազմավորման, կազմակերպչական ջոջանում, և ուր տարվում է արդյունավետ աշխատանք, ազգային-եկեղեցական իմաստուն քաղաքականությամբ, առաջնորդվելով միշտ Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և մեր Հայրենիքի գերագույն շահերից։

Գաղթականությունը՝ հազարամյակներով հայ ժողովրդի անցյալի պատմության միշտ ընկերացող ամենամռայլ երևույթներից մեկն է եղել։ Անցյալում հայ աշխատավոր ու խաղաղասեր ժողովուրդը, իր երկրում չգտնելով կյանքի, պատվի, ինչքի ապահովություն, թողնելով հայրենի տուն ու օջախ, վիրավոր սրտով, մերթ կամավոր, մերթ ստիպի ընկել է պանդխտության դավաճան, անարև ճանապարհների վրա, և հանուն մի պատառ հացի, հանուն մի կաթիլ խաղաղության, գաղթականի ցուպը ձեռքին, թափառել է երկրե երկիր, զզվելի մոլորական աստեղաց...։ Բայց տխուր ճակատագիրը ուր էլ որ քշել է նրան, նա՝ հայ ժողովուրդը, իր հոգու խորքում միշտ վառ ու պայծառ է պահել իր նախնյաց հավատքի նվիրական հուրը և բազմաչարչար, խոցոտված իր Հայրենիքի ջերմացնող գաղափարը։

Այսպես է եղել պատմությունը մեր բոլոր գաղութների։

Եվ ահա Համաշխարհային առաջին պատերազմից հետո, երբ մի նոր ու ավելի ահավոր փոթորիկ անցավ հայ ժողովրդի դըլխով, և երբ մեր ժողովուրդը, հատկապես արևմտյան հատվածը, քշվեց իր պապենական պատմական հողերից, Ս. Էջմիածնից և Հայրենիքի հողից մղոններով հեռու, Հարավային Ամերիկայի հյուրընկալ ափերի վրա, բրազիլիական և արգենտինյան ազնիվ ժողովուրդների ասպնջականությամբ, նորից ոտքի կանգնեցին մեծ արհավիրքից ազատված հայության բեկորները և սկսեցին նորից ապրել ու ստեղծագործել։ Քար առ քար նորից դարձրացավ և ամրապնդվեց Հայ Ազգային Տունը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, նորից հնչեց Հայ Եկեղեցու հյուրընկալ ու քաղցր կոչնակը, և հայ մանուկներ նորից իրենց գողտրիկ դպրոցները խոնարհեցրին

Մեսրոպյան տառերի առաջ, ու ամեն տեղ նորից թնդաց հայ երգն ու հայ խոսքը։ Հեռավոր այդ ափերի վրա հայ ժողովրդի բեկորները «և՛ շինում են և՛ երգում, ամեն մի շուտ կպցնելիս, առաջվա բույնն են հիշում...»։

Ինչպես հայտնի է, հայրապետական բարձր հրամանով և կարգադրությամբ տարիներ առաջ ստեղծվեց Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակություն, որը հովվում և ղեկավարում է Հարավային Ամերիկայի երեք թեմերը՝ Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի թեմերը։

Հարավային Ամերիկայի արևելյան մասը համարյա ամբողջությամբ գրավում են երկու խոշորագույն երկրներ՝ Բրազիլիան և Արգենտինան, և ուր համախմբվել է ողջ հայ գաղութը։

1. ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԹԵՄԸ.—Հարավային Ամերիկայի հայ թեմի կենտրոնն ու սիրտն է հանդիսանում Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս-Այրեսը, որը հարավային կիսագնդի խոշորագույն քաղաքն է և համաշխարհային նշանակություն ունեցող նավահանգիստ, ուր և նստում է Հայրապետական պատվիրակը։ Բուենոս-Այրեսում համախմբված են նաև թեմի ազգային-եկեղեցական կազմակերպությունները՝ Հայ եկեղեցասեր տիկնանց միությունը, Հայաստանյայց Եկեղեցու երիտասարդական կազմակերպությունը, կիրակնօրյա դպրոցների վարչությունը, Գաղութային կենտրոնական վարչությունը, Հայ մշակութային հանձնախումբը, մամուլը, «Կոմիտաս» երգչախումբը, դպրոցների հոգաբարձությունները, հայրենակցական և ազգային այլ կազմակերպությունների վարչությունները։

Արգենտինայի թեմը իր մեջ հաշվում է մոտ 5.000 հայ ընտանիք, 30.000 անհատներով։ Թեմում ազգային-եկեղեցական կյանքը դրվել է ամուր և առողջ հայրենասիրական-եկեղեցական հիմքերի վրա, շնորհիվ Հայրապետական պատվիրակի շրջահայաց և իմաստուն ղեկավարության և ազգային մարմինների անշահախնդիր և համերաշխ գործակցության։ «Ազգային ու եկեղեցական կյանքը կենսունակ է, մեղվաջան աշխատանք կկատարվի մեր եկեղեցիներու, մատուռներու, վարժարաններու և ազգային ակումբներու շուրջ, կրթական, մշակութային ու հայրենակցական կազմակերպությունները իրարու հետ կմրցին իրենց ձեռնարկներով, հանդեսներով, երաժշտական համերգ-համանվագներով ու դասախոսություններով» («Հայ կեդրոն», 1954 թ., էջ 273)։

Նոր սերնդի հայեցի և քրիստոնեական դաստիարակության գործը գտնվում է կարող մանկավարժ ու գիտակից ուսուցիչների և կրթական հանձնախմբի ձեռքում։ Մայրաքաղաքում և արվարձաններում գործում են ավելի քան տասը հայկական դպրոցներ՝ Կենտրոնական, Արսլանյան, Մամիկոնյան, Խրիմյան, Մեսրոպյան, Բաֆֆի և ոտիչ դպրոցներ, 600 աշակերտների ընդհանուր թվով։ Այդ թիվը չափազանց անբավարար է բաղդատմամբ այդ համայնքի հոծ թվին։ Տխուր է արձանագրել, որ հայ ծնողներից շատերը այստեղ էլ իրենց երեխաներին ուղարկում են օտար կրթական հաստատություններ, մի երևույթ, որի դեմ վճռականապես պայքարում է ազգային-եկեղեցական իշխանությունը։ Այնուամենայնիվ, թեմում կրթական-դաստիարակչական գործը օրավուր ամրապնդվում է շնորհիվ թափված անդուլ ջանքերի և Կենտրոնական վարչական խորհրդի լրջամիտ ու անկողմնակալ, համեստաշխ ու օգտակար աշխատանքի, շնորհիվ Հայրապետական պատվիրակի, իր փոխանորդի և կրթական տեսչի, կրթական հանձնախմբի և ուսուցչական կազմի անձնվեր ու ազգօգուտ աշխատանքների։

Ի մեծ ուրախություն հայ ժողովրդի, 1954 թվի ապրիլի 4-ին, հանդիսավոր իրադրության մեջ, հավատացյալ ժողովրդի խուռն բազմության ներկայությամբ, Հայրապետական պատվիրակի օրհնությամբ, մեծահանդես շքով կատարվեց մայրաքաղաքի հայոց առաջնորդարանի հիմնարկեքը։ Առաջնորդարանի շինությունը ռանկյունագարձ մըն է այս գաղութի պատմության մեջ, նոր շրջանի մը նախաբերը, իբրև հիմնաքար ազգային կյանքի նոր շենքին, որ պիտի բարձրանա քար առ քար և պիտի շարունակվի ավելի մեծ ու ընդարձակ գործերով հաստատուն հիմերու վրա դնելու համար մեր համայնքի ազգային գոյության կռվանները— ազգապահպանման կենսատու վառարանները— հայ հավատքի Տաճարը և Մշակույթի օջախները»,— գրում է Հայրապետական պատվիրակը։

Թեմում օրինակելի փարձության վրա է դրված եկեղեցական հոգևոր կյանքը, որը հայեցի և քրիստոնեական սնունդ է մատակարարում հայ հավատացյալ հոգիներին։ Անխափան թեմի բոլոր եկեղեցիներում, մատուռներում պաշտվում է ժամերգությունն ու սուրբ պատարագը, և բանին կենաց քարոզությամբ, կրոնաբարոյական, ազգային-եկեղեցական դասախոսություններով, թեմի ժողովուրդը ապրում է հոգևոր դարթոնքի մի նոր ու խոստումնալից շրջան։ Հայրապետական պատվիրակի ջանքերով կազմվել են Հայ Եկեղեցու Երիտասարդաց և Եկեղեցասեր տիկնանց միություններ, իրենց զանազան ենթահանձնաժողովներով, հայ հավատացյալ ժողովրդին և նոր աճող սերնդին Հայ Եկեղեցու շուրջ համախմբելու և հայ անկրկնելի արժեքներին հաղորդ դարձնելու և

ազգային ձուլումից փրկելու աղնիվ նպատակներով։

Թեմում իր կոչման բարձրության վրա է գտնվում հայ ազգային-հոգևոր մամուլը՝ «Հայ Կեդրոն», որը թևակոխել է իր հրատարակության 23-րդ տարին և պատվով է կատարում իր դերը գաղութի ազգային-եկեղեցական, հոգևոր կրթական գործերում, և մրտնում է ամեն տուն, ուտանելու համար Հայ եկեղեցվո հավատքի լույսը, կրոնական մաքուր շունչը, քրիստոնեական սիրո ոգին, կեդրոնական վարչության գործունեության բերական նշանակությամբ մրցում է մայրաքաղաքի՝ Ռիո-Դե-Ժանեյրո նավահանգստի հետ։

Բրազիլահայ թեմն էլ գտնվում է իր խաղաղ կազմակերպման շրջանում, որտեղ ազգային-եկեղեցական կյանքը գտնվում է բարգավաճ վիճակում, շնորհիվ ազգային իշխանությունների ողջամիտ ու շրջահայաց ղեկավարության։ Սան-Պաուլոյում կա Ս. Գեորգ մայր եկեղեցին, որը կառուցված է ազգային բարերար Ժորժ Ռազալլահի նվիրատվությամբ. կա փառավոր մի հակական

Հարավային Ամերիկայի թեմի Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիսակ եպիսկոպոս Մաճուկյանը Ս. Էջմիածնում տարկավագների հետ. 1954 թվականի մայիսին։

և եկեղեցական ու կրթական կազմակերպությանց լուրերն ու կյանքը» («Հայ Կեդրոն», 1954 թ., էջ 384)։

Հրատարակվում է նաև «Մասիս» մանկական ամսագիրը, հոգեշնորհ Հարությունվարդապետ Մուշյանի խմբագրությամբ, որը և հրատարակում է «Հայ Կեդրոն» տարեցույցը։

2. ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԹԵՄԸ.— Այս թեմի հայ համայնքը ինքն իր մեջ հաշվում է մոտ 6.000 հոգի և հիմնականում համախմբված է Սան-Պաուլո քաղաքում, որը սուրճի կենտրոն է և իր առևտրական, ֆինանսական, արդյունաբերական կենտրոնով մրցում է Ռիո-Դե-Ժանեյրոյի հետ։

Բրազիլահայ թեմն էլ գտնվում է իր խաղաղ կազմակերպման շրջանում, որտեղ ազգային-եկեղեցական կյանքը գտնվում է բարգավաճ վիճակում, շնորհիվ ազգային իշխանությունների ողջամիտ ու շրջահայաց ղեկավարության։ Սան-Պաուլոյում կա Ս. Գեորգ մայր եկեղեցին, որը կառուցված է ազգային բարերար Ժորժ Ռազալլահի նվիրատվությամբ. կա փառավոր մի հակական պարոց՝ մեծ ու արդիական սրահով, ուր հաճախում են մոտ 200 հայ աշակերտներ, ինչպես նաև առաջնորդական պաշտոնատուն։ Սան-Պաուլոյում պաշտոնավարում են երեք քահանա հայրեր։ Հայրապետական պատվիրակը հաճախակի հովվական այցելություններով և իր իմաստուն վարչագիտությամբ հսկում և ղեկավարում է այս թեմի գործերը, ազգային իշխանության համերաշխ գործակցությամբ։ Վերջերս Հայրապետական պատվիրակ սրբազանը եղել է Բրազիլիայի թեմում մոտ 2 ամիս, զբաղվելով տեղական ազգային-եկեղեցական, կազմակերպչական և այլ հարցերով։

3. ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԹԵՄԸ.— Հարավային Ամերիկայի մեր երկրորդ բազմամարդ համայնքն է Ուրուգվայի թեմը, որտեղ համախմբված է մոտ 8.000 հոգի։ Այստեղ ևս, ինչպես և մյուս թեմերում, ազգային-եկեղեցական կյանքը գտնվում է մի իթարական վիճակում։ Եթե սրանից մոտ մի երեսնամյակ առաջ Հարավային Ամերիկայի այս հեռավոր ափերում ոտք կոխած հայ ժողովրդի գաղթական բեկորները չունեին անձնական ու ազգային որևէ սեփականություն, բացի իրենց աշխատասիրությունից, նորից ապրելու և նորից բարձրանալու անբեկանելի վճռականությունից, այսօր, շնորհիվ իրենց արդար աշխատանքի, տիրացել են անձնական ու ազգային շատ կալվածների, վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում։ Ուրուգվայի թեմում էլ վերջերս դնվել և շինվել են մի շարք ազգային սրահներ ու շենքեր, ինչպիսին է, օրինակ, եկեղեցու մշակութային սրահը, որը իր մեծությամբ և գեղեցկությամբ այլն ընկնող հաստատություններից մեկն է։ Վերջերս Հայրապետական պատվիրակի թելադրությամբ և թեմի հանրածանոթ ազգային և վարչության ատենապետ պարոն Գրիգոր Բեռկամայիի նախաձեռնությամբ սկսվել է հանգանակության հայ եկեղեցու շինության համար, և նույն պարոն Բերկամայիի, Բագրեճյան տան, Մ. Գուլուճյանի, Հ. Տիարպեքիրյանի և Գեորգ Ջընեոզյանի կողմից խոստացվել է տեղական 150.000 բեսո դրամարկ։ «Հայ Կեդրոնը ցանկություն է հայտնում, որ նոր տաճարի շինությունը լինի դաղութում «համերաշխության ու համայնքի խաղաղության պատճառ, իբրև հայ հավատքի վառարան ու մշակույթի տուն։

Հարավային Ամերիկայի թեմի մեջ են մտնում նաև Կորդոբայի և Չիլիի (արևմտյան ափ) հայ գաղութները, որտեղ ևս ջանքեր են թափվում կազմակերպելու տեղական ազգային-եկեղեցական կյանքը, եկեղեցու և դպրոցների շինարարությամբ։ Հայրապետական պատվիրակը վերջերս եղել էր նաև այս երկու գաղութներում, կազմակերպչական նպատակներով։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ՍՐԲԱԶԱՆԸ. — Հարավային Ամերիկայի թեմի Հայրապետական պատվիրակն է ամենքից սիրված ու հարգված, Սիյուռքի մեր բարձրատիճան հոգևորականության կարկառուն դեմքերից մեկը՝ հարենասեր ու հավատավոր գերապատիվ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանը, որը, յորում ոչ գոյ նենգութիւն։

Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում պատանի Սարգիսը (ապագա Սիոն սրբազանը) Վանի 1915 թվի գաղթի ժամանակ կորցնում է իր բոլոր սիրելիներին և հարազատներին տարագրության արյունոտ ճանապարհի վրա և որբացած՝ ընկնում է Նահր-Օմարի (Իրաք) հայկական որբանոցը, նույն տխուր ճակատագրին ենթարկված իր ընկերների՝ այժմյան Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի, Սերովբե ծայրագույն վարդապետ Մանուկյանի, Հարությունն վարդապետ Աբրահամյանի, Հայրիկ վարդապետ Ասլանյանի և ուրիշների հետ։

Ռատմնատենչ երիտասարդ Սարգիսը, ապա, Դուրյան Պատրիարքի օրով Երուսաղեմում բացված ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի ամենաաչքի ընկնող ուսանողներից մեկն է հանդիսանում. նա սովորում է գերազանց գնահատականներով և իր բարեմտությունն, աղնիվ բնավորությամբ նվաճում է բոլորի հարգանքն ու սերը։ 1930 թվին, նա ուխտում է աննահանջ սիրով ու անսուտ նվիրումով ծառայել իր ժողովրդին ու եկեղեցուն, և այդ իսկ պատճառով կուսակրոն քահանա է Ձեռնադրվում, Երիտասարդ ու զարգացած հոգևորականի առաջ բացվում է գործունեության լայն ասպարեզ։ Նա դասավանդում է ժառանգավորաց վարժարանում և միաժամանակ այնքան ձեռնհասորեն վարում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի այնքան բարդ ու պատասխանատու կալվածոց տեսչությունը։

1935 թվից հետո Սիոն վարդապետին տեսնում ենք հովվական-առաքելական պաշտոններում, որտեղ ի հայտ է բերում վարչական-կերպարական իր ընդունակությունները։

1945 թվին եպիսկոպոսանում է Պրազիլեն-սի հովվության ժամանակ։

Հոգելույս Տ. Տ. Գեորգ Ջ. Կաթողիկոսը բարձր գնահատելով Սիոն սրբազանի ծառայություններն ու հովվական պաշտոնավարության ընթացքում ցուցաբերած վարչագիտությունն ու ազգային-եկեղեցական իմաստուն քաղաքականությունը, նրան Իր հայրապետական բարձր ուշադրության արժանացնելով նշանակում է Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ։

Սիոն սրբազանը դափնիների վրա հանգրստացողը չէ. նա իր նոր ու պատասխանատու պաշտոնում արդարացնում է իր վրա դրված հայրապետական բարձր վստահությունը, և Հարավային Ամերիկայի թեմն կազմակերպում և ղեկավարում իր օրինակելի թմախնդրությամբ և գովելի նախանձախնդրությամբ, նվաճելով իր հոտի որդիական անկեղծ սերն ու արժանանում հայրապետական բարձր գնահատության։

Սիոն սրբազանը որպես Հայրապետական պատվիրակ, միշտ էլ գտնվել է իր կոչման և պարտականության բարձրության վրա, աշխատել, ղեկավարել, խոսել ու գրել իր ժողո-

վերդի, իր Հայրենիքի, Մայր Աթոռի առաջ իր ունեցած պարտքի և կոչման խորը գիտակցությամբ, իր շուրջը համախմբելով գաղութի լավագույն հոգևորական ու աշխարհական տարրերին։

Սիոն սրբազանը մեր նորագույն ազգային-եկեղեցական մատենագրության սիրված դեմքերից մեկն է։ Իր հովվական ծանր ու սրտմաշուք պարտականությունների հետ նա զբաղվում է նաև իր հոտի հոգևոր-դաստիարակչական աշխատանքներով։ Նրա բեղուն գրչին են պատկանում մի շարք արժեքավոր սուրբգրական մենագրություններ, պատմական-գանասիրական և աստվածաբանական ուսումնասիրություններ։

Սրբազանը վերջերս նորից եղավ Մայր Հայրենիքում և Ս. Էջմիածնում, լուսահոգի Տ. Տ. Գեորգ Զ.ի մահվան տխուր առիթով։ Վերադարձին Սիոն սրբազանը ավելի քան 70 հայրենասիրական ելույթներ է ունեցել Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի մասին, ամեն տեղ հնչեցրել է իր հայրենասիրական անկեղծ ձայնը, պատմելով իր ականատեսի վկայություններն ու հուշերը Հայրենիքից և Մայր Աթոռից։

Ահա 25 տարի է, ինչ Սիոն սրբազանը աննահանջ սիրով, սրտառուչ հավատարմությամբ ծառայում է իր հոտին և իր Եկեղեցուն օրինակելի պաշտոնավարությամբ, որպես հոգևոր հովիվ, ուսուցիչ, բանին կենաց քարոզիչ, Հայրապետական պատվիրակ։ Իր թեմը նախապատրաստվում է արժանավայել մեծարանքով տոնելու սրբազանի քահանայության և հովվական պաշտոնավարության 25-ամյա հոբելյանը, որը գեղեցիկ առիթ պիտի լինի հասարակական մեծարանքի և գնահատության։

Սիոն սրբազանը գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման ու հասունության շրջանում։ Ազգը և Եկեղեցին երախտագետ զգացմունքներով նրանից սպասում են նոր ծառայություններ, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, որի արժանավոր և հավատավոր սպասավորներից մեկն է Հայրապետական պատվիրակ Սիոն սրբազանը։

ԵՂԻՇԵ ԱԲԵՂԱ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՎԵՍՏ»

ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ի. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1965 թ., 870 էջ)



Հայ ժողովրդի ստեղծած հարուստ մշակույթի գանձարանում այդի ընկնող տեղ է գրավում հայկական զարդարվեստը, որն իր ակունքները ստանալով դեռևս նախնադարյան հասարակարգում, չտեսնված զարգացման ու կատարելագործման է հասել մեր օրերում։

Հայկական զարդարվեստի քաղմահազար և երևելի մոտիվները, հնագույն ժամանակներից սկսած, իրենց անջնջելի կնիքն են դրել նյութական մշակույթի անխտիր բոլոր արժեքների վրա։ Նրանց զարդարել են մարդկանց բնակարանները, տնտեսական կահ-կարասիքը, գործիքները ու ձեռագրերը, զգեստներն ու հուշարձանները։ Այդ զարդանմարներից մենք որոշակի գաղափար ենք կազմում հայ ժողովրդի ստեղծագործական մտահղացումների, նրա տաղանդի ու հանճարի մասին։

Հայ ժողովրդի ստեղծած հարուստ արվեստի այդ կարևոր ճյուղի ուսումնասիրությանն է նվիրված Ա. Ե. Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» աշխատությունը։

Ցնցված 19-րդ դարի կեսերից սկսած հրապարակվել են հայ արվեստի տարբեր ճյուղերին նվիրված առանձին հոդվածներ, այլոմներ, ուսումնասիրություններ, որոնց մեջ շոշափվել են նաև հայկական զարդարվեստի հարցերը, սակայն մինչև օրս մենք չունենք այդի ընկնող առանձին աշխատություն նվիրված հայկական զարդարվեստին։ Հայկական զարդարվեստի հիմնական մոտիվների ծագման ու զարգացման բովանդակության հարցերը, որոնց զարդարվեստի կարևոր հարցերից են, ոչ ոքի կողմից դեռ առաջ չէին քաշվել ամբողջականությամբ և չէին լուսաբանվել, փակ նշված խնդիրների պարզաբանումը խիստ կարևոր է մեր մշակույթի պատմության համար ընդհանրապես, որովհետև զարդարվեստի քաղմահազար մոտիվները քարացած չեն կանգնել մի կետում, այլ դարերի ընթացքում վերամշակվել, զարգացել ու փոփոխվել են, արտացոլելով իրենց կերտողների ու տարածողների կյանքի պատմությունն ու մտածողությունը։ Առանց այդ կարևոր հարցերի պարզաբանման, հասկանալի է, չի կարելի ճիշտ բմբռնել և գնահատել մեր մշակույթի այս կամ այն արտադրանքն առանձին վերցրած։ Ա. Մնացականյանի աշխատությունը գալիս է սահ լրացնելու այդ բացը։

Ա. Մնացականյանի ներկա աշխատությունը բաղկացած է ներածությունից և հետևյալ ինը գլուխներից՝ «Ծաղիկները և վարսանգապայիսի օրգանները զարդարվեստում», «Հատիկաձևային մոտիվները զարդարվեստում», «Ցորեն էլեմենտները և նրանց հետ կապված մոտիվները զարդարվեստում», «Մեղու, զավակի և նրանց հետ կապված մոտիվների առաջացումը զարդարվեստում», «Տոհմա-ընտանեկան հարաբերությունների առաջացումը զարդարվեստում», «Դուալ և ֆրատրիալ կազմավորների հետքերը զարդարվեստում», «Մուտ, խորան, սյուն, մատուռ, գրքեր, աշտարակ, տաճար, գավազան, տարազ, և նրանց զարդերը», «Տոհատանդեսների, ծեսերի, միտոլոգիաների հետ կապվող մոտիվները ու բաղադրյալ տեսարանները զարդարվեստում», «Գայլաբի մոտիվները և վիշապամարտի դիցաբանությունը զարդարվեստում»։

Գրախոսվող աշխատության կարևոր արժանիքներից մեկն այն է, որ հեղինակը ոչ միայն չի սահմանափակվում առանձին զարդամոտիվների նկարագրությամբ, այլև իր գլխավոր ուշադրությունը դարձնում է հայկական զարդարվեստի հիմնական մոտիվների ծագման ու գաղափարական բովանդակության բացահայտման հարցերի վրա։

Հեղինակը, ամենից առաջ, հենվելով փաստական հարուստ նյութերի վրա, ժխտում է սխալ այն ըմբռնումը, ըստ որի զարդարվեստի մոտիվները մարդկանց միստիկական պատկերացումներն, իրական կյանքից կտրված երևակայության արգասիքն են։

Դրախտվող աշխատության հիմքում ընկած են հայկական միջնադարյան մանրանկարչության սկզբնաղբյուրները, որոնց տվյալները կազմում են հեղինակի եզակիան ու ուղեցույցը։ Եվ դա բնական է. չէ՞ որ ձեռագրերի գանձարանը մեզ հասցրել է անհամեմատ ավելի մեծ քանակությամբ զարդեր, քան զարդարվեստի որևէ այլ բնագավառ։ Հայկական մանրանկարչությունը իր մեջ մարմնավորել է զարդարվեստի բոլոր բնագավառների լավագույն նմուշները։

Սակայն հեղինակն իր ապացուցումները, եզրակացությունները, ընդհանրացումները, դիտողություններն ու ենթադրությունները հիմնավորել է ո՛չ միայն հայկական մանրանկարչության կամ զարդարվեստի վրա ընդհանրապես, այլ հարկավոր դեպքում դիմել է ժողովրդական բանահյուսության, դիցաբանության, կենսափորձային գիտելիքների, ծեսերի, հին պատկերացումների, հավատալիքների և շատ ուրիշ բնագավառների ընձեռած համապատասխան փաստերին։ Եվ այս ամենից նա եկել է այն եզրակացության, որ ուրիշ ժողովուրդների զարդարվեստների ձևերը ևս ունեն այնպիսի ծագում ու բովանդակություն, ինչպիսին հայկական զարդարվեստի հիմնական մոտիվներն են։ Այդ կապակցությամբ աշխատության մեջ, բացի հայկական զարդարվեստի գործերից, բազմաթիվ փաստեր են բերված բաբելական, ասորեստանյան, եգիպտական, խեթական, միտանիական, ուրարտական, ֆենիկյան, հնդկական, հունական, հռոմեական, սկյութական, ռուսական, սլավոնական, միջին ասիական, կովկասյան և այլ ժողովուրդների զարդարվեստներից։

Հեղինակն առաջին անգամ առաջ քաշելով և աշխատելով բացատրություն տալ հայկական և ընդհանրապես ժողովուրդների զարդարվեստներում գոյություն ունեցող հիմնական մոտիվներին, դրանով իսկ զգալի է տալիս մեր հնագույն նախնիների, նախնական երկրագործների ու անասնապահների կյանքի մասին, նրանց՝ ինչպես տարերային մտածողության, այնպես էլ բուսա-կենդանական աշխարհների աճման, պտղաբերման, զարգացման երևույթների և օրինաչափությունների հանելուքության մասին։ Զարդարվեստի բազմահազար մոտիվները տարբեր ձևերով արտացոլում են շրջապատող իրականությունը։ Նրանց ժողովրդական ըմբռնումների և պատկերացումների արդյունք են։ Սակայն այստեղից էլ՝ զարդարվեստագիտության առաջ ծառացած տեսական ամենագլխավոր հարցերի առկայությունը, որոնք իրենց լուծումն էին պահանջում։

Տվյալ աշխատության մեջ հեղինակը փորձում է բացահայտել, թե ինչպիսի ծագում ու գաղափարական բովանդակություն ունեն հայկական զարդարվեստի հիմնական մոտիվները։ Նա փորձել է առաջին անգամ բարձրացնել և բազմաթիվ փաստերով հիմնավորել, բուսական հատիկի, որպես աստվածային կյանքի նախասկիզբ միավորի ընդհանրացումն հանդես գալու հարցը զարդարվեստում։ Առատ փաստերի հիման վրա աշխատել է ապացուցել, որ ինչպես հայկական, այնպես էլ ուրիշ շատ ժողովուրդների զարդարվեստներում հատիկի գաղափարանշանը արտահայտում է բնության չորս հատուկ գործոնների իմաստը։ Այսպիսով լուծված համարելով զարդարվեստում այնքան վիթխարի տեղ գրավող ծաղիկների և վարսանգաղջային ու հատիկա-սերմային մոտիվների ծագման ու գաղափարական բովանդակության հարցը, հեղինակը քննադատության է ենթարկում այդ մոտիվների մեկնաբանման ասպարեզում գոյություն ունեցող կարծիքները։ Այս հարցի լուծումով հեղինակը գտնում է, որ հնարավորություն է ստեղծվում զարդարվեստում լուծելու նաև մի շարք այլ հարցեր։ Դրանցից ամենակարևորը նա համարում է չորս էլեմենտների (հող, ջուր, օդ, արև) հետ կապված մոտիվների ուսումնասիրության ու բացահայտման խնդիրը, որը սերտորեն առնչվում է աշխատության հիմնական նպատակին։ Նա, ելնելով աշխատության նպատակից ու բնույթից, հանգամանորեն կանգ է առնում մեջ բերված համապատասխան վկայություններին հետ կապվող հին ըմբռնումների վրա, և միաժամանակ ցույց է տալիս հետագայում նրանց ստացած նոր իմաստն ու նշանակությունը։

Ինչպես հայկական, այնպես էլ ուրիշ ժողովուրդների զարդարվեստներում, ոչ նոր ու բազմերանգ ձևերով, հանդես է գալիս կենաց ծառը, որպես զարդերի կենտրոնական մոտիվներից մեկը։ Տվյալ աշխատության մեջ հեղինակն ապացուցում է, որ մեզ հասած համապատասխան մոտիվները՝ անկախ նրանց հետագայում զարգացման ու փոփոխման հետևանքով ընդունած ձևերից, սկզբնապես արտահայտել են տոհմա-ընտանեական և կենցաղային հարաբերությունները և ըմբռնումներ։ Այլ կերպ ասած, այդ մոտիվները ծնվելով ժողովրդական առողջ պատկերացումներից, արտացոլում են ոնալ կյանքը, օբյեկտիվ իրականությունը։

Այսպիսով, զարդարվեստագիտության տեսության մեջ բոլորովին նոր բացատրություն է ստանում կենաց ծառի հարցը։ Տվյալ աշխատության մեջ հեղինակը փորձում է ապացուցել, որ կենաց ծառը, զարդարվեստի այդ ամենաբարդ մոտիվը, և կամ զարդարվեստի ոչ միայն առանձին մոտիվները, այլև նրա գլուխգործոցները, իրենց բուն բովանդակությամբ կապված են պայքարի և վիշապամարտի քիմմերների հետ, և որ գլխավորն է, նրանք առաջացել են պատմական անհրաժեշտությամբ, նյութական կոնկրետ հիմքի վրա։

Հեղինակը համապատասխան փաստերի հիման վրա աշխատում է ապացուցել, որ զարդարվեստի հարատևող հիմնական մոտիվները բոլոր ժողովուրդների մատ էլ իրենց հիմքում միշտ ունեցել են պատմական իրականությունը, որի հետ նրանք կապված են եղել սկզբում տնտեսական անհրաժեշտությամբ, իսկ հետո արդեն գաղափարախոսություն, հաճախ կորցնելով կրկնց կապերի գիտակցությունը՝ այդ ոնալ հիմքերի հետ։

Աշխատության մեջ քննարկվում են նաև պայքարի ու վիշապամարտի դիցաբանության մոտիվները, որոնք բավական մեծ տեղ են գրավում հայկական զարդարվեստում։ Այդ մոտիվների միջոցով հնագույն անցյալում, ինչպես և հետագայում մարդիկ դրսևորել են քնության և հասարակական ճնշող ուժերի դեմ իրենց մղած մաքառումների գաղափարը։ Ժամանակի ընթացքում մարդկային դարավոր պայքար-աշխատանքի հետևանքով ինչպես բարի, այնպես էլ չար (թշնամի) ուժերի համար ընդհանրացնող մոտիվներ են ստեղծվում։ Բարի ուժերի իմաստը, սովորաբար, ամփոփվել է հերոսի և հերոսուհու, իսկ չար ուժերինը՝ օձ-վիշապների, դևերի և այլ հրեշների կերպարների մեջ։ Պայքարի և վիշապամարտի դիցաբանության մոտիվները զարդարվեստում արտահայտել են իրենց կերտողների ազատասիրական-հայրենասիրական պայքարի իմաստը։ Աշխատության մեջ բերված հարուստ փաստերի հիման վրա հեղինակն հանգում է այն եզրակացության, որ չար ուժերը, վիշապ-օձերը, դևերը, որպես խորհրդանշողներ, իրենց մեջ են ընդգրկել նաև հայ ժողովրդի թշնամիների գաղափարը։

Ներկա աշխատության մեջ քննված հարցերը մեծ նշանակություն ունեն ժողովրդական բանահյուսության, դիցաբանության, կենսափորձային դիտելիքների, բնափիլիսոփայության, ճարտարապետության, նախնադարյան հասարակության, քարտոնի, ռազմա-սպորտի վարժությունների, կրոնական պատկերացումների, լրիտոնեական սիմվոլների և նման ուրիշ բնագավառների մի շարք կարևոր հարցերի լուսաբանման համար։ Այդ հանգամանքը հեղինակը ցույց է տալիս մեջ բերված բազմաթիվ փաստերով։ Աշխատության մեջ հեղինակը մեծ տեղ է հատկացնում նաև այսպես կոչված երկրաչափական մոտիվների, զարդերի սիմետրիկ կոմպոզիցիաների, մոտիվների տարբեր ոճավորումների և փոխադրությունների հարցերին։

Աշխատության կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ նրա հեղինակը, զարդարվեստի հիմնական մոտիվների ծագման ու նրանց բովանդակության բացահայտման ժամանակ, ելնում է հիմնական այն դրույթից, որ մարդկային հոգևոր արտադրության, այդ թվում և զարդարվեստի մոտիվների հիմքում ընկած է իրական կյանքը, մարդկային նյութական հարաբերությունները։ Ուստի զարդարվեստի ծագումն ու զարգացումը, նրա բովանդակությունը պայմանավորված են եղել հասարակության նյութական կյանքի պայմաններով։ Փաստելով այն քնը, ըստ որի իրոն թե հայկական մանրանկարչությունը ծագել ու զարգացել է «փոխառությունների հողի վրա», նա ցույց է տալիս, որ հայկական զարդարվեստը եղել է ինքնուրույն, ինքնատիպ, հայ ժողովրդի ստեղծագործական հանճարի արդյունքը։

Ա. Մնացականյանի տվյալ աշխատությունը հանդիսանում է հայկական զարդարվեստի մանրազնին ուսումնասիրության մի համարձակ օրինակ, որը նվիրված է մեր Հայրենիքի հոյակապ կուլտուրայի ուսումնասիրությանը։ Այս ստվարածավալ աշխատությունը, անշուշտ, կարժանանա մասնագետների ուշադրությանը, որոնք մանրազնին քննությամբ կտան նրա արժանի գնահատականը։

Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» աշխատությունը, որի մեջ տրված է աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի զարդարվեստի հիմնական մոտիվների ծագման ու զարգացման բավականությունի բազմակողմանի վերլուծությունը, արժեքավոր ավանդ է արվեստագիտության բնագավառում։

Աշխատությունը հրատարակել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը, շքեղ, հազարից ավելի զարդանկարներով և ներդիր գունավոր պատճենահանումներով։

Հ. ՉՈՂԱԿԱՏՅԱՆ

ՍԱԼԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
(1877—1955)



Սույն թվի մայիսի 17-ին, կարճատև բայց ծանր հիվանդությունից հետո, յոթանասունութամյա հասակում վախճանվեց մանկավարժական բազմամյա վաստակ ունեցող պատմաբան, հնագետ - դրամագետ Սալան Միքայելի Շահնազարյանը։

Ա. Շահնազարյանը ծնվել է 1877 թվին Վեռնային Ղարաբաղի Քյուրաթաղ գյուղում։ Նախնական կրթությունը նույն գյուղում ստանալուց հետո, նա սովորում է Շուշու թեմական դպրոցում և ապա Էջմիածնի Գևորգյան Ճեմարանում։ 1897 թվին ավարտելով Ճեմարանը, Շահնազարյանը նվիրվում է մանկավարժության, երեք տարի դասավանդում է Շուշու թեմական դպրոցում, որից հետո հրավիրվում է Էջմիածնի Գևորգյան Ճեմարան և չորս տարի՝ 1900—1904 թ. թ. դասավանդում այստեղ։

Ձգտելով ավելի բարձրացնել իր գիտելիքները, Ա. Շահնազարյանը մեկնում է Պետերբուրգ և ընդունվում Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետը։ Նա փայլուն կերպով ավարտում է համալսարանի դասընթացը, իսկ նրա դիսերտացիոն աշխատությունն արժանանում է ոսկե մեդալի։

1910 թվին Ա. Շահնազարյանը մեկ տարով մեկնում է Բեռլին, ունկնդրում համալսարանի դասախոսությունները և միաժամանակ ծանոթանում Բեռլինի միջնակարգ դպրոցների ծրագրերի և դասավանդման մեթոդիկայի հետ։

Այնուհետև Ա. Շահնազարյանը դասավանդում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1911—1914 թ. թ.), Շուշու թեմական դպրոցում (1915—1918 թ. թ.), ապա նշանակվում դիրեկտոր Ղուկասյան օրիորդաց դպրոցի (1918—1919 թ. թ.)։

Ա. Շահնազարյանը երկար տարիներ աշխատում է նաև Իրանում, հայկական զանազան դպրոցներում՝ մերթ որպես տնօրեն և մերթ ուսուցիչ։

1933 թվին վերադառնալով Հայրենիք, Ա. Շահնազարյանը անցնում է աշխատանքի Երևանի Պետական թանգարանում նախ որպես հնագիտական և ապա դրամագիտական բաժինների վարիչ, որտեղ և աշխատում է մինչև իր մահը։

Երևանի Պետական թանգարանում աշխատած համարյա բոլոր տարիների ընթացքում, Ա. Շահնազարյանը միաժամանակ դասավանդում է Երևանի Պետական համալսարանում, Պոլիտեխնիկական ինստիտուտում, ինչպես նաև Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում։

1947 թվին Ա. Շահնազարյանը պաշտպանում է դիսերտացիա և ստանում պատմական գիտությունների թեկնածուի աստիճան։ Նրա գրչին են պատկանում մի շարք գիտական աշխատություններ, որոնց ցանկը տալիս ենք հաջորդ էջում։

Ա. Շահնազարյանը, չնայած իր առաջացած տարիքին, մեծ խանդավառությամբ մասնակցում էր նաև Դվինի պեղումներին։

Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի բացման առաջին տարիներին ստանձնելով հայագիտական առարկաների դասավանդությունը, Ա. Շահնազարյանը արդյունավետ ջանք է թափել և զգալի դեր ունեցել Ճեմարանի առաջին երեք տարիների շրջանավարտ սաների հայագիտական դաստիարակության գործում։

Հարգա՞նք նրա հիշատակին։

ԱՍԼԱՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՁԱՔԱՐՅԱՆ (ԵՐԵՎԱՆԵՔԱՁՈՒ) ՏՈՀՄԻ ԵԱԿՈՒՄԸ, ԳԱՂԹԸ ԴՆԳԻ ԶՈՐԱԳՏ ԵՎ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ» *(ԺԱ—ԺԲ դար (տե՛ս «Շողակաթ Ս. էջմիածնի», Հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913 թ., էջ 66—83)։*

«ԴՎԻՆ», *պատմա-աշխարհագրական ակնարկ, հրատ. Արմֆանի, Երևան, 1940 թ., 140 էջ (ռուսերեն)։*

«ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ «ՑԻԳՐԱՆ Բ ԵՎ ՀՌՈՄԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ», *հրատ. Արմֆանի (տե՛ս «Տեղեկագիր» ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի, Երևան, 1940 թ., № 1, էջ 220—227)։*

«ՍԵՎ ՋՐԻ (ՄԵԾԱՄՈՐԻ) ՍՏՈՐԵՆ ՀՈՍԱՆՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԿԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ» *(տե՛ս «Տեղեկագիր» ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի, Երևան, 1941 թ., № 2, էջ 7—13)։*

«ԴԱՎԻԹ-ԲԵԿ», *Հայաստանի քաղաքական վիճակը XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին (տե՛ս «Սովետական զոկանություն և արվեստ», Երևան, 1942 թ., № 7, էջ 70—75, № 8, էջ 53—57, № 9—10, էջ 68—73)։*

«ԲԱԴՐԱՏՈՒՆՅԱՑ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՀՄԻ ԿԱԴՈՒՄԸ» *(տե՛ս «Հայաստանի պետական պատմական թանգարանի աշխատություններ», հատոր I, Երևան, 1948 թ., էջ 187—213)։*

«ԽԽԻԱՆԻ ԵՐՋԱՆԻ ԱՌՈՒՆԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ ՄՈՏ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԳԱՆՁԸ» *(տե՛ս «Հայաստանի պետական պատմական թանգարանի աշխատություններ», հատոր II, Երևան, 1949 թ., էջ 7—35)։*

«ԱՐՏԱՇԵՍ», *պատմա-աշխարհագրական տեսություն (տե՛ս «Հայաստանի պետական պատմական թանգարանի աշխատություններ», հատոր IV, Երևան, 1952 թ., էջ 151—224)։*

«ԱՐՄԱՎԻՐ», *պատմա-աշխարհագրական ակնարկ (մամուլի տակ է և շուտով լույս կտեսնի)։*